

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍԻՏՈՒՏ**

ՊՈՂՈՍՅԱՆ ԷՌՈՒԱՐԴ ՎԱԼԻԿԻ

**ԱԾԿԱԽ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(1990-2001 թթ.)**

**Ե.00.001 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների դրկտորի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության սեղմագիր**

Ատենախոսության թեման հաստատվել է և. Աքովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Պաշտոնական ընդիմախոսներ՝

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Աքրահամյան Ռ. Բ.

պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Սինասյան Է. Գ.

պատմական գիտությունների դոկտոր,
Ավագյան Ա. Գ.

Առաջատար կազմակերպություն՝

Երևանի պետական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը տեղի է ունենալու 2014 թ. հունիսի 17-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի 3այց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան, պող., 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2014 թ. մայիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար
պատմական գիտությունների
թեկնածու, դոցենտ

Մուրադյան Ռ. Ղ.

ԱՏԵԼԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Հայաստանի առաջին հանրապետության անկումից յոթ տասնամյակ անց հայ ժողովուրդը կրկին իրավունք նվաճեց կերտելու իր անկախ պետականությունը: Հանգանանքների բերումով Հայաստանի անկախության հաստատման գործընթացի դեկին հայտնված քաղաքական ուժերը ստիպված էին ընթացքում և սովորել, և միաժամանակ էլ հանրապետության համար դժվարագույն ներքին և արտաքին պայմաններում կիրառել շատ դեպքերում միայն դառը փորձով ձեռք բերված հնությունները:

Ենթոյ առարկա հիմնահարցի ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրել նաև, որ հանրապետության, հատկապես քաղաքական անկախության հաստատման գործընթացում, ինչպես ողջ հայ հասարակությունը, այնպես էլ նրան փաստացիորեն դեկավարող ուժերը ընդիմանուր առօնամբ, այնուամենամեծիվ. կարողացան դիմագրավել հիմնական նարտահրավերներին: Հայաստանի անկախացունք հատկապես քաղաքական անկախության հռչակմանն անմիջականորեն նախորդած ժամանակահատվածում ընթացավ որպես էկուուցիոն գործընթաց, երբ ԽՄՀՄ աստիճանական փլուզման հետ համընթաց մեծամուլ էր հանրապետության ինքնիշխանությունը:

Անկախության բովանդակությունը կազմող պետական ինքնիշխանության չափերի վերաբերյալ Հայաստանի քաղաքական ուժերի մոտ առկա էին տարբեր դիրքորոշումներ, սակայն հայ հասարակության մեջ գերիշխող տեսակետն այն էր, որ հայ ժողովուրդը միանգայաց արժանիութեան պետք է հաստատեր լիակատար անկախություն: “Պատմագիտական առօնով բնականաբար լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի անկախության մասին հռչակագրի ընդունումից մինչև համաժողովրդական հանրարկելի միջոցով փաստացի քաղաքական անկախության նվաճումը պետական ինքնիշխանության հաստատման ուղին որդեգրած Հայաստանի նկատմամբ միութենական կենտրոնի որդեգրած կոչու ու անբարյացակամ վերաբերնունքի պայմաններում հայկական կողմի ընտրած գործելակերպի առանձնահատկությունները:

Հայաստանում անկախության հաստատման ուղղությանը ձեռնարկված միջոցառումների համակարգի լուսաբանման առումով չափազանց կարևոր է երկիր ինքնիշխանության ամրապնդման ուղղությամբ իրականացված արմատական տնտեսական ձեռնարկումների, սեփականաշնորհնամբ շուկայական տնտեսակարգին անցնան գործընթացի ուսումնասիրությունը, սոցիալ-տնտեսական հարաբերությունների խորքային վերակառուցման ուղղությամբ ձեռնարկված քայլերի անկախ պետականության շուտափույթը հաստատման նպատակադրմամբ պայմանավորված քաղաքականացվածության լուսաբանումը:

Անկասկած վերլուծության և ընդհանրացման կարիք է գգում Հայաստանում քաղաքական անկախության և տնտեսության ազատականացման միջև եղած փոխադարձ կապը: Հայաստանի քաղաքական անկախացմանը հանրապետությունում կյանքի կոչված շուկայական տնտեսակարգը եկավ իր հետագա զարգացմամբ էլ ավելի ամրապնելու նորանկախ պետականության ինքնիշխանությունը: Անկախության հաստատման գործընթացը նորանկախ Հայաստանի Հանրապետության ներքին կյանքում ենթադրում էր անցնան շրջանում կառուցել ինքնիշխան ժողովրդավարական պետություն, ձևավորել հանմանարդկային ու ազգային արժեքների վրա հիմնված քաղաքացիական հասարակություն և սոցիալական կողմնորոշմամբ շուկայական տնտեսակարգ, իսկ արտաքին ոլորտում ամենազիստը խնդիրներն էին ազգային շահերի պաշտպանությունը և հենվելով իրականացված արմատական հասարակական և տնտեսական համակարգային վերափոխումների վրա համաշխարհային հանրությանն ինտեգրումը: Քետազոտության մեջ անդրադառնալով քննարկվող ժամանակահատվածում Հայաստանում անկախ, ինքնիշխան պետականության հաստատման ընթացքը գործնականորեն մարմնավորու

անցման շրջանի գործընթացներին՝ առաջին անգամ փորձել ենք, հենվելով կոնկրետ փաստերի վեհ, հնարավորինս մանրամասնորեն ու հանակարգված ձևով ներկայացնել և վերլուծել նախապես հանրապետության ոչ ֆորմալ, իսկ անկախության հռչակումից հետո էլ արդեն Հայաստանի քաղաքական ղեկար պաշտոնավես ստանձնած ուժերի թույլ տված այն բացթողումներն ու սխալները, որոնց հետևանքով հանրապետության ազգարնակազությունը ստիպված էր հաղթահարել ոչնչով չարդարացված հավելյալ դժվարություններ:

Նետազոտությունում առաջին անգամ փորձել ենք անկախացման սկզբնական շրջանում հանրապետության տնտեսական ընդհանուր անկման ֆոնի վրա կոնկրետության մեջ ներկայացնել Հայաստանի արդյունաբերական հզրությունների փլուզման ընթացքը՝ հատկապես կանգ առնելով երկրի լյանքում վճռորոշ նշանակության տնտեսական միավորների գործունեության դադարեցման քաղաքական դրդապատճառների վրա: Ներկայացնելով Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացին խշընդոտող հանգամանքները՝ հնարավորինս մանրամասնորեն վերլուծել ենք հանրապետությունը համատարած խավարի ու անհիւսության մատնած էներգետիկ ճգնաժամի հասարակական բնույթի պատճառները:

Ասենախոսության մեջ ըստ երթյան առաջին անգամ հանգամանորեն և ամբողջական տեսքով ներկայացրել ենք Հայաստանի ինչպես տնտեսական, այնպես էլ վերջինիս ուղղակիորեն կապված հասարակական-քաղաքական առաջննացը արգելակող Արքթեազմի կողմից պարբերաբար իրականացվող շրջափակումները, Հայաստան մտնող երկարույուն, էներգատարների նկատմամբ իրականացված ահարեւկությունները:

Աշխատանքում անդրադարձել ենք պետության կողմից ծերնարկված բացառապես հանրապետության շահերից բխող հնքնուրույն տնտեսական գործառույթների ընթացքին՝ դրանք քննարկելով, որպես ազգային լիակատար ինքնիշխանության հաստատման նախապայմաններ:

Անցման շրջանի կարևորագույն հիմնախնդիրներից էր երկրի հասարակական-քաղաքական կյանքի ազատականացումը: Աշխատանքում փորձել ենք ներկայացնել Հայաստանում իրականացված հասարակական-քաղաքական արմատական վերափոխումները որպես անկախ պետականության հաստատման ուղղությամբ իրականացված կարևորագույն քայլեր: Հնարավորինս ներկայացրել ենք այդ գործընթացում օբյեկտիվ, իսկ առավել հաճախ էլ սուբյեկտիվ հիմնապատճառներով պայմանավորված սխալներն ու բացթողումները:

Հնարապետության անկախության հռչակումը, հասարակական հարաբերությունների ազատականացումը, անցումը շուկայական տնտեսության նախադրյամբեր ստեղծեցին ժամանակի հրամայական անհրաժեշտություն դարձած նորանկախ Հայաստանի քաղաքական համակարգի ձևավորման համար: Աշխատանքում ծգտել ենք հանրապետությունում ծավալված պետական և վարչական բնույթի առավել էական ձեռնարկումները ներկայացնել Հայաստանում անկախ պետականության հաստատման հարրության վրա: Պետականաշխնության ոլորտում երկրի կառավարման ղեկար ստանձնած քաղաքական ուժերի կողմից թույլ տրված առավել էական որոշ սխալների վերհսկումը և ստեղծ է գուել մեր աշխատանքում:

Խնդրո առարկա ժամանակահատվածում հայկական անկախ պետականության հաստատմանը միտված կարևորագույն խնդիրներից էր համաշխարհային հանրության կողմից ազգային պետության ճանաչումը, որը իրավամբ նորաստեղծ պետականության լիակատար անկախության թերևա ամենաէական չափորոշիչներից է: Սույն աշխատանքում ըստ երթյան և առաջին անգամ փորձել ենք հնարավորինս ամբողջականորեն ներկայացնել Հայաստանի Հանրապետության որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուբյեկտի, համաշխարհային հնրության կողմից ճանաչման և դրանով և - Հայաստանի անկախ պետականության հաստատման գործընթացը: Աշխատանքում

փորձել ենք առաջին անգամ նեկայացնել քննարկվող ժամանակահատվածում նորանկախ պետական ինքնիշխանության հաստատման նպատակված ազգային կենսական շահերով պայմանավորված հարաբերությունների հաստատման ու ծավալման ընթացքը հատկապես ՀՀ հարևան Երկրների և աշխարհի ազդեցիկ տերությունների հետ: Թերևս առաջին անգամ փորձել ենք հնարավորինս հաճակարգված ձևով ներկայացնել և հանգանանալի կերպով վերլուծել միջազգային կառույցներին ՀՀ անդամակցության և նրանց հետ համագործակցության ծավալման իմանահարցերը: Աշխատանքի և մեկ առնձնահատկություններից է այն, որ նրանում փորձ է կատարվել լուսաբանելու և ընդհանրացնելու անկախացնան ամփացապես նախորդած և հատկապես Հայաստանի անկախությունը հրչակելուց հետո անկախ պետականության հաստատման բնագավառում հայ ժողովովի արմատական շահերի հետևողական պաշտպանության ոլորտում ծավալված գործընթացները: Այդ առումով առանձնակի տեղ է հատկացված Հայաստանի հանրապետության կողմից Լեռնային Պարաբաղի ազատագրական պայքարին սատարելու գործընթացի վերլուծությամբ: Փաստորեն պետական մակարդակով արցախահայության արդարացի պահանջի պաշտպանության ստանձնումը հենց Հայաստանի նորանկախ Հանրապետության ինքնիշխանության կարևորագույն դրսորումներից էր, անկախ պետականության հաստատման ընթացքի անգնահատելի ձեռքբերումը:

Ըստ էության առաջին անգամ փորձ է կատարվել լուսաբանել նորանկախ Հայաստանում ազգային ինքնիշխանությամբ պայմանավորված կենսական շահերի և իմանարար արժեքների գերակայության ապահովման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, որոնք էլ միաժամանակ լուրջ ներդրում էին անկախ պետականության հաստատման գործում: Նվազելով իր անկախությունը՝ հայ ժողովուրդը պատմական հնարավորություն ստացավ պետականութեն արծարթելու իր ինքնության հետ ուղղակիորեն առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները, այդ հարթությունում ևս պաշտպանելով հայ ազգի կենսական շահերը:

Ուսումնասիրության նպատակն ու խնդիրները. Փաստորեն, հենվելով գիտականութեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի վրա՝ կարող ենք արձանագրել, որ սույն հետազոտության գլխավոր նպատակն է նորահայտ արխիվային փաստերի, հրատարակված սկզբնաբրյուրների, պարբերական մասույթի և թեմային առնչվող՝ հրապարակի վրա առկա գիտական գրականության համակողմանի հետազոտման հենքի վրա ներկայացնել Հայաստանում ազգային կենսական շահերով պայմանավորված ինքնիշխանության ծավալման ուղղվ անկախ պետականության հաստատման հնարավորինս ամբողջական գործընթացը:

Ուսումնասիրության հիմնական առարկայի հետազոտման նպատակով մեր կողմից համակարգային վերլուծության են ենթարկվել մի ամբողջ խումբ այնպիսի փոխսկապակցված, միմյանց փոխսպայմանավորող էական հիմնահարցեր, ինչպիսիք են Հայաստանի քաղաքական անկախացնան հասարակական և տնտեսական նախադրյալները, հանրապետությունում հասարակության կողմից ազգային, սոցիալական, կենսական շահերի հաշվառման վրա խարսխված ինքնիշխանության հաստատման ամենանախնական, տակավին աղոտ, բայց միաժամանակ կայուն դրսորումները, այդ հարթության վրա Հայաստանում քաղաքական դաշտի ձևավորումը: Աշխատանքում ձգտել ենք բացահայտել և վերլուծել Հայաստանում պետական ինքնիշխանության հաստատման ուղղությամբ ձեռնարկված հասարակական-տնտեսական բնույթի միջոցառումների վճռորոշ դերակատարությունն անկախ պետականության հաստատման գործընթացում, վեր հանել այդ ուղղությամբ իրականացված կոնկրետ քայլերում տեղ գտած օբյեկտիվ և սուրբեկտիվ բնույթի սիմվոլներն ու բացթողումները:

Աշխատությանն առնչվող խնդիրների հետազոտման առումով կարևորվել է նաև անկախ պետականության հաստատմանը էապես խոչընդոտող այլ հիմնահարցերի, մասնավորապես Հայաստանի պարբերական շրջափակումների, հարևան տարածքնե-

ոից հանրապետություն մտնող էներգատարների նկատմամբ կրկնվող ահաբեկչություն-
ների ընթացքի հնարավորինս հանգամանալի լուսաբանումը:

Աստենախոսության մեջ նպատակ ենք հետապնդել ներկայացնելու քաղաքական
համակարգի ծևազորման, ինքնիշխան պետականության հաստատման համար իրակա-
նացված պետական գործնթացների բնույթն ու առանձնահատկությունները,
համաշխարհային հանրության կողմից ազգային պետության ճանաչումն ու այդ հենքի
վրա այլ երկրների հետ հարաբերությունների հաստատումը, միջազգային հեղինակա-
վոր կառույցներին անդամակցումն ու նրանց հետ համագործակցության ընթացքը, նո-
րանկախ պետության կողմից հայ ժողովորի արմատական շահերին սատարելը, Հա-
յաստանի հսարակական կյանքում պատմական զարգացման ողջ ընթացքով պայմա-
նավորված ազգային հիմնարար արժեքների վերահստատման ինքնարության կերպով
ծավալված գործնթացի լուսաբանումն ու վերլուծությունը: Քննարկված հիմնահարցե-
րի կապակցությամբ հետազոտության մեջ արտահայտվել են որոշ նկատառումներ, ար-
վել կոնկրետ առաջարկություններ:

Աստենախոսության ժամանակագրական շրջանակները. Ուսումնասիրությունն
ընդգրկում է հիմնահարցի առումով ուղղենիշային իրադարձություններով որոշակիաց-
ված ժամանակահատված: Նետազոտությունն սկսվում է հիմնականում 1990 թ. հայոց
անկախ պետականության վերահստատման հարթության վրա հանրապետությունում
ծավալված հսարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական առավել հատկանշա-
կան գործնթացների լուսաբանմամբ և վերլուծությամբ: Խնդրո առարկա հիմնահարցի
ուսումնասիրության համար 1990 թ. որպես մեկնարկային է ընտրվել մասնավորապես
հաշվի առնելով, որ հենց այդ շրջանում հանրապետությունում առավել քան որոշակիա-
ցել էին հատկապես հսարակական-քաղաքական առաջնայնությունները: Դենց 1990
թ. Հայաստանում անցկացված Գերազույն խորհրդի այլընտրանքային ընտրություննե-
րով, իսկ ապա նաև հայ ժողովորի կյանքում անձնագրային նշանակության փաստարդ-
թի Հայաստանի անկախության մասին հօշակագրի ընդունումով հանրապետությունում,
առանց բացառության կյանքի բոլոր ոլորտներում, աներևակայելի արագությամբ
սկսվեց պետական հնքնիշխանության ծավալման, անկախ պետականության հաս-
տատման գործնթացը:

Իսկ ինչ վերաբերում է ատենախոսության ժամանակագրական վերջնագին, ապա
2001 թ., որպես հետազոտության վերջնակետ և ընտրվել է ոչ պատահականորեն, բա-
ցառապես հիմնախնդրային նոտեցման սկզբունքով: Անկախության և պետական ինք-
նիշխանության ամրապնդման ուղղով ընթացող Հայաստանի Հանրապետության պատ-
մության մեջ մեծագույն ձեռքբերում էր 2001 թ. հունվարին Հայաստանի պաշտոնական
լիիրավ անդամակցումը աշխարհի թերևս խոշորագույն, անենահեղինակավոր և ազդե-
ցիկ կառույցներից մեկին Եվրոպայի խորհրդին, որով էլ մոտակա հեռամկարի առումով
ըստ էության ամփոփվեց միջազգային նշանակալի կառույցներին նորանկախ ՀՀ ան-
դամակցման ընթացքը: Եվրոխորհրդին Հայաստանի անդամակցության փաստը կյա-
նում ազատականության հաստատման առումով նկատելի ձեռքբերումների վկայութ-
յուն էր:

Աշխատանքում հիմնական շեշտադրումը կատարվել է անկախության հօշակագրի
ընդունումից մինչև ՀՀ սահմանադրության ընդունման անմիջականորեն հաջորդած
ժամանակահատվածի (1990-1995 թթ.) լուսաբանման վրա, քանզի հենց այդ շրջանում
Հայաստանում անկախ պետականության կայացման հատկապես իրավաքաղաքական
ոլորտում արձանագրվեցին մի քանի կարևոր հանգրվաններ: Շարունակելով ուսումնա-
սիրությունը նաև հետագա ժամանակահատվածում՝ նպատակ ենք հետապնդել վերլու-
ծել և ներկայացնել անկախ պետականության հաստատման բազմաբնույթ և պատմա-
կան առումով տևական գործնթացի շրջանակներում ձեռնարկված քայլերը հասարա-

կական կյանքի առավել էական բնագավառներում՝ հնարավորինս ամբողջականացնելով հիմնահարցի ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության մեթոդամությունը. Հետազոտության մեթոդաբանական հիմքում արխիվային փաստաթղթերի սկզբնադրյության նշանակության գրականության, մամուլի հրապարակումների, ինչպես նաև խնդրո առարկա հիմնահարցի լուսաբանման հետ առնչվող գիտական գրականության համեմատական ուսումնասիրությունն է: Հետազոտությունում շարադրանքի հաջորդականությունը պայմանավորված է գլխավորապես թեմատիկ սկզբունքով: Ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել շատ դեպքերում նորովի լուսաբանել բազմաթիվ հիմնախնդիրներ և փորձել որոշակի առաջարկներ անել դրանց արդյունավետ լուծման ուղղությամբ:

Սուենախոսության գիտական նորույթը ու գործնական նշանակությունը. Ընդհանուր աստեղնախոսության մեջ լուսաբանված պատմագիտական նորույթ հանդիսացող հիմնախնդիրների հնարավորինս համառոտ ներկայացում՝ կարող ենք կրկին որոշակիրեն արձանագրել, որ հետազոտության հիմնական անվիճելի գիտական նորույթը Դայաստանում, անկախ պետականության հաստատման գործընթացի հնարավորինս ամբողջական, համակողմանի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է, որ կատարվում է առաջին անգամ: Նրանում հայ ժողովոյի պատմության թերևս իր բախսորոշ նշանակությամբ բացառիկ դարակազմիկ գործընթացը՝ հայոց պատմական հողի վրա անկախ պետականության վերահաստատման ընթացքը ներկայացված է որպես հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական ոլորտներում, այդ թվում՝ ազգային, հոգևոր, համաշխարհային հանրության մեջ ինտեգրվելու և երկիր ներքին ու արտաքին կյանքի այլ կարևոր բնագավառներում ծավալված գործընթացների ամբողջական համակարգ: Դանրապետությունում պետական ինքնիշխանության ծավալման ընթացքում կյանքի կոչված այդ գործընթացներն աշխատանքում լուսաբանվել են բացառապես Դայաստանում անկախ պետականության հաստատման հետ փոխկապակցվածության, այդ գործում նրանց ունեցած դերատակարության առունուկ:

Սուենախոսությունն ունի ոչ միայն գիտական, այլև գործնական և կիրառական որոշակի նշանակություն: Նրանում առաջադրված դրույթները և վերլուծությունների արդյունքում կատարված եղանակնումներն ու առաջարկությունները, ըստ էության, Դայաստանի անկախ պետականության կայացման գործնական նշանակություն և անկանած կարող են օգտագործվել երկրի ներքին ու արտաքին կյանքի ուսումնասիրության խնդրո առարկա հիմնահարցի հետ առնչվող ոլորտներում պետական ծեռնարկումներ հրականացնելիս: Աշխատությունն ունի նաև պատմա-ճանաչողական կարևոր նշանակություն, քանզի հետազոտության արդյունքները անկանած պահանջված են Դայաստանի նորագոյն շրջանի պատմության, մասնավորապես անկախ պետականության կայացման, նորանկախ Դայաստանի հասարակական-քաղաքական, տնտեսական ոլորտների հարցերը ուսումնասիրողների կողմից, ինչպես նաև կարող են օգտագործվել դպրոցական և բուհական դասագրքեր, ուսումնական ծեռնարկներ շարադրելիս:

Ուսումնասիրության փորձաքննությունը. Կտենախոսության թեման հաստատվել է Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական հանալսարանի Դայոց պատմության ամբիոնում: Այն քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Խ. Արովյանի անվան ԴՊՄՀ Դայոց պատմության ամբիոնի նիստում:

Աստեղնախոսության թեմայով հրապարակվել է մենագրություն, հոդվածներ, գեկուցումներ են կարդացվել գիտական նստաշրջաններում:

Դեսազոտության արյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը. Աշխատությունում խնդրո առարկա հիմնահարցը լուսաբանվել և վերլուծվել է արխիվային նյութերի, տպագիր սկզբնադրյուրային գրականության, մամուլի

հրապարակումների, հետազոտությունում արձարծված հիմնահարցերին վերաբերող գիտական գրականության հիման վրա:

Թեմայի գիտական լուսաբանման համար առաջնահերթ բացառիկ կարևորություն ունեն արխիվային նյութերը, որոնք նոր լուս են սփոռում հիմնահարցի բազմաթիվ կողմերի վրա: Աշխատության մեջ բացառապես առաջին անգամ շրջանառության մեջ են դրվել Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի տարրեր խնդիրներին վերաբերող Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ) բազմաթիվ նյութեր: Հետազոտության մեջ լայնորեն օգտագործվել են խորո առարկա հիմնահարցի տարաբնույթ խնդիրների հետ առնչվող փաստագրական բնույթի ժողովածուներ:

Հարկ է նշել, որ Հայաստանում անկախ պետականության հաստատման հիմնահարցին վերաբերող գուտ պատմագիտական բնույթի տպագիր սկզբնադրյուրները, ինչպես և այլ բնույթի գրականությունը չափազանց քիչ է: Ընդ որում դեպքերի մեծամասնությունում էլ անկախ պետականության հաստատմանը միտված հասարակական-քաղաքական գործընթացները վերլուծված են ընդամենը սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրների ներակայացմանը հարակից: Ինչպես փաստագրական հարուստ նյութ, այնպես էլ գիտական լուրջ վերլուծություններ են պարունակում հատկապես Հայաստանում ամենաբազմազան միջազգային կառույցների ծավալած գործունեությունն ու դրանց արդյունքները լուսաբանող ժողովածուները¹: Փաստական տեղեկատվության, ինչպես նաև հետազոտության թեմային ուղղակիորեն վերաբերող մի շարք հիմնահարցեր են քննարկվել ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի նախաձեռնությամբ և անմիջական նյութական ու մեթոդական օժանդակությամբ հանրապետության անկախ փորձագետների կողմից մշակված և 1995 թվականից սկսած պարբերաբար հրապարակված «Մարդկային զարգացման ազգային գեկույցի» ամենամյա համարները²: Դրանք ըստ էության հանդիսանում էին տարվա կտրվածքով կենտրոնացված քաղաքական ու տնտեսական համակարգի դեպի ազատական հասարակական հարաբերությունների և շուկայական տնտեսության ընթացող Հայաստանի Հանրապետության նկարագիրը:

Անկախ պետականության հաստատման գործընթացի, հատկապես հասարակական-քաղաքական հարթության լուսաբանման առումով որոշակի գիտական արժեք են ներկայացնում ատենախոսության մեջ լայնորեն օգտագործված պետական և հասարակական տարրեր մակարդակների գիտական, գիտահետազոտական բնույթի հաստատությունների, կազմակերպությունների կողմից հրատարակված գործնականում նաև

¹ Միայնալ Նահանջների օգնությունը Հայաստանին 1992-2000. Եվրումիկ և համագործակցության տասնամյակ, Եր., 2001, Ազգային գնահատման գեկույց, Հայաստանի Հանրապետություն (Կայուն զարգացման համաշխարհային զարգանաժողով: Յոհաննեպուրոց, 2002), Եր., 2002: Հայաստանի Հանրապետության դասակարգը (Ք. Խնքերնշշնել ԱՍՍ միջազգային զարգացման գործակալությամբ՝ Հայաստանի դասակարգված և տնտեսական օրենսդրության բարեփոխումների ծրագրի, Եր., 2002: ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ). Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Եր., 2003: ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Երևանյան գրասենյակ. Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Եր., 2007: Հայաստան-ՆԱՏՕ առաջնարարականում 10 տարիներ 1999-2008 թթ., Եր., 2008:

² Մարդկային զարգացման գեկույց. Հայաստան 1995, Եր., 1995: Մարդկային զարգացման գեկույց. Հայստան 1996, Եր., 1996: Մարդկային զարգացման գեկույց. Հայաստան 1997, Եր., 1997: Մարդկային զարգացման գեկույց. Հայաստան 1998, Պետության դեր, Եր., 1998: Մարդկային զարգացման գեկույց. Հայաստան 1999, Մարդկային զարգացման հիմն տարին Հայաստանում, Եր., 1999: Մարդկային զարգացման ազգային գեկույց. Հայաստան 2000, Մարդու իրավունքները և նարդակային զարգացումը. Գործողություն հանուն առաջնարարականում, Եր., 2000: Մարդկային զարգացման ազգային գեկույց. Հայաստան 2001, Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Եր., 2001:

աղբյուրագիտական նշանակություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրություններն ու քաղաքական բնույթի հրապարակունները¹: Դիշատակված, հատկապես համրապետության ներքին կյանքին վերաբերող հրապարակունների թերևս ամենահատկանշական գիծը ինքնիշխանության հետագա ծավալման ուղղով ընթացող Հայաստանում հասարակական-քաղաքական կյանքը սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետ ունեցած սերտ առնչությունների, ինչ-որ տեղ նույնիսկ անմիջական ֆունկցիոնալ կապի մեջ դիտարկելու է:

Սուենախոսության մեջ լայնորեն օգտագործված, վերը ներկայացրած տիպի հրապարակունների գերակշռող նման է վերաբերում է Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքին: Դրանք իմանականում վիճակագրական ժողովածուներ են, հանրապետության սոցիալ-տնտեսական կացությունը պարբերաբար լուսաբանող տեղեկատվական-վերլուծական գեկույցներ, վիճակագրական բնույթի այլ հրապարակուններ²:

¹ Հայաստանը արհավիրքի առջև: Ինչն է պատճառը. հնչած հաղթահարել: Սահմանադրություն՝ միայն սահմանադիր ժողովի ճանապարհով, Եր., 1992: Հայաստանի Հանրապետությունները / «Ղեղակատիա» միություն, Եր., 1996: Հայաստանը կյայւն մարդկային զարգացման հայեցակարգի տեսանկյունից: Հասարակական կազմակերպությունների գնահատականը / «Համոն մարդկային հասարակության կյայւն զարգացման» ասոցիացիա «ՈՒՊ+5», Եր., 1997: Հայաստանի զանգվածային լրատվական միջոցները: Գնահատականներ և ինքնաճանահատականներ / «Թիմ» հասարակական կազմակերպություն, Եր., 1997: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը: Ազգային գեկույց / ՀՅ Վիճակագրական պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Եր., 1999: Դիվանագիտական ծառայությունը Հայաստանում / ՀՅ արտաքին գործերի նախարարություն, Եր., 1999: Հայաստանը և կենտրոնը / Ռազմավարական և ազգային հետազոտությունների կենտրոն, Եր., 1999: Հայաստանի ազգությունները / Կոնֆլիկտների լուծման Հայաստանի կենտրոն / Հայաստանի Ազգությունների միություն, Եր., 2000: Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովուն: Երկրորդ գումարում, Եր., 2001: Հայաստանի զարգացման ուրվագիծը, Սեմինարի նյութեր / նոյեմբեր 2000 թ. - մարտ 2002 թ. / «Գերազույն խորհրդի պատգամավորական ակունք», Եր., 2002: Հայաստանի Հանրապետության քաղաքականությունը / ՀՅ մշակույթի բարաքականությունը / ՀՅ մշակույթի, երիտասարդության հարցերի և սպորտի նախարարություն, Եր., 2003: Հայաստանի Հանրապետության սոցիալական պատկերը և աղքատությունը: Վիճակագրական գեկույց / ՀՅ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2003: Հայաստանի Հանրապետության քաղաքական կուսակցությունները: Տեղեկագիր / Քաղաքացիական և սոցիալական զարգացման հիմնադրամ խմբ. Ս. Մշիբարյան, Ս. Անուշյան և ուրիշներ, Եր., 2005: Հայաստան-Թուրքիա. բաց խոսակցություն / Հայարակական երկխոսություն և զարգացումներ կենտրոն, Եր., 2005: Հայաստանը փոխակերպվող աշխարհում / Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն, Եր., 2006:

² Հայաստանը թվերով 1990 թվականին: Վիճակագրական համառոտ ժողովածու / ՀՅ վիճակագրության պետական կոմիտե, Եր., 1990: Հայաստանը թվերով 1992: Վիճակագրական համառոտ ժողովածու / ՀՅ վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության պետական վարչություն, Եր., 1994թ., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1996 թ. հունվար-ապրիլին / ՀՅ վիճակագրության, պետական ռեգիստրի վերլուծության վարչություն, Եր., 1996: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1997 թ. հունվար-սեպտեմբերին / ՀՅ վիճակագրության, պետական ռեգիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1997թ.: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1997 թվականին / Վիճակագրական ժողովածու / ՀՅ վիճակագրության, պետական ռեգիստրի վերլուծության վարչություն, Եր., 1999: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 1998 թվականին / Վիճակագրական տեղեկագիր / ՀՅ վիճակագրության, պետական ռեգիստրի վերլուծության վարչություն.- Ե.: 1999: Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիքը: / Վիճակագրական տեղեկագիր // ՀՅ վիճակագրության, պետական ռեգիստրի վերլուծության վարչություն, Եր., 1999: ՀՅ տնտեսության զարգացման հայեցակարգային մուտքեցումները / ՀՅ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, Եր., 1999: Հայաստանի Հանրապետության

Ատենախոսության խնդրո առարկա հիմնահարցի կարևորագույն բնագավառներից մեկի՝ անկախությունը հրչակած Դայաստանի տնտեսության ոլորտում պետական հնգամիշխանության հաստատման հիմնախնդրի ուսումնասիրնան առումով բացարձիկ նշանակություն ունեն հատկապես կառավարության վիճակագրական ծառայության կողմից պարբերաբար լույս ընծայված հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը արտացոլող Դայաստանի վիճակագրական տարեգրեթերը, որոնցից յուրաքանչյուրում որոշակի ժամանակահատվածի կորպաժքով ներկայացված են հանրապետության հիմնական ժողովրագրական ցուցանիշները, ազգաբնակչության զբաղվածությունը, աշխատանքային պայմանները, հանրապետությունում կրթության, առողջապահության վիճակը, կացությունը ապրանքների և ծառայությունների սպառողական շուկայում, գների մակարդակն ու դիմանմիկան, որոշակի ժամանակահատվածում Դայաստանի արդյունաբերության և գյուղատնտեսության դրույթը, Դայաստանի ներքին և արտաքին առևտուրը և այլն: Առավել ամբողջական այդ պաշտոնական վիճակագրական ժողովածուներում ներկայացված են նաև անցման շրջանում հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքում արձանագրված դժվարություններն ու բացասական երևույթները (գործազրկություն, աղքատություն, պետական բյուջեի պակասորդ, արտաքին պարտի ահագնացող աճ և այլն), ցույց են տրված դրանց առաջացման հիմնական

արտաքին առևտուրը 1999 թվականին / Վիճակագրական ժողովածու / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2000: Դայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-նոյեմբերին (Տեղեկատվական վերլուծական ամսական գեկույց) / ՀՀ Վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Եր., 2000: Դայաստանի Հանրապետության տնտեսության հիմնական բնութագրիչները / ըստ 1991-1999 թթ. սոցիալ-տնտեսական միտումների / Դայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Եր., 2000: Հայաստանի Վիճակագրական ժողովածու / Հայաստանի Հանրապետության վիճակագրության, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Եր., 2000: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2000 թվականին: Վիճակագրական ժողովածու / ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թվականի հունվար-նոյեմբերին: Տեղեկատվական-վերլուծական ամսական գեկույց / Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստան 2001 վիճակագրական գրքով / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2001 թ. հունվար-հոկտեմբերին: Տեղեկատվական վերլուծական ամսական գեկույց / Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2000 թվականի հունվար-նոյեմբերին, Տեղեկատվական վերլուծական ամսական գեկույց / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստան 2001 վիճակագրական գրքով / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստանի Հանրապետության մազերը թվերով 1999-2000, վիճակագրական ժողովածու, Եր., 2002: Հայաստանի Հանրապետության սպառողական շուկան 1995-2001: Վիճակագրական ժողովածու / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2002: Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը 2001 թվականին: Վիճակագրական-վերլուծական գեկուցագիր / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը 1997-2001 / Վիճակագրական ժողովածու // ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2002: ՀՀ կենտրոնական բանկ Հայաստանի բանկային համակարգը: Հովվածներ / Խմբ. Լ. Ղափյան, Բ. Ասատրյան, Եր., 2002: Հայաստան թվերով 2003 / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2003: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2001 թվականին: Վիճակագրական ժողովածու / Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայությունը 2000-2004 թթ.: Քաղաքականություն, նպատակ, իրագործում, արդյունք, անելիքներ, Եր., 2005:

պատճառները¹:

Խորհրդային Սիուլքան վիլուգումից հետո անկախ պետականության հաստատման ուղղով ընթացող Հայաստանի պատճությունը՝ իր մեջ լուրջ առավելություններ պարունակող, համեմատական եղանակով լրացրանելով նպատակով օգտագործվել են միջազգային կառուցմերի և հատկապես Անկախ պետությունների համագործակցության հասարական-տնտեսական կյանքին վերաբերող սկզբնաղյուրային նշանակության ժողովածուները²: Նետազոտությունը իրականացնելիս, կիրառվել են ՀԽՍՀ Գերագույն խորհրդի, ՀՀ Գերագույն խորհրդի, ՀՀ Ազգային ժողովի ու ՀՀ պաշտոնական տեղեկագրերը: Համակողմանի հետազոտության, հատկապես պետական բնույթի ձեռնարկումները մեկնարաննելիս ըստ ամենայնի օգտագործվել են Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածուները:

Հայաստանում անկախ պետականության հաստատման, նորանկախ երկրի ազգային անվտանգության ամրապնդման, թերևա ամենակարևոր ոլորտներից մեկի սոցիալական ուղղվածությամբ պետության կյացման հիմնահարցերին անդրադառնալիս լայնորեն օգտագործվել է նաև սոցիալական բնույթի հրավական ակտերի ժողովածու³: Բնականաբար, աշխատանքում օգտագործվել է հետազոտության առանձին խնդիրներին վերաբերող Հայաստանի անկախության հռչակմանը, ազգային կենսական շահերի պաշտպանությանը, ՀՀ միջազգային ճանաչման ու արտերկրի հետ հարաբերությունների ձևավորմանը և հանրապետության անկախության հաստատմանը անմիջականորեն վերաբերող այլ հիմնահարցերը լրացրանող դիվանագիտական բնույթի փաստաթերթի ժողովածուները⁴, պատմագիտական բնույթի տպագիր սկզբնաղյուրային գրականությունը: Բավականին ծավալուն պլանի հետազոտությունը իրականացնելիս հնարավորինս մանրամասնորեն օգտագործվել է նաև խնդրո առարկա ժամանակաշրջանի պաշտոնական նամուլը:

Ըստ էության ինչպես Հայաստանում անկախության հաստատման գործընթացին, այնպես էլ նորանկախ Հայաստանի պատճության հնարավորինս ամբողջական լրացրանմանը նվիրված առաջին պատմագիտական բնույթի հետազոտությունը հանրապետության ճանաչված պատմաբաններ, Գ. Գեղամյանի և Ռ. Ազիզբեկյանի հեղինակած

¹ Հայաստանի վիճակագրական տարեգիրը 1995, 1996 / ՀՀ վիճակագրություն, պետական ռեգիստրի և վերլուծության նախարարություն, Եր., 1998: Հայաստանի վիճակագրական տարեգիրը 2001 (1997, 1998), / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրը 2001 (1999-2000) / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2001: Հայաստանի վիճակագրական տարեգիրը 2002, / ՀՀ Ազգային վիճակագրական ծառայություն, Եր., 2002:

² Содружество независимых государств: Десять лет спустя. 1991-2001. / Исполнительный комитет СНГ, Минск, 2001; Содружество независимых государств в 2002 году, Статистический ежегодник / Межгосударственный статистический комитет СНГ. - М., 2003.

³ Հայաստանի Հանրապետության սոցիալական ոլորտի հրավական ակտերի ժողովածու: 2004թ. հունվարի 1-ի դրությամբ, կատարված լրացրաններով և փոփոխություններով / ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Կազմո՞ն՝ Գ. Գորյան, Ա. Մանուկյան, Եր., 2004:

⁴ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1991-1995 թթ., Եր., 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1996-1998 թթ., Եր., 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001թ., Եր., 2002: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու. Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրեր, Եր., 2004: Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի ժողովածու. Միավորված ազգերի կազմակերպության շրջանակներում կնքված պայմանագրեր, Եր., 2004:

«Հայաստանը 1945-1990-ական թթ.» աշխատությունն է¹:

նիշտ է, տակավին 1994 թ. լույս տեսած հետազոտությունը նախատեսված էր որպես ուսումնաօժանդակ ծեռնարկ հանրակրթական դպրոցի հայոց պատմության առարկայի ուսումնասիրնան նպատակով, սակայն, ինչպես երեքն է պատահում, լինելով հայ ժողովրդի պատմության հետապետքազմյան շրջանը նորովի ներկայացնող և հատկապես արցախյան շարժման ու անկախության ուղղվ Հայաստանի ընթացքի առաջին տարիների միակ ամբողջական ուսումնասիրությունը, գիտական առումով այն անհամենատ ավելի խորն ու տարրողունակ ծեռնարկ է, քան պարզապես դպրոցական համենատարար հանրամատչելի դասագիրքը: Աշխատանքում ընդհանրացնելով արցախյան ընդգործումով ոտքի ելած հայ ժողովրդի ազատագրական պայքարի Հայաստանի քաղաքական անկախացմանը նախորդած շրջանը՝ հեղինակությունը եկել են այն եղրահանգմանը, որ այդ շրջանից էլ հայ ժողովրդի համար խնդրու առարկա ժամանակահատվածում առաջին պահում մնվեց գործնականում ազգային անկախ պետականություն ստղելու գաղափարը²: Զեռնարկում, ըստ եռթյան, առաջին անգամ փորձ է կատարել առավել ընդհանուր ծևով ուրվագծել անկախության նվաճման և կայացման ուղղությամբ Հայաստանում ծեռնարկված քայլերը և այլն:

Ի դեպ, ներկայացվող ուսումնասիրության մեջ քննարկվող որոշ հիմնահարցեր լուսաբանված են նաև Ռ. Ազիզբեկյանի հեղինակությամբ հրատարակված «Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն» ուսումնասիրության մեջ³: Որպես պատմագիտական ուսումնասիրություն, անշուշտ ուշադրության արժանի է պրոֆեսոր Յ. Աբրահամյանի «Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ.» աշխատությունը, որում հեղինակը, մասնավորապես, ներկայացնելով Խորհրդային Միության փլուզման նախադրյալներն ու բուն ընթացքը, անդրադարձ է կատարել այդ ժամանակահատվածում Հայաստանում առկա իրավիճակին, հետխորհրդային շրջանում հայուսական հարաբերությունների առանձնահատկություններին և Արցախի հիմնահարց գարգառումներին⁴: Նշված ուսումնասիրություններում Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացը չի քննարկվել, որպես երկուում ծավալված ազգային արմատական շահերով պայմանավորված հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բնույթի ձեռնարկումների փոխկապակցված, փոխպայմանավորված ընդհանրություն:

Մինչ օրս Հայաստանի երրորդ հանրապետության պատմությանը վերաբերող ըստ եռթյան միակ համեմատաբար ամբողջական, հնարավորինս խոր պատմագիտական հետազոտությունը է. Մինասյանի «Սոցիալ-տնտեսական վերակիխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.)» չափազանց արժեքավոր հետազոտությունն է⁵, որում հեղինակը ընդհանրացրել է անկախության հրչակումից հետո հանրապետությունում շուկայական տնտեսակարգի ձևավորման ուղղությամբ իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումները: Օգտագործելով խնդրու առարկա հիմնահարցին վերաբերող մեծաքանակ արխիվային նյութեր, վերլուծելով հրապարակի վրա առկա գիտական գրականությունը, հենվելով ստվարածավալ տպագիր սկզբնադրյունների, մանուլում հրատարակված նյութերի վրա՝ հեղինակը կարողացել է ոչ միայն լուսաբանել

¹ Ազիզբեկյան Ռ. Լ., Գեղամյան Գ.Մ., Հայաստանը 1945-1990-ական թվականներին, Եր., 1994:

² Նույն տեղում, էջ 123:

³ Ազիզբեկյան Ռ. Լ. Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, համառոտ ակնարկ, Եր., 1992:

⁴ Աբրահամյան Յ., Խորհրդային և հետխորհրդային հասարակությունը 1945-2011 թթ., Եր., 2011թ.

⁵ Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Եր., 2003:

քննարկվող ժամանակահատվածում հանրապետության տնտեսական, սոցիալական բնույթի կարևոր հիմնահարցերը, այլև ընդհանրացնել է Հայաստանի անկախության հրչակմանը անմիջականորեն նախորդած ժամանակահատվածի և հատկապես անկախ պետականության ձևավորման ընթացքում հանրապետությունում ծավալված սոցիալ-տնտեսական բնույթի գործառույթների հետ սերտորեն առնչվող հասարակական-քաղաքական բնույթի գործններացները: Ըստհանուր առմամբ անկողմնակալ ուսումնասիրության մեջ ներկայացվել են անցման շրջանում ՀՀ-ում սոցիալ-տնտեսական վերափոխումների արդյունքում ունեցած ինչպես ծեռքբերումները, այնպես էլ բացքողումները: Մասնավորապես, ուսումնասիրության մեջ հեղինակը միանգամայն իրավացիորեն նկատում է, որ հանրապետությունում իշխանության հասած քաղաքական ուժեղը թերագնահատեցին հատկապես անցման շրջանում պետության կարգավորիչ, ուղղորդող դերակատարությունը¹:

Առանց վարանելու կարելի է արձանագրել, որ քննարկվող աշխատանքը ոչ միայն որպես նորանկախ Հայաստանի պատմությանը նվիրված գիտական առաջին ծավալուն հետազոտություն, այլև ուսումնասիրության մեջ առաջադրված հիմնախնդիրներով, ներկայացված հարցադրումներով, ինչպես նաև հիմնահարցերի լուսաբանման առանձնահատուկ մեթոդոլոգիայով ուղի է հարթել Հայաստանի երրորդ հանրապետության պատմության հետագա ուսումնասիրության համար: Սակայն է. Մինասյանի արժեքավոր ուսումնասիրության շրջանակները ընդգրկում են գլխավորապես շուկայական տնտեսությանը անցման շրջանում Հայաստանում իրականացված սոցիալ-տնտեսական վերափոխումները, որոնց ենթատեսաստում են միայն քննարկվել Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքին վերաբերող որոշ հիմնահարցեր: Հայաստանում անկախ պետականության հաստատման բուն գործններացի լուսաբանումը չի հանդիսացել է. Մինասյանի հետազոտության նպատակը: Հայաստանի երրորդ հանրապետության պատմության չուսումնասիրված այդ հիմնահարցը փորձել ենք լուսաբանել սույն ատենախոսությամբ:

Հրապարակի վրա առկա են Հայաստանի արտաքին քաղաքականության առանձին հարցերի լուսաբանմանը նվիրված, առումով որոշակի հետաքրքրություն ներկայացնող ուսումնասիրությունները²:

Ավելի մեծաբանակ են խնդրո առարկա ժամանակահատվածի հիմնախնդիրների վերլուծությանը նվիրված տնտեսագիտական բնույթի աշխատությունները, որը բացատրվում է հիմնականում այն հանգամանքով, որ բառացիորեն հասարակության յուրաքանչյուր անդամի ամենակենսական շահերը գործնականում անմիջականորեն շոշափող տնտեսակարգի արմատական հեղաքրեկմանը նպատականոված քայլերն ունեն հասարակական-քաղաքական բացառիկ հնչեղություն ինչպես բուն գործններացի, այնպես էլ ձեռնարկված քայլերի հետևանքների առումով, քանզի վերջին հաշվով դրանք էին պայմանավորում հասարակության սոցիալական կառուցվածքը, երկրի քա-

¹ Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Եր., 2003, էջ 94, 232:

² Կյազմյան Ա., Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը Հայկական հարցի համատեքստում, Եր., 2007: Անանյան Ա., Հայ-բուրքական երկխոսության նոր փորձ (թուրքայական հաշտեցման հաճնածողության գործունեության նախն), Եր., 2003: Անանյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնախնդիրները հայ-բուրքական հարաբերություններում (1991-2004 թթ.), Եր., 2006: Բեզզանյան Լ., Բայրուղյան Ա., Պարզայան Ա., Եվլուսական նիություն և Հայաստան: ԵՄ պատմությունը, կառուցվածքը: ԵՄ-Հայաստան հարաբերությունները, Եր., 2010: Պողոսյան Բ., Թուրք-ամերիկյան հարաբերությունները և ԱՄ կողմից հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը 1991-2007 թթ., Եր., 2010: Քեոյան Գ., Սիմոնյան Յ., Հայաստան-Եվրոպական միություն հարաբերությունների ընթացքը և զարգացման հեռանկարները, Եր., 2005:

դաքական համակարգը, պետականության ձևը, հանրության ողջ արժեհամակարգը, ընդհույս միջևն օրամակախ երկրի հասարակության հոգևոր չափորոշիչները և այլն:

Տնտեսագիտական ուսումնասիրությունների առունով և Հայաստանում անկախ պետականության հաստատման հիմնահարցը ամբողջությամբ գործնականում ուսումնասիրված չէ: Սակայն, այնուամենայնիվ, հասարակության տնտեսական կյանքին վերաբերող այդ հետազոտություններում պարունակվում է մեծ քանակությամբ փաստական նյութ, ուստականներ, ընդհանրացումներ ու եղահանգումներ, քննարկված են անկախության հաստատման շրջանի բազմաթիվ հիմնահարցեր: Ատենախոսության մեջ քննարկվող հարցերի լուսաբանման տեսանկյունից մեր կարծիքով լուրջ հետաքրքրություն են ներկայացնում Ա. Մարկոսյանի հեղինակած ուսումնասիրությունները, որոնցում ներկայացվել-վերլուծվել են անցնան շրջանում Հայաստանում բաժնետիրացման եղանակով իրականացված սեփականաշնորհման առանձնահաստկություններն ու ընթացքը. լուսաբանված է պետական սեփականության մասնավորեցման գաղափարախոսությունը, ներկայացված է տնտեսական վերափոխումների կարգավորման պետական համակարգը, վերլուծված են ՀՀ տնտեսական անվտանգության ռազմավարության հիմնահարցերը, քննարկված է Հայաստանի տնտեսական շահերի ապահովմանն ուղղված պետության ծավալած գործունեությունը¹ և այլն: Հայաստանի տնտեսական բնույթի զարգացումների մեջ հետաքրքրող հարցության առունով առավել կարևորվում են նաև այդ աշխատություններում նոցակցության պաշտպանության, հակամենաշնորհային պետական քաղաքականության հետ առնչվող հիմնահարցերի գիտական մեկնաբանությունները և այլն: Քննարկվող հետազոտություններում հիմնավորված է այն տեսակետը, որ տնտեսական անվտանգության ապահովումը Հայաստանի անկախության, պետական ինքնիշխանության հաստատման և ապահովման կարևորագույն երաշխիքներից² և այլն:

Հայաստանի երրորդ հանրապետության սոցիալ-քաղաքական բնույթի հիմնահարցերին է իր հետազոտություններում անդրադարձել Ա. Թաղևոսյանը³: Սույն հետազոտության առունով առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում հրապարակումներում հեղինակի արտահայտած այն տեսակետը, որ հանրապետությունում խորացող աղքատությունը, դադարելով գուտ սոցիալական բնույթի երևույթ լինելուց, ոչ միայն խոչընդոտել է անկախ պետականության հաստատման գործընթացին, այլև նույնիսկ վտանգել է իր ինքնիշխանությունը կերտող հասարակության վերարտադրությունը ընդհանրապես⁴:

Ատենախոսության հիմնախնդրի լուսաբանման առունով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև այլ առանձին հեղինակների ու հեղինակային խմբերի տա-

¹ Մարկոսյան Ա. Խ., Պետական և պետական մասնակցությամբ ձեռնարկությունների մասնավորեցումը, Եր., 1995: Մարկոսյան Ա. Խ. Սեփականաշնորհման սերտիֆիկատների մասին / Խորհրդարներ արժեթղթերի ներկա և ապագա տերերին /, Եր., 1995: Մարկոսյան Ա. Խ., Սեփականաշնորհման և ապապետականացման գործընթացը. Տեսության և պրակտիկայի հարցեր, Եր., 1995: Մարկոսյան Ա. Խ. 222 հարցի պատասխան սեփականաշնորհման մասին, Եր., 1996: Մարկոսյան Ա. Խ., Պետությունը և շուկան, Եր., 2000: Մարկոսյան Ա., Հայաստանը 21-րդ դարի մարդարակերների առօղ, Եր., 2004: Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդրները, Եր., 2005: Մարկոսյան Ա. Խ. Տնտեսագիտություն բոլորի համար, Եր., 2006:

² Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդրները, Եր., 2005, էջ 7:

³ Թաղևոսյան Ա., Արժեքային գործընթացները և նիտումները 1991-1998 թվականներին, Եր., 2000: Թաղևոսյան Ա., Աղքատության հիմնախնդրները պետականության զարգացման ու անրապնդման դիտանկյունից, Եր., 2003:

⁴ Թաղևոսյան Ա., Աղքատության հիմնախնդրները պետականության զարգացման ու անրապնդման դիտանկյունից, Եր., 2003, էջ 5:

կավին անցման փուլում գտնվող Հայաստանի երրորդ հանրապետության սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող ուսումնակարությունները¹:

Հանրապետությունում լույս են տեսել նաև ատենախոսության մեջ քննարկվող ժամանակաշրջանում նորանկախ Հայաստանի կյայացման գործընթացի որոշ հարցերի նվիրված, իրապարակախոսական բնույթի իրապարակումներ և քաղաքագիտական ուղղվածությանը աշխատանքներ, որոնցում ևս բնականաբար, խնդրո առարկա հիմնահարցը պատճառագիտական համապարփակ ուսումնակարության չի ենթարկվել²:

Քաղաքագիտության ոլորտին վերաբերող արժեքավոր գիտական հետազոտություն է Գ. Քենյանի «Քաղաքական կուսակցությունների տիպաբանություն» ուսումնասիրությունը, որում հեղինակը, կուսակցությունների դասակարգման հիմնահարցերի տեսական վերլուծության ֆոնի վրա անդրադառնալով նորանկախ Հայաստանում բազմակուսական համակարգի կյայացմանը, լուսաբանել է երկրում համեմատաբար երիտասարդ կուսակցությունների ձևավորման ընթացքը, վերլուծել նրանց որդեգրած քաղաքական արժեքներն ու ծրագրերը, ներկայացրել կուսակցությունների դեռակատարությունը անկախության կյայացման գործընթացում: Աշխատանքում հեղինակը, մասնավիրապես, հաճգել է այն կարևոր հետևողաբար որ քաղաքական կյանքում բազմակուսական գոյավիճակի առկայությունը Հայաստանում, հնարավորություն ընձեռեց ԽՍՀՄ փլուզումից հետո խուսափել ինչպես անիշխանության քառոսից, այնպես էլ բռնատիրության ճիրաններից³:

ճիշտ է Հայաստանի երրորդ հանրապետության կյայացման առանձին հարցեր

¹ Մամիկոնյան Յ. Ս., ՀՀ գյուղատնտեսական արտադրության հիմնախնդիրները, Եր., 1997: Խոջաբեկյան Վ. Ե., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998: Տնտեսական վերափոխությունները անցումային շրջանում. Տնտեսություն և արդյունքներ, խմբագրական կոլեգիա Աղանձնեցան Ա., Սկրտչյան Մ., Գևորգյան Ս., Եր., 1999: Սանասերյան Թ., Նոր տնտեսական քաղաքականության ուրվագծերը: Ազգային տնտեսության զարգացման հիմնական առաջնահերթությունները, Եր., 2000: Գարդիկյան Ռ., Հայաստանի Հանրապետության արդի գյուղատնտեսական ուսումնաահիրությունն, Եր., 2001: Գարդիկյան Ս., Աղբատության հաղթահարման ուղիները գյուղում և քաղաքում, Եր., 2001: Մելքոնյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002: Մարկոսյան Ա., Հախվերյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը նիշազգային տնտեսական հարաբերությունների հանակարգում, Եր., 2002: Կիրակոսյան Գ., Անցումային Լ. Հայաստանի տնտեսության վերափոխությունները: Տեսլության հարցեր, Եր., 2002: Անանյան Լ. Զ., Հայաստանի տնտեսական պատմության ուրվագծեր, Եր., 2003: Արտաքաղը Հայաստանից (խմբ. Տ. Խառաջայան, Ազգագրական հետազոտությունների կենտրոն, Եր., 2003: Դավիթյան Ս., Մարկոսյան Ա., Սարգսյան Յ., Վերափոխությունները անցնային երկրների տնտեսություններում, Եր., 2003: Մարկոսյան Ա., Մաթևոսյան Է., Պետությունն և ծննդարկատիրությունը, Եր., 2005: Մարկոսյան Ա., Գեղամյան Ն., Սոցիալական քաղաքականության պետական կարգավորման հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2006:

² Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, Հայ քաղաքական միտքը անկախությունից ի վեր, Եր., 1999: Սարդարյան Կ., Պետական սկիզբ և ազգային շարունակություն, Եր., 1999: Բագրատյան Յ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրամից դուրս գալու երեքի մասին, Եր., 2000: Դանյյան Լ., Երրորդ հանրապետության ողբերգությունը և աստեղային ժամանակաշրջանը, Եր., 2002: Դովսեփյան Ս., ՀՀԾ-ն և հայ ժողովրդի մեջ ողբերգությունը, Եր., 2002: Սանուկյան Վ., Հայկական երազանքը գոյատևման փակուղում: Ելույթների և հոդվածների ժողովածու / Կազմոն Լ. Հակոբյան և ուրիշներ, Եր., 2002: Մանուկյան Վ., Գնացքից թշնիքու ժամանակն է: Հողվածների ժողովածու / Խմբագիր Լ. Խուլոյան, Ա. Ղարությունյան /, Եր., 2002: Բագրատյան Յ., Հայաստանը դարերի սահմանագծին, Եր., 2003: Հայաստան 1998-2007 / Խմբագիր Ա. Վարդանյան, Եր., 2008: Օհանյան Ս., Հայկական քանակի 20-ամա տարեգործությունը (համարոտ ուրվագիծ), Եր., 2012:

³ Քենյան Գ., Զբաղաքական կուսակցությունների տիպաբանությունը, Եր., 2002, էջ 264:

քննարկվել են նաև պատմության գծով պաշտպանված դրոշ ատենախոսություններում¹, սակայն նրանցից և ոչ մեկուն սույն աշխատանքի խնդրո առարկա հիմնահարցը չհանդիսանալով այդ աշխատությունների հետազոտության օբյեկտը, ամբողջական և համակողմանի գիտական ուսումնաափորթյան չի ենթարկվել:

Սյասիստվ, «Անկախ պետականության հաստատման գործընթացը Հայաստանում 1990-2001 թթ.» հետազոտությունը քննարկվող ժամանակահատվածում Հայաստանի երրորդ հանրապետությունում անկախ պետականության հաստատման բազմաթիվ գործընթացի հնարավորինս համակարգված լուսաբանման ու պատմաքննական վերլուծության առաջին համեստ փորձն է:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից, եզրակացությունից, օգտագործված սկզբանադրյուրների, գրականության ցանկից և բովանդակությունից: Աշխատանքի ընդհանուր ծավալը կազմում է 490 էջ:

ՆԵՐԱԾՈՒԹՅԱՍ մեջ ներկայացված է թեմայի արդիականությունը, ցույց են տրված ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը, նշված են հե-

¹ Տողանյան Վ., ԱՊՀ կազմավորումը և հայ-ռուսական հարաբերությունները (1991-1995 թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր., 1996: Այսան Վ., Ղարաբաղյան ու տարածաշրջանային նյուս գինված հակամարտությունների Անդրկովկասում և Ուսւաստանի Դաշնությունը (1991-1994 թթ.). Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Եր., 2001: Բայսան Տ., Ղարաբաղյան հիմնահարցը և միջազգային դիվանագիտությունը 1991-1994 թթ., Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Եր., 2002: Շահնազարյան Ա., Հայ-վրացական հարաբերությունները հետխորհրդային շրջանում (1991-1999 թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր., 2002: Կարապետյան Ա., Հայ-հյունական հարաբերությունները 1991-1998 թթ.-ին. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար, Եր., 2004 թ., Մալխաչյան Տ., Հայ-ֆրանչական հարաբերությունները 1991-2001 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2004: Անաման Ա., Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թորքական հարաբերություններում (1991-2004 թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2005: Մալեքյան Լ., Հայ-հյունական պատմանշակութային կապերն արդի էտապում. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր., 2005: Մանուկյան Ժ., Հայաստանի Հանրապետությունը ԱՊՀ ռազմավարադարձական և սոցիալ-տնտեսական ոլորտներում (1995-2001 թթ.). Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր., 2006: Մարտիրոսյան Տ., Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ու ռազմավարության ձևավորման գործընթացը 1991-2002 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2006: Մելիքյան Ս. Ռ., Հայաստանի Հանրապետություն - Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, Եր., 2006: Մարտիրոսյան Տ., Հայաստանի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության ու ռազմավարության ձևավորման գործընթացը 1991-2002 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2006: Մելիքյան Ս. Ռ., Հայաստանի Հանրապետություն - Ամերիկայի Միացյալ Նահանգներ հարաբերությունները 1991-2000 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2007: Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը հարավային Կովկասում 1991-2001 թթ. Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2008: Արզոյան Վ., Սամցին-Զավախյան Թուրքիայի Հայաստանի Հանրապետություն-Կրաստան հարաբերությունների համատեքսուում (1980-ական թթ. Վերջ - 2003 թ.), Պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2010: Գևորգյան Մ., Ագրարային Վերափոխմանները Հայաստանի Հանրապետությունում 1991-2000 թթ., Ատենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2011: Գեօրգի Գ. Ա., Կարախչական կոնֆլիկտ ս Տուրցիա. Իсторико-սравнительный анализ. Диссертация на соискание степени доктора исторических наук, Ер., 2012.

տագուտության նպատակներն ու խնդիրները, ժամանակագրական շրջանակները, տրված է հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը:

ԳԼՈՒԽ ԱԱՎՃԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԱԿԱԽՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ ՀՈՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՌՈՒԾ ԵՎ ԱԱԿԱԽ ՊԵՏԱԿԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՍԿԻԶԲԸ

Առաջին Ենթագլուխ - Անկախության հռչակագրի ընդունումը և Հայաստանի փաստական անկախացման ընթացքը:

Հայաստանի առաջին Հանրապետության անկումից 70 տարի անց պատմությունը կրկին ազատատենչ հայ ժողովորդին հնարավորություն ընձեռեց կերտել իր ազգային անկախ պետականությունը: Այդ ժամանակահատվածի քաղաքական մարքարումների արդյունքում ծևավորված մնայուն հուշարձաններից է, անշուշտ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի կողմից 1990 թ. օգոստոսին ընդունված Հայաստանի անկախության հռչակագրով¹:

ԽՍՀ Գերագույն խորհրդի օգոստոսի 4-ի որոշմամբ քարձորագույն օրենսդիր մարմնի պատգամավորներից ստեղծվել էր Հայաստանի անկախության հռչակագրի նախապատրաստման 15-հոգանոց հանձնաժողով²: Գև օգոստոսի 6-ի որոշմամբ էլ ձևավորվել էր ընդունվելիք հռչակագրից բխող սահմանադրական փոփոխություններ մշակող հասուկ աշխատանքային հանձնաժողով³: Հանձնաժողովի կողմից ինքնուրույն աշխատանքի արդյունքում ծևավորված, ինչպես նաև տարրեր քաղաքական ուժեղի կողմից ներկայացված տարրերակների թիվը շուտով հասավ մեկ տասնյակի⁴: 1990 թ. օգոստոսի 20-ին հանձնաժողովը Գերագույն խորհրդին ներկայացրեց նոր, միասնական տարրերակը⁵:

Այսպիսով Հայաստանի քաղաքական կարգավիճակի մասին հռչակագրի ընդունման գործընթացը նոտեցավ իր վերջնագիրն: Սկսվեց ըստ եռթյան հռչակագրի մանրազնին քննարկման փուլը: Մինչ այդ առաջին հայացքից ոչ խորհրդարուց քվացող շատ ծևակերպումներ ու ամբողջ դրույթներ օրենսդիր մարմնի քաղաքական ուժեղի հանար դարձան իսկական հայեցակարգային պայքարի առարկա⁶:

Գերագույն խորհրդի օգոստոսի 23-ի պատմական նիստում ազգային արժեքներին հավատարին քաղաքական ուժեղի ճնշման տակ ձայների մեծամասնությամբ ի լրումն հռչակագրի արդեն խորհրդարանի կողմից հավանության արժանացած դրույթների, ավելացվեց նաև թվով 11-րդ կետը, որում արձանագրված էր. «Հայաստանի Հանրապետությունը սատար է կանգնում 1915 թ. Օսմանյան Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում հայերի ցեղասպանության միջազգային ճանաչման գործին»⁷: Կատարվածը փաստորեն հանրապետությունում իշխանությունը դեռ նոր ստանձնած ՀՀԾ ուժեղի դեմ այդ օրերին քարձրագույն իշխանական մարմնում Գերագույն խորհրդում, ընդիմության առաջին լուրջ դրսնորումն էր:

1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդուր իրականացրեց պատմական կարևոր քայլ՝ ազգային պետականության կորստից 70 տարի անց հռչակելով անկախ

¹ Խորհրդային Հայաստան, 25 օգոստոսի 1990 թ.:

² Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 15 (971), 23 օգոստոսի 1990 թ., էջ 11-12:

³ Խորհրդային Հայաստան, 8, 9 օգոստոսի 1990 թ., Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 15 (971), 23 օգոստոսի 1990 թ., էջ 12-17:

⁴ Խորհրդային Հայաստան, 10 օգոստոսի 1990 թ.:

⁵ Նույն տեղում, 22 օգոստոսի 1990 թ.:

⁶ Նույն տեղում, 9 օգոստոսի 1990 թ.:

⁷ Նույն տեղում, 24 օգոստոսի 1990 թ.:

Հայաստանի կայացման սկիզբը¹: Հոչակագիրը սկսվում էր հայ ժողովրդի համար դարսկազմիկ փաստաթղթի բովանդակության պատճական բացառիկ նշանակության արձանագրմանը. «Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդորդ... հօչակում է անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը»²: Հոչակագիր բացարձիկ պատճական նշանակությունը նաև այն է, որ այդ փաստաթուղթը Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացը սահմանեց, որպես հասարակության կյանքի հասարարական-քաղաքական և սոցիալ-տնտեսական բնագավառներում իրականացվելիք արմատական ձեռնարկումների ամբողջությունը:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդորդ օգոստոսի 24-ին ընդունեց ՀՀ պետական դրոշի մասին օրենքը³ և Գերագույն խորհրդի որոշմանը հայտարարվեց պետական գինանշանի և հիմնի ստեղծման մրցոյւր⁴:

Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 1990 թ. սեպտեմբերի 28-ի որոշմանը հայտարարվեց ՀՀ գինանշանի և հիմնի ստեղծման մրցոյւր, որի անցկացման նպատակով, ընդունված որոշման համաձայն, ստեղծվեց բարձրաստիճան պաշտոնյաներից, գիտության, արվեստի, գրականության բնագավառի հեղինակավոր ներկայացուցիչներից կազմված 15 հոգանոց կազմկոմիտ՝ հանրապետության Մինիստրոների խորհրդի նախագահի (Վ. Մանուկյան) գլխավորությամբ⁵: ՀՀ կառավարության 1990 թ. հոկտեմբերի 10-ի որոշմանը ստեղծվեցին Հայաստանի պետական գինանշանի և պետական օրիներգի մրցության հանձնաժողովները⁶, որոնք էլ 1991 թ. հուլիսին և 1992 թ. մարտին ընդունեցին համապատասխանաբար ՀՀ հիմնն ու գինանշանը:

1996 թ. հունվարին Հայաստանի Հանրապետության պետական դրոշը ու գինանշանը Ինտելեկտուալ սեփականության համաշխարհային կազմակերպության՝ ՎԻՊՕ-ի կողմից ճանաչվեցին, որպես ՀՀ սեփականությունը⁷:

Երթագույն երկրորդ - Անկախության հանրաքվեն և Հայաստանի պետական հնքնիշխանության հօչակումը:

Անկախության հօչակագրի ընդունումը ընդամենը Հայաստանի կողմից անկախացման ուղղու որդեգրման փաստաթուղթ էր և ըստ երթյան անկախացման գործընթացի սկզբնավիրման իրավաբանական ձևակերպումը: Խակ Հայաստանի փաստական քաղաքական անկախացումը դեռևս ապագայի գործ էր, որին հասնելու ճանապարհին, ինչպես ցոյց տվեց պրակտիկան, հայ ժողովրդին դեռևս լուրջ փորձություններ էին սպասում: Բնականարար հաղթահարվելիք խոչընդոտներից շատերի ակունքները ձգվում էին անկախության մասին հօչակագրին նախորդած ժամանակաշրջանից: Այսպես, կանխազգալով ԽՍՀՄ մոտալուս փլուզման վտանգը, Միության առաջին և վերջին նախագահ Ս. Գորբաչովը տակավին 1990 թ. ապրիլի 3-ին ստորագրեց «ԽՍՀՄ-ի կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի լուծման կարգի մասին» օրենքը⁸. Այդ փաստաթուղթը, ըստ երթյան ԽՍՀՄ հիմնական օրենքի վրա հենվելով, սահմանադրութեն միութենական հանրապետությունների հնարավոր անկախացումը կանխելու փորձ էր:

¹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №16 (972), 31 օգոստոսի 1990 թ., էջ 4-6:

² Սույն տեղում, էջ 4:

³ Սույն տեղում, էջ 6:

⁴ Սույն տեղում, էջ 7:

⁵ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), §. 113, գ. 163, գ. 418, թ. 1-3:

⁶ Սույն տեղում, գ. 417, թ. 1-5:

⁷ Հայաստանի Հանրապետություն, 17 հունվարի 1996 թ.:

⁸ Известия советов Народных депутатов СССР, 7 апреля 1990 г.

Հայաստանի նկատմամբ կենտրոնի ճնշումները հատկապես ուժեղացան անկախության մասին հռչակագրի ընդունումից հետո: Հայաստանի Հանրապետության, բնույթով արդեն ժողովրդավարականացած իշխանությունները վարում էին ազգային ինքնիշխանության հաստատմանը միտված կանխանականացված, ծրագրավորված քաղաքական կուրս, աստիճանաբար անցում էին կատարում կենտրոնի նկատմամբ, իրավական առումով, հարձակողական գործելազնին¹:

ՀՀ Գերագույն խորհուրդը 1991 թ. մարտի 1-ին որոշում ընդունեց «Հայաստանի Հանրապետության տարածքում ԽՍՀՄ-ի կազմից դուրս գալու վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին»: 1991 թ. մայիսի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը ընդունեց հանրաքվեի կենտրոնական հանձնաժողով կազմելու մասին որոշում²: Մինչև հանրաքվեն կենտրոնական հանձնաժողովը անսական գումարում էր առնվազն երկու նիստ³, որոնցում քննարկվում էին կայանալիք հանրաքվեի հետ կապված ամենատարաբնությանը հարցեր:

1991 թ. սեպտեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, իիմնպեսև սեպտեմբերի 21-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքների վեհական ընդունեց Հայաստանը անկախ պետություն հռչակելու մասին պատմական որոշումը⁴:

1991 թ. սեպտեմբերի 25-ին ՀՀ Գերագույն խորհուրդը ընդունեց «Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք անկախ պետականության հիմնադրույթների մասին»⁵ պատմական փաստաթուղթը, որով Հայաստանը հայտարարվեց անկախ ժողովրդավարական պետություն: Հավատարիմ մնալով սահմանադրական ուղղությամբ անկախացման սկզբունքներին Հայաստանի իշխանությունները որոշեցին կենտրոնի հետ սկսել ԽՍՀՄ-ից դուրս գալու հարցով քանակցությունները⁶:

1991 թ. դեկտեմբերի 8-ին Բելոռուսի մայրաքաղաքական Սինսկի մոտակայքում՝ Բելության բնակավայրում, Բելոռուսի Հանրապետության, Ռուսաստանի Ֆեդերացիայի և Ռուսականայի դեկավարների կողմից ստորագրվեց անկախ պետությունների համագործակցություն (ԱՊԴ) ստեղծելու մասին համաձայնագիրը⁷: Ըստ երթյան հենց այդ համաձայնագիրն էլ դարձավ ԽՍՀՄ-ի միանգամյա փլուզման ակտը: Փաստերը միանգամյան որոշակիորեն հաստատում են, որ ինչպես ԽՍՀՄ մյուս բոլոր հանրապետությունները, այնպես էլ Հայաստանը ոժվար թե կարողանային առանձին-առանձին անկախանալ, համեմայն դեպք արդեն հայտնի պատմական ժամանակահատվածում, եթե խորհրդային Միության փլուզումը չիներ համընդհանուր՝ կրելով միանգամյա քաղաքական ակտի բնույթ:

ԱՊԴ-ի քաղաքական կայացումը տեղի ունեցավ դեկտեմբերի 21-ին, Ղազախստանի այն ժամանակվա մայրաքաղաք Ալմա Աթայում:

¹ Հայաստանի Հանրապետություն 2 փետրվարի 1991 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր № 5 (985), 15 մարտի 1991 թ., էջ 3:

² Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №10 (990), 31 մայիսի 1991 թ., էջ 12-13

³ Սույն տեղում, №17 (997), 15 սեպտեմբերի 1991 թ., էջ 34-35, №18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 28-29:

⁴ Սույն տեղում, №18 (998), 30 սեպտեմբերի 1991 թ., էջ 21:

⁵ Սույն տեղում, էջ 10-12:

⁶ Սույն տեղում, №19 (999), 15 հոկտեմբերի 1991 թ., էջ 4, ՀԱԱ, ֆ. 113, գ. 166, գ. 539, թ. 1:

⁷ Հայաստանի Հանրապետություն, 10, 13 դեկտեմբերի 1991 թ.:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՌԴ

ԱՍԿԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՎԸ ՀԱՍՏԱՏՄԱԾ ՆՊԱՏԱԿԱՌԴՐԱՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ
ԲՆՈՒՅԹԸ ՀԱՅԱՍՏԱՎԸ ՏՏՏԵՎԱԿԱՎԸ ՀԱՅԱԿԱՐԳՈՒՄ

Ենթագույն առաջին - Տնտեսական կացության առանձնահատկությունները Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի սկզբնավորման շրջանում:

Անկախ պետականության հաստատման ուղղվ ընթացող Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր իր առաջին քայլերը կատարել գտնվելով տնտեսական ծայրահեղ ծանր կացության մեջ: Ստեղծված անխիժար իրավիճակն ուներ իր ինչպես օրյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառները: Հայաստանի տնտեսության աննախադեպ անկանա օրյեկտիվ նախադրյանները կապված էին հիմնականում ԽՍՀՄ-ի, նախև առաջ որպես տնտեսական միասնական համակարգի, որի մի մասն էլ կազմում էր Խորհրդային Հայաստանի տնտեսությունը, փլուզման հետ:

Հայաստանի տնտեսական վիճակի վատրարացմանը մեծապես նպաստում էին աղետի գոտու առկայությունը, արցախյան պատերազմն ու հանրապետության շրջափակված վիճակը: Սակայն այդ բոլորի հետ մեկտեղ հանրապետության տնտեսական կացության վատրարացման գործում էական էին նաև հեղափոխական ու նախև և առաջ արցախյան ազատագրական պայքարի ալիքի վրա հասարակության քաղաքական կյանքի առաջավիր բնագծերում հայտնված որոշ քաղաքական ուժերի կողմից թույլ տրված սխալները, որոնց համար նախադրյանները հատկապես առկա էին քաղաքական բնագավառում: Արցախյան պահանջատիրությանը զուգահեռ ԽՍՀՄ-ում ծավալված սրբնաց քաղաքական զարգացումների արդյունքում, պատմականորեն անչափ կարծ ժամանակահատվածում, նաև ազգային ինքնիշխանության հաստատման ուղին որդեգրած, հայ հասարակությանն ուղղորդող քաղաքական ուժերի գործունեության հիմքում ազգային շարժման ձևավորման շրջանում, երբեք էլ, որպես գործնական խնդիր, ընկած չէր եղել ազգային անկախ պետականություն ստեղծելու ռազմավարությունը:

Ղարաբաղյան պահանջատիրության խնդիր լուծումը ընդունադիր քաղաքական ուժերի կողմից քննարկվում էր, բացառապես, խորհրդային հասարակության առկա ժողովրդավարական բարեփոխումների շրջանակներում¹: ՀՀԸ-ն, դեռևս իշխանության գալուց առաջ, իր քաղաքական պայքարում առանձնահատուկ դեր էր հատկացրել հանրապետության արդյունաբերական հզորությունների փակնամ համար ծավալված գործնական շրջանում:

Որպես ասվածի լավագույն ապացույց կարող է ծառայել այդ շրջանում Երևանի «Սահրիտ» գիտարարության միավորման ճակատագիրը: Հայոց Համազգային շարժման որոշ քաղաքական գործիչների անմիջական ջանքերով 1989 թ. դեկտեմբերին, Հայաստանի արդյունաբերական հսկայի գործունեությունը դադարեցվեց²: Այն, որ «Սահրիտ» հաճեա փակումը ժամանակին պայմանավորված էր բացառապես քաղաքական դրդապատճառներով, ավելի որոշակի ուրվագծվեց ձեռնարկությունը այնքան մեծ աղմուկով փակելուց ընդամենը մեկ տարի հետո՝ 1991 թ. սկզբներին³, երբ արդեն իշխանության անցած նախկին ընդունադիրներն արեցին ամեն ինչ ոչ վաղ անցյալում

¹ Մարդկային զարգացման գեկույց Հայաստան, 1998, Պետության դերը, Եր., 1998, էջ 20:

² ՀԱԱ, ֆ. 1678, գ. 1, գ. 26, թ. 2, գ. 27, թ. 23:

³ Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության գերագույն խորհրդի տեղեկագիր, № 1 (957), 15 հունվարի 1990 թ., էջ 6:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 4 ապրիլի 1991թ.:

իրենց հսկ ջանքերով պարապուրող մատնված քիմիական հսկան վերաբացելու նպատակով¹:

Միայն ճեռնարկության գրեթե ոչնչով չարդարացված փակումից 4 տարի անց՝ հսկայական չափերի հասնող ճերդումների արդյունքում «Նախրիտ» գիտարտադրական միավորումը վերջապես տվեց իր հիմնական արտադրանքի՝ քլորոպրենային կառլչուկի առաջին լուրջ խնճաքանակը²:

«Նախրիտ» և փակված մյուս մեծ ու փոքր ճեռնարկությունների ճակատագրից չկարողացավ խուսափել նաև հայկական էներգետիկայի հսկան Սեծամորի ատոմակայանը:

Հայաստանում ժողովրդական զանգվածների օրավոր ահագնացող Ծննջան տակ 1989 թ. նարտին Սեծամորի ատոմակայանը, որը հանրապետությանը տալիս էր ԶԵԿԵ-ի համեմատ կրկնակի անգամ ավելի էժան էլեկտրաէներգիա, դադարեց գործել³: Հայաստանյան ընդդիմադիրներն անմիջապես շտապեցին կատարված որակել իր որպես համուն ազատության պայքարում իրենց հերթական հաղթանակը⁴:

Նման կերպ փակվեցին առաջատար շատ ճեռնարկություններ ևս⁵:

Աղբեջանական կողմը չհապաղեց օգտվել ստեղծված իր համար նպաստավոր կացությունից: Արդեն 1990 թ. ապրիլին ընթանում էր շրջափակման չորրորդ փուլը⁶: 1990 թ. հունվարից մինչև հունիս ամիսը ամբողջությամբ վերցրած հանրապետության արդյունաբերությունն աշխատաժամանակի ավելի քան 60 տոկոսը գործել է ազերիների կողմից շրջափակման պայմաններում⁷: Անմիջապես նկատելով տնտեսական ու նախ և առաջ էներգետիկ ծանր կացության մեջ հայտնված Հայաստանի շրջափակման շոշափելի արդյունքները՝ աղբեջանական կողմը այն դարձրեց իր պայքարի կարևորագույն միջոցներից մեկը⁸: Իսկական պատուհաս էին գազանույի նկատմամբ իրականացվող ահաբեկչական գործողությունները⁹:

1992 թ. ապրիլ ամսին, հիմնականում էներգետիկ շրջափակման հետևանքով նորանկախ Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունն արձանագրեց 55% անկում¹⁰: Նույն թվականի մարտ ամսվա տվյալներով՝ էլեկտրականության բացակայության պատճառով նախկինում արդյունաբերական արտադրության մեջ ակտիվորեն ներգրավված շուրջ 350 հազար մարդ գտնվել էր հարկադիր պարապուրդի մեջ¹¹:

Բնականաբար, անկնան այս ընդհանուր համապատկերի վրա սաստկացավ բնակչության սոցիալական վիճակը¹²:

¹ ՀԱԱ, ֆ. 113, գ. 164, գ. 576, թ. 1, գ. 166, գ. 599, թ. 1-3:

² Հայաստանի Հանրապետություն, 30 հունիսի 1994 թ.:

³ ՀԱԱ, ֆ. 113, գ. 169, գ. 160, թ. 1, Հայաստանի Հանրապետություն, 14 ապրիլի 1993 թ., 23 ապրիլի 1999 թ.:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 9 օգոստոսի 1990 թ.:

⁵ Խորաբեկյան Վ., Զբաղվածության հիմնախնդիրները Հայաստանում անցման շրջանում, Եր., 1998, էջ 130-131:

⁶ Խորհրդային Հայաստան, 29 մայսի 1990 թ.:

⁷ Նույն տեղում, 29 մայսի 1990 թ.:

⁸ Նույն տեղում:

⁹ Հայաստանի Հանրապետություն, 1 մայսի, 5 օգոստոսի, 24 հոկտեմբերի 1992 թ., Մարդկային գաղքացման գեկույց. Հայաստան, 1995, Եր., 1995, էջ 17:

¹⁰ ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, գ. 186, թ. 2:

¹¹ Նույն տեղում, թ. 5:

¹² Հայաստանի Հանրապետություն, 25 փետրվարի 1993 թ.:

1993-ից մինչև 1995 թ. ներառյալ ընկած ժամանակահատվածում Հայաստան մտնող գաղատարի վրացական հատվածում ազերիների կողմից իրականացվել էին պելի քան 40 խոշորամասշտար պայթեցումներ¹:

1992-1995 թթ. ընկած ժամանակահատվածում 34 անգամ էլ վճարաբորության էր ենթակել Հայաստան մտնող երկարօնը, ներառյալ Խորան գետի՝ Վրաստանը Հայաստանին կապող երկարուղային կամրջի 7 պայթեցումները²:

1990-ականների սկզբին ՀՅ իշխանությունների համար պելի քան պարզ էր, որ բոլոր պարագաներում միայն ատոմակայանի վերագործարկումով էր հնարավոր շտկել էներգահամակարգի ու ողջ տնտեսության վիճակը³:

Եվ ի վերջո 1995 թ. նոյեմբերի 5-ին, շուրջ 6 տարվա պարապուրդից հետո ատոմակայանը Հայաստանի մշտական թերթեռնվածությամբ տառապող և անկանոն գործող միացյալ էներգետիկ համակարգին սկսեց մատակարարել էներգետիկանության առաջին չափարաժինը⁴:

Շուկայական հարաբերությունների համաշխարհային տնտեսական համակարգում տակավին իր նորամուտը արձանագրած ՀՅ-ի համար նրա տնտեսական երկու հսկաները «Սահիրտը» և Մեծամորի ԱԵԿ-ը դարձան միջազգային հանրության մեջ Հայաստանի մերուժի հուսալիության ու կայունության յուրօրինակ գրավականը⁵:

1990-ականների 2-րդ կետից առյունաբերական ձեռնարկությունների վերագործարկումը ՀՅ-ում դարձավ նպատակային գերխննիք: Նախ, որպես առողջացման ենթակա ոլորտներ ընտրվեցին լեռնամետալուրգիական և քիմիական արդյունաբերությունները: Զուգահեռ աշխատանքներ տարվեցին թեք արդյունաբերության, մեքենաշինության բնագավառներում⁶: Տակավին 1994 թ. առաջին կիսամյակից հանրապետությունում նկատվեցին մակրոտնտեսական կայունացման միտումներ⁷: 1996 թ. համախառն ներքին արտադրանքը 1995 թ. համենատ աճել էր 5,8%-ով, բնակչության եկամուտները ավելացել էին 20%-ով և այլն⁸:

Ընդհանուր առնամբ տնտեսական առաջխաղացումները, իհարկե որոշ վայրիվերումներով, զգալի էին նաև հետագա տարիներին:

Ենթագուխ երկրորդ - Անկախ աետականության հաստատմանը միտված շուկայական հարաբերությունների ձևավորման յուրահատկությունները:

Հայաստանի ազգաբնակչության արմատական շահերով պայմանավորված տնտեսական ծրագրերի մշակումն ու իրականացումն ինքնին արդեն ինքնիշխանության դրսևորում էր:

Տնտեսության մասնավորեցումը հրամայական անհրաժեշտություն էր նաև անկախ ու ինքնիշխան հայկական պետության, տնտեսական առումով, շուկայական արժեքների վրա խարսխված համաշխարհային հանրության մեջ ներգրավվելու համար:

Հայաստանի քաղաքական անկախացմանը երկրում կյանքի կոչված շուկայական տնտեսակարգը եկավ իր հետագա կայացմանը էլ ավելի ամրապնդելու ՀՅ-ում ազգային, անկախ ինքնիշխանությունը:

¹ Բագրատյան Յ., Հայաստանում առկա քաղաքական ու սոցիալ-տնտեսական իրավիճակի և դրամից դոլար գալու ելքերի մասին, Եր., 2000, էջ 50:

² Հայաստանի Հանրապետություն, 23 մայիսի 1995 թ.:

³ ՐԱԱ, ֆ. 113, գ. 165, գ. 638, թ. 1-5, գ. 166, գ. 611, թ. 1, գ. 168, գ. 5, թ. 1-2:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 7 նոյեմբերի 1995 թ.:

⁵ ՐԱԱ, ֆ. 113, գ. 175, գ. 19, թ. 1, գ. 22, թ. 1-2:

⁶ Հայաստանի Հանրապետություն, 3, 12 նոյեմբերի 1998 թ., 26 մարտի, 14 հուլիսի 1999 թ., 30 սեպտեմբերի, 12 հոկտեմբերի 2000 թ.:

⁷ Նոյեմբերի, 1 սեպտեմբերի 1994 թ.:

⁸ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №31, 30 դեկտեմբերի 1997 թ., էջ 5-6:

Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը ավելաց կարևորագույն փաստարդի՝ անկախության հռչակագիր 8-րդ կետով Հայաստանում հաստու կերպով սահմանվեց սեփականության բազմաձևությունը¹: Այդ առունով ամենակին էլ պատահական չէր, որ հանրապետությունում շուկայական տնտեսական հանակարդ ստեղծելու նպատակով առաջին որոշումներն ավելի շատ ունեին ՀՀ-ում ազգային պետական ինքնիշխանության ամրապնդմանն ու հետագա զարգացմանը միտված քաղաքական փաստարդերի բնույթը²:

Կառավարության կողմից ընդունվեցին նոր որոշումներ սեփականաշնորհման գործընթացի դեկավար օրակների, վերափոխումների ընթացքի կազմակերպման մասին³ և այլն: ՀՀ Գերագույն խորհրդի 1992 թ. օգոստոսի 27-ին ընդունած «Պետական ծեռնարկությունների և անավարտ շինարարության օրենքումների սեփականաշնորհման և ապահովականացման մասին» օրենքով սահմանվեցին Հայաստանում արտադրության միջոցների նկատմամբ սեփականության հարաբերությունների նպատակային փոխակերպման կազմակերպական-իրավական հիմքերը⁴: Սերտիֆիկատների միջոցով սեփականաշնորհման գործընթացի իրավական դաշտը ապահովելու նպատակով ՀՀ կառավարության կողմից միայն 1994-1995 թթ. ընդունվել էր 13 որոշում:⁵

Սեփականաշնորհման ամրող ընթացքում գործընթացի թերևս ամենախոցելի կողմը մնում էր մասնավորեցվող օրենքումների դիմաց դրանք ծեղա բերողների կողմից կատարած վճարումների բացահայտ անհամապատասխանությունն այդ հիմնարկ-ծեղանարկությունների իրական արժեքներին⁶, ինչպես նաև մասնավորեցման ընթացքում ըստ երթյան մրցակցության բացակայությունը⁷: 1995 թ. մինչև 2000-ականների առաջին տարիները հանրապետությունում «միջին» և «խոշոր» ծեռնարկություններից յուրաքանչյուրի մասնավորեցման համար միջինը վճարվել է ոչ ավելի, քան 150 հազար ԱՄՆ դոլար⁸:

Արտադրատնեսական հարաբերությունների արմատական վերափոխման խնդիրները հայ հասարակության կողմից նախ և առաջ ընկալվում էին որպես անկախացման, երկրում ազգային ինքնիշխանության հաստատման ուղղությամբ իրականացվող կարևորագույն քայլեր: Թերևս հենց դրանով է բացատրվում այն իրողությունը, որ անկախության հռչակագրի ընդունումից հետո մինչ 1994 թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում քաղաքական անկախության կայացման ուղղով ընթացող Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի ընդունած ավելի քան 150 կարևորագույն նշանակության օրենքներից չնչին թիվ էին կազմում ուղղակիորեն հասարակական-քաղաքական ոլորտին վերաբերող իրավական ակտերը⁹: Սեփականաշնորհման նկատմամբ

¹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №16 (972), 31 օգոստոսի 1990 թ., էջ 5:

² Նույն տեղում, №17 (973), 15 սեպտեմբերի 1990 թ., էջ 22-23, №20 (976), 31 հոկտեմբերի 1990 թ., էջ 24-38:

³ Հայաստանի Հանրապետություն, 20 հոկտեմբերի 1990 թ., ՀԱԱ, ֆ. 113, գ. 163, գ. 537, թ. 1-2, գ. 567, թ. 1-2, գ. 165, գ. 156, թ. 1-13:

⁴ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, h.15-16 (1019-1020), օգոստոս 1992 թ., էջ 4-50:

⁵ Հայաստանի Հանրապետության ազգային ժողովի տեղեկագիր, հ. 7-8 (1107-1108), ապրիլ 1996 թ., էջ 35:

⁶ ՀԱԱ, ֆ. 113, գ. 175, գ. 88, թ. 2, գ. 89, թ. 2, գ. 200, թ. 1, գ. 249, թ. 1, գ. 281, թ. 1, գ. 320, թ. 1, գ. 395, թ. 1:

⁷ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №20 (152), 4 հուլիսի 2001 թ., էջ 16-22:

⁸ Մարկոսյան Ա., Մարկոսյան Ե., «Պետությունը և ծեռնարկատիրությունը», Եր., 2005, էջ 76:

⁹ Հայաստանի Հանրապետություն, 23 օգոստոսի 1994 թ.:

հասարակության մեջ և իշխանական շրջաններում քաղաքականացված մոտեցումներն էին, իմանականում, որ պայմանավորեցին մասնավորեցման նկատելիորեն արագ տեմպերը և պատճառ դարձան այդ գործընթացում դրսերդված օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի մեջ ու փոքր վիճակների: Սեփականաշնորհնան արագ տեմպերը պայմանավորված էին նաև դրսի թեևսդրանքով¹:

Սեփականաշնորհնան գործընթացի քաղաքական երանգավորումը թերևս առավել ակնառու կերպով դրսերդվեց գյուղատնտեսության մասնավորեցման ընթացքում, որն սկսվել էր ավելի վաղ, քան արդյունաբերության բնագավառում: Հայաստանի Հանրապետությունում հանրային ունեցվածքի սեփականաշնորհումն իր բոլոր բացքողումներով ու սիմաներով հանդերձ, նպատակային առումով, իմանականում լուծեց շուկայական հասարակարգին անցնան կարևորագույն իմանախնդիրը՝ նախկինում բացառապես պետությանը պատկանած արտադրության միջոցների մասնավորեցման հարցը: Այսպես, արդեն 2000 թ. սկզբներին հանրապետության համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) 80 տոկոսից ավելին ապահովվել էր հանրապետության տնտեսության մասնավոր հատվածի գործունեության հաշվին²:

Հանրապետության հատկապես ֆինանսական ոլորտում իրականացված ինստիտուցիոնալ բնույթի վերակառուցումները, անշուշտ, խորքային առումով հանդիսանալով Շայաստանի ինքնիշխանության հետագա ծավալմանը ուղղակիորեն նպատակառության ազայլեր՝ միաժամանակ ամենաանմիջական ազդեցություն ունեցան ՀՀ այդ շրջանի սոցիալական կացության վրա:

Հանրապետությունում իրականացված գների ազատականացումն սկսվեց 1992 թ. հունվարից և ավարտվեց 1996 թ.³:

Հանրապետությունում ծայր առաջ տնտեսական վերափոխումների համակարգում շուկայական ազատ գնագոյացման անցման քայլի առաջանցիկությունը ընթացող սեփականության ձևերի փոփոխության նկատմամբ դարձավ հնարավորինս խտացված ժամանակահատվածում «ստեղնագին» գնաճը⁴ հետևանքով ազգարնակչության սոցիալական առանց այն էլ անմիջապես վիճակի էլ ավելի վատթարացնան պատճառը:

Այնպես որ վստահաբար պետք է արձանագրել, որ նշված բոլոր խնդիրները և այդ թվում նաև ազգային դրամի իմանումը ամենակին էլ պատահական երևույթ չեր: Ազգային դրամի ստեղծման ուղղությամբ աշխատանքները ծավալվել էին հանրապետությունում դրամի կիրառման նաև որոշում ընդունելուց գգալիորեն ավելի վաղ⁵: Շայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից դեռևս 1993 թ. հոկտեմբերին դրամաշրջանառության կարգավորման նպատակով ստեղծված հասուլ պետական հանձնաժողովը նոյեմբերի 19-ին պատմական որոշում կայացրեց 1993 թ. նոյեմբերի 22-ից Հայաստանի ողջ տարածքում ռուբլու շրջանառությունը դադարեցնելու և հայկական դրամը որպես վճարման օրինական միջոց ճանաչելու վերաբերյալ⁶:

Արդեն գոյություն ունեցող ազգային հերալդիկայի՝ դրոշի, գինանշանի, օրիներգի կողմին ազգային դրամը դարձավ նորամկախ Շայաստանի Հանրապետության պետական ինքնիշխանության անձնագրային նշանակության խորհրդանշներից ևս մեկը:

1993 թ. սեպտեմբերին ՀՀ ԳԽ-ի ընդունած Շայաստանի Հանրապետության տարածքում արթերդիրի բողարկման, տեղաբաշխման, շրջանառության, ինչպես նաև ար-

¹ Շայաստանի Հանրապետություն, 6 ապրիլի 1995 թ.:

² Մարկոսյան Ա., Մարկոսյան Է., Պետությունը և ձեռնարկատիրությունը, Եր., 2005, էջ 67:

³ Շայաստանի Հանրապետություն, 27 փետրվարի 1996 թ.:

⁴ Նոյեն տեղում, 13 հոկտեմբերի 1993 թ.:

⁵ ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, թ. 239, թ. 1-6:

⁶ Շայաստանի Հանրապետություն, 20 նոյեմբերի 1993 թ.:

Ժերթերի շուկայի մասնակիցների գործունեության կարգավորման ու վերահսկման դրույթները սահմանող «Արժեքթերի շրջանառության նախն»¹ օրենքով հիմք դրվեց հանրապետությունում արժեքթերի շուկայի ձևավորմանը: Արժեքթերի շուկայի ձևավորման հետ մեկտեղ և որպես նոր անհրաժեշտ բաղադրատարր հանրապետությունում ձևավորվում էին նաև ֆոնդային բորսաները²:

Խնդրո առարկա ժամանակահատվածում ընդունված մի շարք իրավական փաստաթրերով հանրապետությունում քայլեր էին ծերնարկվում նաև ֆինանսական շուկայի կարուրագույն բնագավառների՝ հասարակական կյանքում սոցիալական բացարձիկ դերակատարություն ունեցող կենսարշակային, ապահովագրական, հարկային համակարգերի կայացման ուղղությամբ և այլն³: Ենթակա քայլերը, ճիշտ է, որոշ օրյեկտիվ, իսկ ավելի հաճախ սուբյեկտիվ պատճառներով մի շարք դեպքերում ոչ միայն չնպաստեցին անկախացմանն անմիջականորեն հաջորդած ժամանակահատվածում հանրապետությունում ստեղծված ծանրագույն սոցիալական կացության բարեւավմանը, այլև նոյնիսկ էլ ավելի բարդացրեցին վիճակը. բայց այնուամենայնիվ, պատճառական ավելի մեծ հեռանկարի առունով, դրանք, արմատավորելով և անրապնդելով հանրապետությունում շուկայական տնտեսաձևը, ունեցան էական դերակատարություն տնտեսական հետագա առաջնաբացի համար, իսկ քաղաքական առունով, անշուշտ, նպաստեցին նորանկախ Հայաստանի ինքնիշխանության ծավալմանը ու ամրապնդմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՍԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱՎԱՐԳԻ

ՁԵՎԱԿՈՐՍԱՆ ՈԼՈՐԾՈՒՄ

ԵՆԹԱԳՈՒԽԱ ԹԱՐԱՖԻ - ՁԵՌՆԱՐԿՈՎԱՄԵՐԸ ԻՐԱՎԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ Կյանքի Ժողովրդավարացման ուղղությամբ:

Անկախացման սկիզբ դրվեց Երկրի քաղաքական համակարգի վերափոխմանը: Անցման շրջանում Հայաստանի առջև ծառացած հիմնախնդիրներից էր հասարակական-քաղաքական կարգի ժողովրդավարականացումը: Նորանկախ Հայաստանի համար հասարակական կյանքի ազատականացումը միակ ուղին էր ինքնիշխանության հաստատման և ազգային անկախ պետականության հարատևման համար:

Ելնելով անկախության մասին հոչակագիր դրույթներից՝ ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. ընդունեց բնույթով բացահիկ ժողովրդավարական որոշում «Հայաստանի Հանրապետության պետական մարմինները և պետական ծերնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները, զինվորական ստորաբաժնությունները ապաքաղաքականացնելու մասին»⁴, որով, փաստորեն դրվեց հասարակության մեջ ամեն տեսակի գաղափարական պարտադրանքի բացառման հիմնաքարը: Հայաստանի Գերագույն խորհուրդը 1991 թ. փետրվարի 26-ին ընդունեց «Հա-

¹ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 647-657:

² Հայաստանի Հանրապետություն, 24 փետրվարի 1993 թ., Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ.15-16 (1043-1044), օգոստոս 1993 թ., էջ 65-76, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-սեպտեմբերին, Եր., 1997, էջ 59, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 1999 թվականի հունվար-սեպտեմբերին (տեղեկատվական-վելուծական անսական գեկուց), Եր., 1999, էջ 90:

³ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, հ.1-2 (1005-1006), հունվար 1992 թ., էջ 4-13, 22-43, Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, հ. 23-24 (1123-1124), դեկտեմբեր 1996 թ., էջ 3-14:

⁴ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №21 (977), 15 նոյեմբերի 1990 թ., էջ 7-8:

սարակական-քաղաքական կազմակերպությունների մասին»¹ օրենքը, որով Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում իրավաբանորեն ամրագրվեց բազմակուսակցականության սկզբունքը:

Օրենքի ընդունումը նեծ խթան հանդիսացավ հայ հասարակության մեջ ժողովրդավարության կարևորագույն տարրերից մեկի քաղաքական կուսակցությունների և այլ տիպի հասարակական կազմակերպությունների ձևակրոնան համար: 2001 թ. Հայաստանում գրանցված էր շուրջ 100 կուսակցություն ու քաղաքական միավորում, ինչպես նաև փախստականների, զանգվածային լրատվության, մարդասիրական օգնության, գիտության և կրթության, մարդու իրավունքների, մշակույթի և սպորտի և այլ բնագավառների 2579 հասարակական կազմակերպություն²: Քննարկվող ժամանակահատվածում կուսակցությունները շատ հաճախ, արիեստականորեն համարելով իրենց շարքերը, դադարել էին գաղափարների շուրջը համախմբված մարդկանց ընդհանրություն լինելուց և վեր էին ածվել ընտրություններ ապահովող կառույցների³:

Ազատական սկզբունքները նախ և առաջ կենսագործվեցին հենց խորհրդարանում: Արդեն 1995 թ. առաջն առաջին խորհրդարանի 260⁴ պատգամավորներից 142-ը ներկայացնում էին 18 կուսակցություն և այլ հասարակական-քաղաքական բնույթի կազմակերպություն: ՀՀ առաջին գումարնան Գերագույն խորհրդի գործունեության ողջ ընթացքում խորհրդարանում գործել էին 12 պատգամավորական խումբ և 5 կուսակցական խմբակցություն⁵:

Հայաստանի ներքաղաքական կյանքի նոր շրջանը որոշակիացավ 1994 թ. վերջերին և տևեց մինչև 1998 թ. սկիզբ՝ մինչև ՀՀ իշխանակարգական իր երկրորդ փուլը իրականացնող ՀՀ առաջին նախագահի հրաժարականը, որը նշանավորվեց Հայաստանում ժողովրդավարության նկատելի սահմանափակման⁶:

Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքում, կարծեք, մշտական գոանցում ստացան պատվիրված քաղաքական դատավարությունները, ընդոհնության առաջնորդների ձերբակալությունները⁷ և այլն:

Նորանկախ Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի ազատականացնանը միտված կարևոր իրավական փաստաթղթերից էր 1991 թ. հունիսի 17-ին Հայաստանի Գերագույն խորհրդի ընդունած «Խորհի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքը⁸: Ըստ եւթյան հանրապետությանը յոթ տասնամյակ պարտադրված աթեիզմից հետո Հայաստանը, աշխարհում առաջինը պետականորեն քրիստոնեությունը ընդունած երկիրը, դարձ կատարեց դեպի իր հոգևոր ակունքները: Հոգևոր բաղադրիչը կրկին դարձավ պետական արարողակարգի անբաժան

¹ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 115-118:

² Մարդկային զարգացման ազգային գեկույց. Հայաստան 2001. Անկախության և անցումային 10 տարիները Հայաստանում, Եր., 2001, էջ 46:

³ Նույն տեղում:

⁴ Խորհրդային Հայաստան, 1 հուլիսի 1990 թ.:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 4 հուլիսի 1995 թ.:

⁶ Նոյն տեղում, 1 հունվարի 1995 թ.:

⁷ Նոյն տեղում, 8 հուլիսի 1995 թ., 11 դեկտեմբերի, 6 մարտի, 18 ապրիլի, 18 հունիսի, 10 հոկտեմբերի 1996 թ.:

⁸ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Եր., 1995, էջ 136-140:

մասը¹:

Ժողովրդավարության ուղին որդեգրած Հայաստանում խոսքի ազատության ճանապարհին կարևորագույն քայլ էր 1991 թ. հոկտեմբերի 8-ին Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Սամանվի և զանգվածային լրատվության միջոցների մասին» օրենքը, որով սահմանվեց, որ Հայաստանում զանգվածային լրատվության բոլոր միջոցներն այլևս ազատ էին և չէին ենթարկվելու գրաբնության²: Օրենքի ընդունումը լուրջ խրան հանդիսացավ հանրապետությունում զանգվածային լրատվամիջոցների գործունեության ակտիվացման համար: Կտրուկ ավելացավ դրանց թիվը³:

1996 թ. Հայաստանում սկսվեց ժողովրդավարության որակական նոր ժամանակահատված կազմված ՀՅ նախագահական հերթական ընտրությունների հետ: Ինչպես և ակնկալվում էր, կեղծվեցին նաև բացահայտ բռնությունների պայմաններում 1996 թ. սեպտեմբերի 22-ին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքները, և L. Տեր-Պետրոսյանը վերընտրվեց ՀՅ նախագահ⁴: Որից հետո հանրապետությունում սկսվեցին հակաշխանական միտինցներն ու երթերը⁵:

1996 թ. նախագահական ընտրություններից հետո ժողովրդի և պետության շուրջ մեկ և կես տարի տևած սուր առձակատումը հանգեցրեց 1998 թ. փետրվարին ՀՅ նախագահի հրաժարականին⁶: Հայաստանում սկսվեց հասարակական-քաղաքական զարգացումների նոր փուլ: Քաղաքական կյանքի առողջացման ուղղությամբ 1998 թ. մարտին նախագահական արտահերթ ընտրությունների երկրորդ փուլում հաղթանակած⁷ Ռ. Քոչարյանի կարևորագույն քայլերից էին նոյն բվականի մայիսին Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցության պաշտոնական կարգավիճակի վերականգնման մասին իրանանագորի ընդունումը⁸, քաղբանտարկյալների ազատ արձակումը և այլն⁹:

Ենթագույն երկրորդ - Անկախ Հայաստանի պետական համակարգի ձևավորման գործընթացի առանձնահատկությունները:

Խնդրո առարկա ժամանակահատվածում, բնականաբար, անկախ պետականության հաստատման հիմնահարցերի հետ ամենաուղղակիրեն կազմված էր նորանկախ Հայաստանում իրականացվող պետականաշխնությունը: Հայաստանում պետականության նակարագույն ինքնիշխանության ձևավորումը փաստրեն սկսվեց 1990 թ. կայացած խորհրդարանական ընտրություններով¹⁰:

Գերագույն խորհրդի գործունեության շրջանակները սահմանվեցին 1991 թ. նոյեմ-

¹ Խոհրդային Հայաստան, 21 հուլիսի 1990 թ., 7 օգոստոսի 1990 թ., Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտեմբերի 1991 թ., 12 նոյեմբերի 1991 թ., 12 նոյեմբերի 1996 թ., 10 ապրիլի 1998 թ., 16 մայիսի 2000 թ.:

² Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (999), 15 հոկտեմբերի 1991 թ., էջ 4-13:

³ Հայաստանի Հանրապետություն, 14 հուլիսի 1993 թ., 17 փետրվարի 1994 թ., 8 սեպտեմբերի 1994 թ.: Մարդկային զարգացման գենույց, Հայաստան 1998. Պետության դերը, Եր., 1998, էջ 38, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 13-14 (1089-1090), 20 հուլիսի 1995 թ., էջ 3:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 1 հոկտեմբերի 1996 թ.:

⁵ Նույն տեղում, 26 սեպտեմբերի 1996 թ.:

⁶ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №4 (37), 24 փետրվարի 1998 թ., էջ 33:

⁷ Հայաստանի Հանրապետություն, 7 ապրիլի 1998 թ.:

⁸ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №10 (43), 15 մայիսի 1998 թ., էջ 22:

⁹ Հայաստանի Հանրապետություն, 10, 11 փետրվարի 1998 թ.:

¹⁰ Խորհրդային Հայաստան, 22 մայիսի 1990 թ.:

թերի 19-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի մասին» օրենքով¹: Ի դեպ այդ փաստարդում առաջին անգամ ամրագրված էր, որ համբապետության խորհրդարանը մշտակես գործող իշխանական մարմին էր: Ցուրաքանչյուր նոր խորհրդարանի ձևավորումը ըստ էության իրենով նշանավորում էր անկախ Հայաստանի ինքնիշխանության վերատարրության ու հետագա ծավալման մի նոր փուլ: Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի կողմից 1995 թ. մարտին ընդունված օրենքով ձևավորվելիք հաջորդ խորհրդարանը վերանվանվեց ՀՀ Ազգային ժողովի²: Այդ օրենքով Հայաստանի բարձրագույն օրենսդիր մարմնի լիազորությունների ժամկետը սահմանվեց 4 տարին և Հայաստանի Հանրապետության քաղաքական գործընթացների պրակտիկայում անրագրվեց համանանական ընտրակարգը³:

Ըստ էության խմբոր առարկա ժամանակահատվածում Հայաստանի խորհրդարանի ընդունած իրավական փաստարդերի գերակշռող մասն ուղղակիորեն կամ էլ անուղղակի նպատակամոված էր ՀՀ անկախ պետականության հաստատմանը: Այդ բնույթի էր ՀՀ Գևորգ 1991 թ. օգոստոսի 1-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության նախագահի մասին» օրենքը⁴: Ելենով ինքնիշխան պետության կայացման գործընթացի արագացման շահերից, սահմանելով հանրապետության նախագահի պաշտոն՝ Հայաստանի խորհրդարանը նրան զիտեց իր լիազորությունների մի մասը⁵: 1991 թ. կայացած նախագահական ընտրությունների արդյունքում նորանկախ Հայաստանի Հանրապետության առաջին նախագահ ընտրվեց Լ. Տեր-Պետրոսյանը⁶: Հանրապետությունում ձևավորված կիսանախագահական կառավարման համակարգի կայացման կարևորագույն հանգրվան էր 1998 թ. իշխանափոխությունը:

Անկախության հօչքակումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանական համակարգում իրականացված վերափոխումները նպատակամոված էին ազատական հասարակարգին բնորոշ կառավարման նոր համակարգի ձևավորմանը անկախ պետականության հաստատմանը: Անկախ պետականության հաստատման գործում իր ներդրումն ուներ կառավարման համակարգի յուրաքանչյուր օղակ: Սակայն հարևանի կողմից պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի համար նախնական փուլում առավել կարևոր էր ուժային կառուցների ու նախ և առաջ զինված ուժերի կայացումը: Այդ ուղղությամբ գործնական քայլեր էին իրականացվում տակավին 1990 թ. սկզբներից⁷:

Պետական ինքնիշխանության որակապես նոր նակարդակ էր նշանավորում հայոց բանակի համալրման նպատակով ՀՀ նախագահի 1992 թ. ապրիլի 18-ի հրամանագրով հանրապետությունում իրականացված առաջին գորակությունը, որը ընթացավ 1992 թ. մայիս-հունիս ամիսներին⁸: Այդ գործընթացը հաջողությամբ դեկավարում էին առաջին անգամ սեփական բանակը համալրելու նպատակով ձևավորված գորակուչային կենտրո-

¹ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 22 (1002), 30 նոյեմբերի 1991 թ., էջ 3-10:

² Նույն տեղում, № 6 (1082), 31 մարտի 1995 թ., էջ 3:

³ Նույն տեղում, էջ 3-4:

⁴ Նույն տեղում, № 15 (995), 15 օգոստոսի 1991 թ., էջ 4-9:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 20 հունվարի 1996 թ.:

⁶ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 20 (1000), 30 հոկտեմբերի 1991 թ., էջ 31:

⁷ Խորհրդային Հայաստան, 12 մայիսի, 9, 19 հոկտեմբերի 1990 թ., Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր № 9 (965), 15 մայիսի 1990 թ., էջ 10-11, ՂԱԱ, ֆ. 113, ց. 398, թ. 1-3:

⁸ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 8 (1012), 30 ապրիլի 1992 թ., էջ 37:

նական ու բժշկական հանձնաժողովները¹:

Հայաստանի Հանրապետության նախագահի 1991 թ. դեկտեմբերի 14-ի հրամանագրով նախկինում գործած պետական անվտանգության կոմիտեն (ՊԱԿ) վերակառուցվեց ազգային անվտանգության պետական վարչության²:

Անկախացումից հետո, կապված հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, վարչական և այլ բնագավառներում իրականացվող արնատական վերափոխումների հետ, էական վերակառուցումներ տեղի ունեցան նաև հանրապետության ինքնիշխանության երաշխավորը հանդիսացող օղակներից և մեկում՝ ոստիկանությունում³: ՀՀ խորհրդարանի կողմից 2001 թ. ապրիլի 16-ին ընդունվեց «Ոստիկանության մասին օրենքը»⁴: Նշված փաստաթղթով էլ կատարվեց ներքին գործերի կառուցի անվանափոխությունը:

Անկախացումից հետո հասարակական նպատակով Հայաստանում իրականացված պետական վերափոխումների շարքում, անշուշտ, իր ուրույն տեղուն ունի պետական ինքնիշխանության կարևորագույն բաղկացուցիչներից մեկի՝ սահմանադրության ընդունումը⁵:

Խնդրո առարկա ժամանակահատվածում անկախացումից անկախանացված պետականության հաստատման միտված կարևորագույն պետական վերափոխումների շարքում, անշուշտ, իր ուրույն տեղուն ունի պետական կառավարման ապակենետրոնացման՝ ժողովրդավարության կարևորագույն սկզբունքի հրականացման նպատակով հանրապետությունում տեղական ինքնականացման համակարգի ձևավորումը⁶:

Պետական համակարգում իրականացված կարևորագույն քայլերից էր հանրապետությունում շուկայական հարաբերություններին հարիր և նրա հետագա ծավալմանը նպաստող հրավահարաբերությունների ձևավորումը: Հասարակական կյանքի ամենատարեր ոլորտներում հրավահարաբերությունները կարգավորող իրավունքի աղբյուրների ընդունման հետ մեկտեղ բնականաբար ձևավորվեց նաև ՀՀ դատական համակարգը⁷:

Պետական իշխանության համակարգի կարևորագույն բաղկացուցիչների՝ կառավարման համակարգի և օրենսդրական դաշտի կայացման հետ աստիճանաբար ձևավորվում էր նաև իշխանության լինելիության հաջորդ կարևոր քաղաքացարքը՝ պետական ծառայության համակարգը⁸:

Անկախացումից պետականաշինության առումով չափազանց կարևոր քայլ էր նաև նորաստեղծ պետության քաղաքացիությունը հավաստող անձնագրերի ներդրումը⁹: Ինքնիշխան պետականության հումանիտար ոլորտին վերաբերող այդ մոտիվի հետագա զարգացումը եղավ ՀՀ Ազգային ժողովի 1995 թ. նոյեմբերի 16-ին ընդունած

¹ ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, գ. 248, թ. 1-2:

² Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, №24 (1004), 31 դեկտեմբերի, 1991 թ., էջ 46:

³ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №12, 5 հունիսի 1997 թ., էջ 172-181:

⁴ Նոյեմբերում, №15 (147), 31 մայիսի 2001 թ., էջ 28-49:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 6 հուլիսի 1995 թ.:

⁶ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու (1995-1999 թթ.), Եր., 1999, էջ 423-443:

⁷ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №15(48), 27 հուլիս 1998 թ., էջ 28-36, Մարդկային զարգացման ազգային գեկույց, Հայաստան 2000. Մարդու իրավունքները և նարդկային զարգացումը, գործողություն հանուն առաջընթացի, Եր., 2000, էջ 51:

⁸ Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժողովածու 2001 թ., գիրք դ., Եր., 2001, էջ 785-811:

⁹ Հայաստանի Հանրապետություն, 16 սեպտեմբերի 1994 թ.:

«Հայաստանի Հանրապետության քաղաքացիության մասին» օրենքի¹ ընդունումը և այլն:

Պետական ինքնիշխանության ծավալման և խորացման ընթացքը եթեև առավել ակնառու դրսերդից նաև Հայաստանի պետական տոնացանկի և հիշատակի օրերի սահմանման հարցում²:

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՈՒԹՎԱԿԱՆ ՀԱՆԱՀԱՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ

ԲՆՈՒԹՅԱԾ ՄԻՋՎԶԳՎԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ԵԿՐԱԳՈՒԽ ԱՐԱՋԻՆ - ԱՐՄԵՐԿԻ ԿՈՂՄԻ ՆՈՐԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԱՆԱՀՄԱՆ ԾՐԹԱԳՔԸ:

Լիակատար անկախության կարևորագույն չափորոշիչներից է համաշխարհային հանրության կողմից ազգային պետության ծանաչումը:

Փաստական առումով Հայաստանի Հանրապետության անկախությունը առաջինը ծանաչել և նրա հետ այդ հենքի վրա դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել ՀՀ անկախության հանրաքվեից ուղղ երկու ամիս անց՝ 1991 թ. նոյեմբերի 21-ին նույնաեն նորանկախ Լիտվայի Հանրապետությունը³:

Հաջորդ ՀՀ անկախացման տարում նրա անկախությունը դեկտեմբերի 12-ին ծանաչել⁴, իսկ նոյեմբերի 21-ից ել դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել Ուկրաինան⁵: Իսկ այսպես կոչված հեռավոր արտերկրից առաջինը ՀՀ-ն ծանաչել և նրա հետ 1991թ. դեկտեմբերի 25-ին դիվանագիտական հարաբերություններ էր հաստատել Ռումինիամ⁶:

Հասկանալի պատճառներով նորանկախ Հայաստանի Հանրապետության համար առանձնահաստուկ նշանակություն ուներ Ռուսաստանյան Ֆեդերացիայի կողմից 1991 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ անկախության ծանաչումը⁷: Իսկ հաջորդ օրն էլ իր հերթին Հայաստանը ծանաչեց Ռուսաստանի անկախությունը⁸: Ռուսաստանյան Ֆեդերացիայի հետ դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին 1992 թ. ապրիլին⁹: 1991 թ. դեկտեմբերի 25-ին էլ ԱՍՍ նախագահ Զորյա Բուշր հայտարարեց, որ իր երկիրը պաշտոնապես ծանաչում էր Հայաստանը, որպես ինքնիշխան պետություն¹⁰: Հաջորդ տարվա հունվարի 7-ից էլ երկու երկրների միջև հաստատվեցին դիվանագիտական հարաբերությունները¹¹: Առաջիններից մեկը անկախ Հայաստանը 1991 թ. դեկտեմբերի 16-ին ծանաչեց Թուրքիան¹² և այլն:

Հայաստանի անկախացման տարում ընդամենը 3 ամսվա ընթացքում ՀՀ-ն ծանա-

¹ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, №8 (1098), 30 նոյեմբերի 1995 թ., էջ 2-10:

² Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, №27 (159), 20 օգոստոսի 2001 թ., էջ 58-59:

³ Հայաստանի Հանրապետություն, 22 նոյեմբերի, 1991 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 6:

⁴ Նոյեմբերի 15 հունվարի, 1992 թ.:

⁵ ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 190, թ. 1-6:

⁶ Նոյեմբերի 15 հունվարի, 1992 թ.:

⁷ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 24(1004), 31 դեկտեմբերի 1991 թ., էջ 55, Հայաստանի Հանրապետություն, 18 դեկտեմբերի, 1991թ.:

⁸ Հայաստանի Հանրապետություն, 19 դեկտեմբերի, 1991 թ.:

⁹ ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 8:

¹⁰ Հայաստանի Հանրապետություն, 27 դեկտեմբերի, 1991 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 204, թ. 4-5:

¹¹ Հայաստանի հանրապետություն, 9, 17 հունվարի, 1992 թ.:

¹² ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 192, թ. 1-3, Հայաստանի Հանրապետություն, 15 հունվարի, 1992 թ.:

չել էին աշխարհի 48 պետություններ, որոնց թվում էին արդեն կիշատակված երկրների հետ նաև Հինաստանը, Իրանը, Հնդկաստանը, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, ճապոնիան, Եգիպտոսը, Սարոկոն, Սերբիկան, Խորայելը, Բրազիլիան, Ռանիան, Նիդերլանդները և այլն։ Անկախացած Հայաստանի Հանրապետության ճանաչման շքահանդեսը էլ ավելի մեծ թափով շարունակվեց 1992 թ.²։ 1992 թ. գարնանն արդեն անկախ Հայկական պետությունը ճանաչել էին աշխարհի 101 երկրներ, որոնցից 42-ի հետ հաստատվել էին դիվանագիտական հարաբերություններ³։

Նորանիախ Հայաստանի արտաքին գործընթացները համակարգող և իրականացնող գերատեսչության առջև ծառացել էին բազում խնդիրներ, որոնց հետ հանրապետությունը խորհրդային շրջանում երրեք չեղ առնչվել։

ԱԳ նախարարությանը վերաբերող ՀՀ կառավարության ընդունած առաջին փաստաքրերից էր 1991 թ. մայիսին կայացրած որոշումը գերատեսչության ապարատի զգալի ընդլայնման վերաբերյալ⁵։ Հայաստանի ինքնուրույնության կարևորագույն չափանիշներից է օտարերկրյա ներկայացուցչությունների առկայությունը երկրում և ՀՀ դեսպանությունների գոյությունը արտասահմանում⁶։

Օտարերկրյա հեռու ու մոտիկ տերությունների կողմից Հայաստանի Հանրապետության ճանաչման գործընթացը քրուացող տեմպերով շարունակվում էր նաև հաջորդ տարիներին։ 1997 թ. Հայաստանի Հանրապետությունը արդեն ճանաչել էին աշխարհի 128 երկրներ, որոնցից դիվանագիտական հարաբերություններ հաստատվել էին 114-ի հետ⁷։

Եթրագույխ երկրորդ - Հայաստանի անկախության հաստատումը և ԱՊՀ-ն:

Արտասահմանյան երկրների հետ երկկողմ հարաբերությունների հաստատման գործընթացում առաջնությունը տրվում էր ԱՊՀ երկրներին։

Հենց սկզբից Հայաստանը ամենաակտիվ կերպով մասնակցում էր ԱՊՀ երկրների պետությունների դեկապարների հանդիպումների նախապատրաստական աշխատանքներին և անցկացմանը⁸։ ԱՊՀ-ն ըստ էության դարձավ անկախացած երկրների զգալի մասի համար կայունության հաստատման ու պահպանման, ինչպես նաև արտաքին հնարավոր նարտահրավերները դիմագրավելու արդյունավետ միջոց⁹։

Չնայած այն հանգամանքին, որ ԱՊՀ երկրները իրենց տնտեսական հզորություններով զգալիորեն զիջում էին Արևմտային, բայց, այնուամենայնիվ, Հայաստանի հետ տնտեսական գործառություններում նրանց դերը եւկան էր¹⁰։

Տնտեսական կապերի ամրապնդման հետ զուգընթաց ԱՊՀ շրջանակներում ձեռնարկվում էին նաև ամրամ երկրների միջև քաղաքական, մշակութային և այլ բնույթի

¹ Հայաստանի Հանրապետություն, 15 հունվարի, 1992 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 214, թ. 1-4, գ. 196, թ. 1-12, գ. 220, թ. 1-12, գ. 221, թ. 1-8, գ. 229, թ. 1-10, գ. 206, թ. 1-6, գ. 226, թ. 1-8, գ. 199, թ. 1-7, գ. 197, թ. 1-5, գ. 228, թ. 1-5, գ. 193, թ. 1-14։

² ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 233, թ. 1-15, գ. 231, թ. 1-6, գ. 230, թ. 1-4, գ. 235, թ. 1-4, գ. 238, թ. 1-18, գ. 239, թ. 1-10, գ. 241, թ. 1-3, գ. 243, թ. 1-10, գ. 245, թ. 1-18, գ. 247, թ. 1-13, գ. 248, թ. 1-6, գ. 249, թ. 1-4։

³ Նույն տեղում, գ. 9, գ. 68, թ. 6։

⁴ Նույն տեղում, գ. 1, թ. 1-44։

⁵ Նույն տեղում, գ. 10, թ. 7, ֆ. 113, գ. 165, գ. 353, թ. 1-2։

⁶ Նույն տեղում, ֆ. 113, գ. 167, գ. 484, թ. 1, թ. 2, գ. 554, թ. 1, գ. 168, գ. 40, թ. 1, գ. 169, գ. 128, թ. 1, Հայաստանի Հանրապետություն, 11 օգոստոսի, 25 նոյեմբերի 1992 թ.։

⁷ Հայաստանի Հանրապետություն, 2 հուլիսի 1997 թ.։

⁸ Նույն տեղում, 1, 21 հունվարի, 24 մարտի, 16 մայիսի, 9 հոկտեմբերի 1992 թ.։

⁹ Նույն տեղում, 15 հունվարի 1994 թ.։

¹⁰ Նույն տեղում, 29 փետրվարի 1996 թ., 18 մարտի 1997 թ., 7 մայիսի 1998 թ.։

կապերի սերտացմանը միտված միջոցառումներ¹:

Նենց սկզբից Անկախ պետությունների համագործակցության մեջ կարևորվեցին կառույցի անդամ երկրների ռազմաքաղաքական անվտանգության խնդիրները: Եվ պատահական չեր, որ ՍՊՀ շրջանակներում կնքված առաջին համաձայնագրերի մեծանասնությունը վերաբերում էր հենց այդ բնագավառին: ԿՊՀ-ի ռազմապաշտպանական նշանակության օբյեկտիվ գնահատումը այն օրերի՝ ՀՀ իշխանությունների բացառիկ ծիշտ քայլերից մեկն էր:

Անկախ Պետությունների Համագործակցության շրջանակներում կնքված պայմանագրերը, նրա կենտրոնական կառույցների կողմից ընդունված փաստաթղթերը նպատակատողված էին Համագործակցության անդամ բոլոր երկրների, այդ թվին բնականաբար նաև Հայաստանի Հանրապետության անվտանգության ռազմատեխնիկական առումով ամենաբարձր մակարդակի (ընդհուպ միջուկային գենքի մակարդակով) ապահովածության հաստատմանը²:

ՍՊՀ շրջանակներում կնքված ռազմապաշտպանական բնույթի փաստաթղթերի մեջ իր բացառիկ կարևորությամբ առանձնացավ 1992 թ. մայիսի 15-ին Տաշքենդում կնքված «Կոլեկտիվ անվտանգության պայմանագիրը» (ԿՊ, իսկ հետագայում ՀԱՊԿ)³: Հավաքական անվտանգության պայմանագիրը ՍՊՀ այն կառույցներից էր, որում ՀՀ-ն հենց սկզբից, ունեցավ իր ամենաակտիվ ներգրավվածությունը:

Քննարկվող ժամանակահատվածում Հայաստանը ակտիվորեն մասնակցում էր ռազմապաշտպանական ոլորտի նոր պայմանագրերի կնքմանն ու համաձայնությունների կայացմանը⁴:

Համագործակցության ծևակիրման պահից Հայաստանը մշտապես խոսքով ու գործով հաստատում էր ՍՊՀ շրջանակներում համագործակցությամբ իր ակտիվ շահագրգուվածությունը, որի գործնական ապացույցներից էր Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում նրա գոյության տակավին 5-րդ տարում ընդունված ավելի քան 600 փաստաթղթերի գերակշռող մասին ՀՀ մասնակցությունը⁵:

Սակայն դրանց մի զգալի մասը կյանքում այդպես էլ չիրականացվեց: Եվ ընդհանրապես ՍՊՀ-ի, որպես քաղաքական կազմակերպության կայացման ընթացքը գործնականում անշափ դանդաղ էր, որի հիմնական պատճառներից մեկը որոշ անդամ երկրների ներքին հակասություններն էին:

Ենթագույն երրորդ - ՀՀ և Ուսաստանի Դաշնության միջև հարաբերությունների ծևակիրման և զարգացման գործընթացը:

Անկախ պետությունների համագործակցության անդամ երկրներից ի սկզբանե բնականաբար Հայաստանի համար ամենակարևոր Ուսաստանի Դաշնությունն էր: Երկու ժողովուրդների դարավոր փոխհարաբերությունների առումով չափազանց օրինաչափ էր, որ Հայաստանի ամկախացումը ընթացավ ի վես հայ-ուսական բարեկամության: Ուսաստանի հետ իրավահավասարության սկզբունքներով Հայաստանի կնքած պայմանագրերը, հանդիսանալով ազգային ինքնիշխանության դրսուրում, միաժամանակ էլ ավելի էին աճրապնդում ՀՀ-ի հենց այդ պետական ինքնիշխանությունը: Այդ բնույթի հայ-ուսական առաջին կարևորագույն փաստաթղթերից էր 1991 թ. դեկտեմբերի 29-ին կնքված «Հայաստանի Հանրապետության և Ուսաստանյան ֆեդերա-

¹ Հայաստանի Հանրապետություն, 3 ապրիլի 1992 թ.

² Սույն տեղում, 10 հունվարի, 21 փետրվարի, 28 մարտի, 1 ապրիլի, 2 ապրիլի 1992 թ.:

³ Սույն տեղում, 26 մայիսի 1992 թ.:

⁴ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր, № 8(1098), 30 նոյեմբերի 1995 թ., էջ 11, Հայաստանի Հանրապետություն, 25, 26 մայիսի 2001 թ.:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 18 սեպտեմբերի 1996 թ.:

ցիայի միջև բարեկամության, համագործակցության և փոխադարձ անվտանգության» համաձայնագիրը¹: Ստորագրված համաձայնագրով կողմերը պայմանավորվում էին առավել սերտորեն համագործակցել հատկապես Երկու երկրների ազգային անվտանգության ոլորտում:

Հայաստան-Ռուսաստան ռազմական համագործակցության ոլորտում լրջագովարայի էր 1995 թ. մարտի 16-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետությունում ռուսական ռազմական հենակետի մասին»² պայմանագիրը: 25 տարի ժամկետով կնքված այդ պայմանագրի նպատակը ԱՊՀ արտաքին սահմանների հուսալի պաշտպանության համակարգի ձևավորումն էր:

Հայաստանում ռուսաստանյան ռազմակայանի մասին պայմանագրի, ինչպես և բազմաթիվ այլ կարևորագույն միջավետական փաստաթերթի վավերացման բոլոր գործնքացները խոսուն վկայությունն են այն բանի, որ անկախության հաստատումից հետո, բոլոր դեպքերում, Հայաստանի Հանրապետության քաղաքական կյանքում գերիշխող պետական ինքնիշխանության սկզբունքն էր³:

Հայաստանը Ռուսաստանի հետ ռազմական համագործակցության ոլորտում ինտեգրացման տեսակետից ԱՊՀ Երկուների թվում առաջատարն էր⁴:

Ռազմատեխնիկական բնագավառում հայ-ռուսական դաշնակցային հարաբերություններում որպակապես նոր փուլ սկսվեց 1999 թ. ընթացքում Գյումրիի ռուսական 102-րդ ռազմակայանում հակաօդային պաշտպանության գեներալի հրացանության U-3004 գերժամանակակից համակարգի տեղակայմանը⁵, Հայաստանի օդային տրածքում մարտական հերթապահություն իրականացնող ռուսական վիխացին խունքը ժամանակակից «ՄԻԳ-29» տիպի կործանիչներով համալրմանը⁶, ՀՀ ՌՕԴ-ի և ՌԴ ռազմաօդային ուժերի համատեղ մարտական հերթապահության սահմանմանը⁷ և այլն:

Մինչև 2001 թ. աշուն հայ-ռուսական ռազմական համագործակցության միջավետական իրավական դաշտը ներառում էր Երկու Երկուների միջև կնքված մոտ 40 համաձայնագրեր, որոնց թիվը գնալով արագործեն աճում էր⁸:

Անկախացումից հետո հայ-ռուսական հարաբերություններում ամենակարևոր ձեռքբերումներից մեկն էլ գիտության և կրթության ասպարեզում կապերի պահպանումն ու հետագա խորացումն էր: Գիտակրթական բնագավառի հաջողությունները ևս ապահովություն միջավետական պայմանավորվածություններով⁹:

Գործընկերային և փոխահավետ տնտեսական համագործակցությունը հայ-ռուսական դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո անցած 10 տարիների ընթացքում խարսխված էր 40-ից ավելի միջավետական պայմանագրերի վրա¹⁰: Այդ համաձայնությունների գործունեության արդյունքում ապահովվեց ՈԴ ներշնչող և մնայուն ներկայությունը Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ոլորտներում:

¹ Հայաստանի Հանրապետություն, 15 հունվարի 1992 թ.:

² Նոյեմբերի 17 մարտի 1995 թ.:

³ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի տեղեկագիր №, 21-22 (111-112), նոյեմբեր 1996 թ., էջ 34-35:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 3 մայիսի 1996 թ.:

⁵ Նոյեմբերի 19, 22 հունվարի, 23 փետրվարի 1999 թ.:

⁶ Նոյեմբերի 24 հունիսի, 23 հոկտեմբերի 1999 թ.:

⁷ Նոյեմբերի 27 մարտի, 14, 16, 23 ապրիլի 1999 թ.:

⁸ Նոյեմբերի 14 սեպտեմբերի 2001 թ.:

⁹ Նոյեմբերի 17 հունիսի 1994 թ., ՀՀ միջազգային պայմանագրերի ժողովածու 1999-2001 թթ., Եր., 2002, էջ 379-382

¹⁰ Սելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002, էջ 260:

Ոուսաստանից հիմնականում գագի ներմուծման դիմաց Հայաստանի վճարումների արդյունքում կուտակվել էր բավական մեծ պարտոք: Նման պարագայում հայ-ռուսական տնտեսական բանակցությունների արդյունքում ծեռք էր բերվել պայմանագրովածություն, ըստ որի պարտը մարելու նպատակով Հայաստանի Հանրապետության արդյունաբերության որոշ ծեռնպակությունների բաժնետոմսերի մի մասը պետք է տրամադրվեր ռուսական կողմին: Թենարիկվող ժամանակահատվածում Հայաստանի համար 1-ին գործընկերն առևտրատնտեսական հարաբերություններում բացարձակ ցուցանիշների առունուկ հանդիսացել է Ոուսաստանի Դաշնությունը²:

Ենթագոլում չորրորդ - Հայաստանի Հանրապետության փոխհարարերությունները հարևան երկրների հետ ազգային պետականության կայացման ընթացքում:

Հայաստանի անկախ պետականության հաստատման առունուկ բնականաբար չափազանց կարևոր էին անմիջական սահմանակից հարևանների հետ ունեցած փոխհարաբերությունները:

Տարածքային առօնումով մերձավոր հարևանների հետ հարաբերությունների ծավորման կարևորագույն առանձնահատկություններից մեկն այն էր, որ այդ փոխհարաբերությունների սկզբունքները դատարկ տեղում չին ծևավորվելու: Անմիջական հարևանների հետ նորանկախ Հայաստանի առնչությունների փորձը միանշանակորեն ապացուցեց, որ այդ հարցում չափազանց կարևոր էր անցյալի պատճական փորձը չանտեսելը:

Չափազանց կարևոր էին Հայաստանի հարաբերությունները Վրաստանի հետ: Շրջափակման մեջ գտնվող Հայաստանի համար Վրաստանի տարածքով անցնող տրանսպորտային հաղորդակցությունը ՀՀ իմանական ելքն էր դեպի արտաքին աշխարհ: Բացի դրանից հենց Վրաստանի տարածքով էր անցնում Հայաստանի տնտեսությունը կապույտ վառելիքով ապահովող միակ գազատարը:

1992 թ. հունիսին երկու երկրների միջև կնքվեց դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին համաձայնագիր՝³:

Հայ-Վրացական միջաետական հարաբերությունների կայացման պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի 1991-1992 թթ. ընդգրկող ժամանակահատվածը, երբ Վրաստանը բառացիորեն գալարվում էր իշխանական զգնաժամի ծրաններում և կարողացավ խուսափել քաղաքացիական պատերազմից գերազանցապես Հայաստանի միջնորդական առաքելության շնորհիվ⁴:

Հայ-Վրացական հարաբերություններին որոշակի լարվածություն էին հաղորդում վիրահայության ազգային, մշակութային, կրթական և մի շարք այլ բնագավառներում առկա իմանականությունը: Նորանկախ երկու պետությունների փոխհարաբերություններում հատկապես կարևորություն էր ծեռք բերել Զավախիք խնդիրը⁵:

ՀՀ իշխանությունների կողմից ծեռնարկվեցին արնատական միջոցառումներ վրաց-արխազական պատերազմական գոտում հայտնված հայ բնակչությանը անհրաժեշտ օգնություն կազմակերպելու նպատակով⁶: Հայ-Վրացական հարաբերություններն այդ ժամանակաշրջանում իմանականում զարգանում էին փոխադարձ բարյացականության մթնոլորտում: Հաճախ էին երկու պետությունների դեկավարների, կառավարա-

¹ Մելքոնյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002, էջ 260:

² Հայաստանի վիճակագրական տարեգիր (1999-2000), Եր., 2001, էջ 467:

³ ՀԱԱ, ֆ. 326, ց. 9, գ. 19, թ. 3, Հայաստանի Հանրապետություն, 18 հուլիսի 1992 թ.:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 1, 4, 8, 11, 14, 16, 17, 21 հունվարի 1992 թ.:

⁵ Սարգսյան Կ., Սամցիշ-Զավախիք-Թուեխիք Հայաստանի Հանրապետություն-Վրաստան հարաբերությունների համատեքստում (1980-ական թթ. վերջ – 2003 թ.), Պատմ. գիտ. թեկնածուի գիտական աստիճանի հայցման աստեղության տերմագիր, Եր., 2010, էջ 24:

⁶ Հայաստանի Հանրապետություն, 3, 4 սեպտեմբերի 1992 թ.:

կան, խորհրդարանական պատվիրակությունների, միջևորհրդարանական հանձնաժողովների և այլ փոխայցելությունները, որոնց ընթացքում կայացվում էն փոխհարաբերությունների զարգացումը խթանող կարևոր շատ համաձայնություններ¹:

Հայաստանի և Վրաստանի միջև փոխգործունեության գործեր բոլոր ոլորտներն ընդգրկող բավականին ծավալուն իրավական դաշտը 2001 թ. աշնան դրությամբ բաղկացած էր շուրջ 76 տարրեր բնույթի միջամտական, միջկառավարական և միջգերատեսչական պայմանագրերից ու համաձայնագրերից²:

Հայաստանի անկախության վերականգնումից հետո բավականին բարեհաջող ձևով սկսվեցին և շատ էության միայն վերընթաց կորագործվ շարունակեցին զարգանալ հայ-իրանական հարաբերությունները:

Քաղաքական առունով Իրանի հետ համագործակցությանը մեծապես նպաստում էր ի սկզբան Ղարաբաղի հարցի արդարացի լուծման կապակցությամբ՝ նրա ցուցաբերած դիվանագիտական ակտիվությունը:

1992 թ. հայ-իրանական միջամտական կապերի ծևավորման և զարգացման առունով չափազանց արդյունավետ էր³: Կարգած համաձայնագրերով զարկ տրվեց համագործակցությանը տնտեսական և գիտատեխնիկական բնագավառներում⁴:

Երկու երկրների միջև նախապես կայացված պայմանավորվածությամբ Սեղորու շրջանի Ազգարակ ավանի մոտ 1992 թ. մայիսի 6-ին բացված Հայաստանի Հանրապետությունը և Իրանի Խորհրդական Հանրապետությունը միմյանց կապող նավակամուրջը⁵ հայ-իրանական համագործակցության ծավալմանը նպատակամղված միջպետական համաձայնությունների առաջին ներշնչող արդյունքներից էր:

Իրանական կողմից դեպի Հայաստան բացի եներգակիրներից, ներկրվում էն նաև թերթեր, քիմիական, սենոդի, պարսկական արդյունաբերության արտադրանքների բավականին մեծ տեսականի: Ժամանակավոր կամրջի գոյության պարագայում երկու երկրների միջև ապրանքաշրջանառությունը 4 տարվա ընթացքում ավելացել էր շուրջ 15 անգամ⁶, Արաքսի մշտական կամրջի շահագործումից 4 տարի անց միայն 2000 թ. ընթացքում ցանքային ճանապարհով Իրանից Հայաստան էն տեղափոխվել մոտ 51 հազար տոննա միայն եներգակիրներ, որը մոտ 114 անգամ ավել էր, քան 1992 թ. Պարսկաստանից ներկրված բոլոր տեսակի ապրանքների ընդհանուր ծավալը⁷:

Իրանի Խորհրդական Հանրապետությունից Հայաստան ամենաբազմատեսակ թերթների ներկրման ծավալները կտրուկ մեծացան 1996 թ. հունվարին Արաքս գետի վրայով երկու երկրների միջև հիմնավոր կապ ապահովող մշտական կամրջի շահագործմանը⁸:

Երկու երկրների առևտուրատնտեսական հարաբերությունների վերընթաց գործ զարգացմանը մեծապես նպաստում էն այդ նպատակով ծևավորված ինչպես տեղա-

¹ Հայաստանի Հանրապետություն, 6 հունիսի, 18 հուլիսի 1992 թ., 20 մայիսի, 16 հունիսի, 2 սեպտեմբերի, 20 նոյեմբերի 1993 թ., 15 փետրվարի, 5 հուլիսի 1994 թ., 15 օգոստոսի 1995 թ., 16 հունվարի, 5 հունիսի, 11 դեկտեմբերի 1996 թ., 22 փետրվարի, 6 մայիսի, 21 նոյեմբերի 1997 թ., 2 մայիսի, 7 հուլիսի, 26 սեպտեմբերի 1998 թ., 30 մարտի, 30 սեպտեմբերի 1999 թ., 10 մարտի 2000 թ., 24 հոկտեմբերի 2001 թ.:

² Նոյեն տեղում, 23 հոկտեմբերի 2001 թ.:

³ ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, գ. 235, թ. 1-6:

⁴ Նոյեն տեղում, ֆ. 326, գ. 9, գ. 51, թ. 2-4:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 8 մայիսի 1992 թ.:

⁶ Նոյեն տեղում, 5 մայիսի 1995 թ.:

⁷ Մեքումյան Ս., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002 թ., էջ 236:

⁸ Հայաստանի Հանրապետություն, 11 հունվարի 1996 թ.:

կան, այնպես էլ միջամտական կառուցները¹:

1995 թ. սկզբունքային պայմանագրով լրաբանական համարական հարաբերություններ ձեռք բերվեցին Իրան-ՀՀ օագամուղի կառուցնան, ինչպես նաև Երկու երկրների միջև էլեկտրահաղորդման բարձր լրավածության գիծ անցկացնելու վերաբերյալ²: Գազամուղի շինարարության մասին վերջնական պայմանագիրը Երկու երկրների միջև կնքվեց 1997 թ., իսկ ինչ վերաբերում է Իրան-Հայաստան էլեկտրահաղորդման գիծի, ապա նրա կառուցումը ավարտվեց ռեկորդային կարծ ժամանակահատվածում՝ 1997 թ. սկզբներին: Միջամտական համագործակցության տպավորիչ արդյունքները ոգևորում էին կողմերին նոր, ավելի մասշտաբային ծրագրեր մշակելու գործում: 2001 թ. Ասկվել էին Արաքսի վրա համատեղ ուժերով կառուցվելիք 75 մվտ հզրությամբ հիդրոէլեկտրակայանի նախագծային աշխատանքները, որը հրականացնում էր հայ-իրանական նորաստեղծ ձեռնարկությունը³:

Անկախացումից հետո բավականին հակասական հարաբերություններ ձևավորվեցին Թուրքիայի հետ: Ըստ Էրևան Թուրքիայի հետ Հայաստանի ուղղակի հարաբերությունների զարգացումը հանգեցրեց դրանց սրմանը: Այդ ամենի պատճառները պետք էր որոնել պատմական անցյալի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության առումով Թուրքիայի բռնած բացահայտ հակահայկական դիրքորոշման մեջ:

Բնութագրելով նախնական փուլում հայ-թուրքական հարաբերությունները՝ չի կարելի չհանգել այն հետևողականը, որ ՀՀ իշխանությունների որոշ շրջանակներ տարված նորարարական հովերով, որն ուներ նաև իր օրենսդիր հիմքերը, հաճախ փորձում էին անտեսել պատմական փորձը, տուրք էին տալիս դրսից ներարկվող կարծեցյալ հրատեսական գաղափարներին⁴:

Ղարաբաղում ադրբեջանցինների կրած խոշորանասշտար պարտությունները հանգեցրել էին նրան, որ Անկարան իրաժարվել էր ավելի վաղ, գոնե առերևույթ, որդեգրած չեղորությունից և սկսել Հայաստանին ուղղված կոչերի ձևով ուղղակի սպառնալիքներ տեղայ Վերջինիս վրա⁵:

Հայաստանի նկատմամբ Թուրքիայի իրական նպատակադրումները ի հայտ եկան, հատկապես, երբ թուրքական իշխանությունները որդեգրեցին Եվրոխորհրդին ու Եվրոպայի անվտանգության և հանգործակցության խորհրդին ՀՀ անդամակցությունը խնդրութելու հետևողականորեն իրականացվող քաղաքականությունը⁶: Հայ-թուրքական տնտեսական փոխհարաբերությունները սկզբնական շրջանում ակտիվորեն էին զարգանում հատկապես Ալաջյան տնտեսական համագործակցության (ՍՕՏՀ) կազմակերպության շրջանակներում⁷: Քաղաքական բնույթի ցանկացած ձևաչափերով հայ-թուրքական առնչությունները ամենավճռական պահին Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացվուի քաղաքական պահանջների արդյունքում մտնում էին փակուղությունը⁸:

Հայաստանի և Թուրքիայի միջամտական հարաբերությունները կրում էին անուղղակի բնույթ և հիմնվում էին բացառապես ՀՀ անկախության ճանաչման մասին Թուրքիայի հայտարարության և ՍԱԿ-ի ու ԵԱՀԿ-ի իրավապայմանագրային համակարգի վրա⁹: Հայ-թուրքական տնտեսական առնչությունները ամենավճռական պահին Թուրքիայի հայտարարությունը պահպանվում էին Երկու երկրնե-

¹ Հայաստանի Հանրապետություն, 18 սեպտեմբերի 1996 թ.:

² Նոյեմ տեղում, 19 մայիսի 1992 թ., 7 մայիսի 1995 թ.:

³ Նոյեմ տեղում, 27 ապրիլի 2001 թ.:

⁴ Սարդարյան Կ. Պետական սկիզբ և ազգային շարունակություն, Եր., 1999, էջ 140:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 12 մայիսի 1992 թ.:

⁶ ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 44, թ. 6:

⁷ Հայաստանի Հանրապետություն, 21 օգոստոսի 1993 թ.:

⁸ ՀԱԱ, ֆ. 113, գ. 168, գ. 190, թ. 1, գ. 338, թ. 1, ֆ. 326, գ. 9, գ. 70, թ. 10-11, գ. 44, թ. 5-8:

⁹ Նոյեմ տեղում, ֆ. 326, գ. 9, գ. 70, թ. 10, Հայաստանի Հանրապետություն, 26 հունիսի 1992 թ.:

ոի որոշակի գործարար շրջանների նախաձեռնությամբ:

Թուրքիայի որդեգրած կեցվածքի պատճառով քննարկվող ժամանակահատվածում երկու երկրների միջև փոխհարաբերությունները աննշան չափով անգամ չնեղմացրեց 2001 թ. ամսանը հայ-թուրքական հաշտեցման հանատեղ հանձնաժողովի ստեղծումը¹:

Ենթագույն հիմքերորդ - Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների ձևակիրման գործընթացի առանձնահատկությունները:

Հայ-ամերիկյան հարաբերությունները ՀՀ անկախությանը հաջորդած առաջին տասնամյակում դիմանմիկ զարգացում էին ապրում: Միացյալ Նահանգների քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ առավելապես պայմանավորված էր ԱՄՆ-ի ռազմավարական հետաքրքրությամբ անբողոք անդրկովկայացած տարածաշրջանի հանդեպ²: 1992թ. երկու երկրների միջև ստորագրվեց ժողովրդական դիմանագիտության բնագավառի կարևոր փաստաթուղթ, որով նախատեսվում էր, աշխարհի շատ երկրների նման, Հայաստանում և ԱՄՆ խաղաղության կորպուսի գործունեությունը մինչև 2001 թվականը հանրապետությունում աշխատել էին 260 կամավորներ³:

Հայաստանի Հանրապետության և ԱՄՆ-ի միջև զարգանում էին գիտակրթական բնույթի հումանիտար կապերը⁴:

Միացյալ Նահանգները արցախյան հակամարտության ծավալման հենց նախնական շրջանից զգալի գործունեություն էր ծավալել, այդ հնդրին խաղաղ և արդարացի լուծում տալու նպատակով համաշխարհային հանրության ջանքերին աջակցելու ուղղությամբ, որպես Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահող երկիր ԱՄՆ-ը ամենակատիվ կերպով անմիջականորեն ներգրավվել էր հայ-ադրբեջանական հակամարտության վերջնական կարգավորման աշխատանքներին:

Զափազանց կարևոր էր նորանկախ Հայաստանում տնտեսության կայացման նպատակով ԱՄՆ-ի տարրեր պետական ու հասարակական հաստատությունների ցուցաբերած մասնագիտական օգնությունը⁵:

Հայ-ամերիկյան հարաբերությունների խորացման շրջանում ավելի էին աշխուժացել գործնական կապերը երկու երկրների կառավարությունների, խորհրդարանների, առանձին գերատեսչությունների միջև և այլն⁶: Տաճան բավականին կայուն տիպի փոխհարաբերությունների արդյունքում երկու երկրների միջև կայացվում էին նրանց շահերով պայմանավորված համաձայնություններ միջայտական հարաբերությունների բոլոր բնագավառներում:

Հայաստանի տնտեսության մեջ ուղղակի ներդրումների արդյունով առաջատար տեղի է մեկը պատկանում էր Ամերիկայի Միացյալ Նահանգներին⁷: Միացյալ Նահանգները Հայաստանում ներդրում էր անում, հիմնականում, էներգետիկայի, ինֆորմացիոն

¹ Ազգ, 3 հոկտեմբերի, 2001 թ.:

² Հայաստանի Հանրապետություն, 26 հուլիսի 1997 թ., 31 մարտի 1999 թ., ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 9-10:

³ ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 139, թ. 1-10:

⁴ Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001, Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Եր., 2001, էջ 12:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 24 սեպտեմբերի 1991 թ., 22 սեպտեմբերի 1992 թ., 1 մարտի 2000 թ.:

⁶ Սույն տեղում, 15 հոկտեմբերի 1993 թ.:

⁷ Սույն տեղում, 3 նոյեմբերի 1995 թ., 2, 30 հոկտեմբերի 1996 թ., 26 մայիսի, 6 հոկտեմբերի, 14 նոյեմբերի 1998 թ., 10 մարտի, 6 ապրիլի, 22 մայիսի, 2 հուլիսի, 10 օգոստոսի, 29 սեպտեմբերի 1999 թ., 27 հունվարի, 16 նոյեմբերի 2000 թ.:

⁸ Մերժումյան Ա., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2000, էջ 257-258:

տեխնոլոգիաների, գյուղատնտեսության և սննդի մշակման, գրոսաշրջության բնագավառներում¹:

1992-2001 թթ. Միացյալ Նահանգների կողմից Հայաստանին տրամադրված մարդասիրական օգնության ընդհանուր ծավալը դրամական արժեքով կազմել է 810 մլն դրամ²:

Հայ-ամերիկյան տնտեսական կապերի համակարգման շնորհիվ շեշտակիորեն աճել էր նաև երկու երկրների միջև առևտորաշրջանառությունը: Այսպես 2001 թ. ԱՄՆ-ը Հայաստանի հետ առևտորաշրջանառության ոլորտում երկրորդն էր՝ Պուտաստանից հետո³:

Ենթագույն վեցերորդ - Նորանկախ Հայաստանի միջանտական կապերի բնույթը Արևմտյան Եվրոպայի և աշխարհի մի շարք այլ երկրների հետ:

Հայաստանի անկախությունը, որն իր հետ բերեց նրա, որպես միջազգային սուբյեկտի ծանաչում, ՀՅ առաջ բացեց ռեալ հնարավորություններ երկողմանի փոխհարաբերությունների հաստատման համար Եվրոպական պետությունների հետ՝ վերջնական նպատակ ունենալով ինչպես բազմաբնույթ կապերի հաստատումն այդ երկրների հետ, այնպես էլ ինտեգրումը հին աշխարհի քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ բնույթի կառույցների ու մեխանիզմների մեջ⁴:

Եվրոպայի առաջատար երկրների հետ փոխհարաբերությունները կառուցվում էն հայ ժողովրդի ազգային շահերից բխող տարրեր ակնկալիքների տեսանկյունով: Երկրներից մի մասի հետ Հայաստանի Հանրապետությունը առաջին պլան էր մոլել քաղաքական հարաբերությունները: Ֆրանսիայի հետ Հայաստանի կապերն այդ հարթության վրա առավել խոր էին փոխընթանան և համագործակցության առօսնով:

Հարդ է նշել, որ բոլոր ոլորտներում Ֆրանսիայի հետ փոխհարաբերությունների ձևավորմանն ու հետագա զարգացմանը մեծապես նպաստեցին երկու երկրների իշխանությունների միջև ձևավորված ամենասերտ հարաբերությունները⁵:

Ֆրանսիան, ի թիվս նորանկախ ՀՅ-ի բարեկամ այլ երկրների, լրջագույն ներդրում ունեցավ Հայաստանի՝ ՍԱԿ-ին, ԵԱՀԿ-ին և Եվրոպայի խորհրդին ու միջազգային այլ հեղինակավոր կառույցներին անդամակցության հարցում: Ֆրանսիական Հանրապետությունը, որպես Մինսկի խմբի համանախագահող երկիր, խնդրո առարկա ժամանակահատվածում լուրջ ջանքեր էր ներդրում Արցախի խնդրի արդարացի լուծման ուղղությամբ: Չափազանց մեծ էր Ֆրանսիայի դերակատարությունը նաև հայոց ցեղասպանության հարցի միջազգայնացման գործընթացում⁶ և այլն: Խնդրո առարկա ժամանակահատվածում հատկապես սերտ էին նաև հայ-ֆրանսիական մշակութային կապերը⁷:

Գերմանիայի հետ փոխհարաբերություններն առավելացես տնտեսական բնույթի էն: Գերմանական կազմակերպությունները մարզային, շրջանային մակարդակներով Հայաստանում իրականացնում էին մի շարք ծրագրեր՝ ուղղված կանանց աշխատանքով պահանջմանը, պարենային օգնության տրամադրմանը և այլն: Հաջող էին զարգանաւում նաև միջանտական մշակութային կապերը⁸: Գործում էր Գերմանիայի և Հայաստան

¹ Հայաստանի Հանրապետություն, 28 օգոստոսի 1999 թ.:

² Միացյալ Նահանգների օգնությունը Հայաստանին 1992-2001 թթ. Նվիրումի և համագործակցության տասնամյակ, Եր., 2001, էջ 15:

³ Սարկոսյան Ա., Հայկերոյան Դ., Նազարյան Գ., Հայաստանը միջազգային տնտեսական հարաբերությունների համակարգում, Եր., 2002, էջ 124:

⁴ ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 11-13:

⁵ Հայաստանի Հանրապետություն, 13, 16, 17 մարտի 1993 թ., 12, 14 հունիսի 1996 թ., 1, 5 հուլիսի 2000 թ.:

⁶ Նույն տեղում, 22 հունիսի 1994 թ.:

⁷ Նույն տեղում, 29 հոկտեմբերի 1993 թ., 19 հուլիս 2000 թ., ՀԱԱ, ֆ. 113, գ. 177, գ. 78, թ. 1-2:

⁸ Հայաստանի Հանրապետություն, 18 սեպտեմբերի 1996 թ.:

Ծի միջև կնքված մշակութային համաձայնագիրը, որի կենսագործման նպատակով ակտիվ աշխատանքներ էր տանում միջգերատեսչական խաղը հանճնաժողովը: Աշխուժացել էին երկու երկրների գործարար շրջանների ներկայացուցիչների փոխայցելությունները, անրաբնադրում էին երկու երկրների տնտեսական բնագավառները դեկավարող պետական օդակների միջև կապերը, կնքվում էին առևտորաշրջանառությանը, ներդրումներին, ֆինանսական և այլ ոլորտներին վերաբերող փոխահամապետ պայմանագրեր¹: ՀՀ և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև կայուն էին նաև քաղաքական հարաբերությունները: Գերմանիան ակտիվորեն աջակցում էր Հայաստանի եւրոկառույցներին անդամակցությանը, հասարակական կյանքի ազատականացման ուղղությամբ ՀՀ-ում ընթացող գործընթացներին և այլն²:

Շոշափելի արդյունքներ էին արձանագրվում նաև աշխարհի մյուս երկրների հետ ՀՀ հարաբերություններում:

Հասարակական հարաբերությունների բոլոր հիմնական ոլորտներում հատկապս ակտիվ փոխարարերություններ էին հասատվել Սիրիայի, Հունաստանի, Բուլղարիայի, Ռումինիայի, Չինաստանի, Լիբանանի, Կիպրոսի³ և այլ երկրների հետ: Հայաստանի Հանրապետության և Սիրիայի Արաբական Հանրապետության միջև ծավալվել էր լուրջ երկխոսություն փոխգործումներության բոլոր ոլորտներում⁴: 1992-2001 թթ. Հայաստանի և Սիրիայի միջև ստորագրվել էին թվով 8 կարևորագույն տնտեսական բնույթի համաձայնագրեր⁵:

Ավանդաբար սերտ էին նաև փոխգործումներության դարավոր պատմություն ունեցող հայ-հունական հարաբերությունները⁶:

Չինաստանի հետ Հայաստանի փոխարարերությունները կառուցվում էին ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական կայուն շահերի ընդհանրության վրա: Հայ-չինական հարաբերությունների ներկապնակը այդ հմաստով օտար երկրների հետ ՀՀ փոխարարերությունների համակարգում ամենաբազմակողմաններից մեկն էր՝ տնտեսական, քաղաքական, գիտատեխնիկական, մշակութային, առողջապահական ու կրթական ոլորտներ⁷ և այլն: Հայ-չինական հարաբերություններում գերակշռողը տնտեսական համագործակցությունն էր, որը ներառում էր ոչ միայն առևտորաշրջանառությունը,

¹ ՀԱԱ, ֆ. 113, գ. 168, գ. 251, թ. 1-2, Հայաստանի Հանրապետություն, 22 դեկտեմբերի 1995 թ., 2 օգոստոսի 1996 թ., 9 հունվարի 2000 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 16, 7 հուլիսի 1997 թ., էջ 30, Հայաստանի Հանրապետություն, 8 հուլիսի 1998 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 4(37), 24 փետրվարի 1998 թ., Հայաստանի Հանրապետություն, 19 հունվարի 2000 թ., Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 25 (123), 31 հոկտեմբերի 2000 թ., էջ 14, Հայաստանի Հանրապետություն, 6 հոկտեմբերի 2001 թ.:

² ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 12, Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 1-2 (1077-1078), հունվար 1995 թ., էջ 13-14, Հայաստանի Հանրապետություն, 26 հուլիսի 2000 թ.:

³ ՀԱԱ, ֆ. 326, գ. 9, գ. 68, թ. 17:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 7 մարտի, 25 ապրիլի, 16 հուլիսի, 1992 թ., ՀԱԱ, ֆ. 113, գ. 168, գ. 139, թ. 1-3, գ. 177, գ. 431, թ. 1-2, Հայաստանի Հանրապետություն, 2 մայիսի 1995 թ., 24 նոյեմբերի 1998 թ.:

⁵ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (1023), 15 հոկտեմբերի 1992 թ., Հայաստանի Հանրապետություն, 18 սեպտեմբերի 1995 թ., Անանյան Լ. Զ., Հայաստանի տնտեսական պատմության ուլուվագծեր, Երևան, 2003, էջ 214:

⁶ ՀԱԱ, ֆ. 113, գ. 167, գ. 210, թ. 1-3, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, № 6 (39), 14 մարտի 1998 թ., էջ 21:

⁷ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 19 (1023), 15 հոկտեմբերի 1992 թ., էջ 83-91:

այլև տնտեսության բնագավառում փոխգործունեության այլ ձևեր, ինչպես օրինակ համատեղ արտադրությունների հիմնում, ներդրումային քաղաքականություն, տեխնոլոգիական պրոցեսների փոխանակում և այլ¹:

2001 թ. տվյալներով գործում էին 50-ից ավելի հայ-լիբանանյան համատեղ ձեռնարկություններ² և այլն: Ըստ էության համանան իրավիճակ էր 2000 թ. տվյալներով Հայաստանի հետ ակտիվ տնտեսական կապեր ունեցող բոլոր 50-55 երկրների³ պարագայում: Համագործակցության Հայաստանի համար հատկապես կարևորություն ներկայացնող ձևերից էր ՀՀ-ին մարդասիրական օգնության տրամադրումը: Միայն 1997 թ. Հայաստանի Հանրապետություն էր ներմուծվել 94,1 մլն ԱՄՆ դոլարի մարդասիրական օգնություն աշխարհի շուրջ 30 երկրներից⁴:

Հարաբերություններուն ակտիվ կերպով զարգանում էին նաև Հայաստանի և արտասահմանի փոխգործունեության տնտեսական զարգացումների առանցքը կազմող ներդրումների բնագավառում: Այսպես, 1998-2000 թթ. ընթացքում ՀՀ տնտեսության ամենատարեր ոլորտներում դրսից կատարվել էին 550 մլն դոլարի ներդրումներ⁵:

Ենթագոյն յոթերորդ - Միջազգային կառույցներին Հայաստանի անդամակցության գործընթացը:

Անկախացման տարում Հայաստանի Հանրապետությունը, իրականացնելով միջազգային հարաբերություններում սուբյեկտայնության իր իրավունքը, անմիջապես ձեռնամուխ եղավ համաշխարհային հանրության մեջ ներգրավվելու ուղղությամբ վճռական քաղաքական քայլերի, որոնք նախ և առաջ դրսելու միջազգային հեղինակավոր կառույցներին անդամակցելով և համաշխարհային համագործակցության մեջ ներգրավվելու նպատակով միջազգային իրավական դաշտին միանալուն միտված պետական ակտերով:

1992 թ. մարտի 2-ին և յու Յորբում, Միավորված ազգերի կազմակերպության Գլխավոր ասամբլեայի 46-րդ նստաշրջանում Հայաստանի Հանրապետությունը միաձայն ընդունվեց ՄԱԿ-ի անդամ⁶:

1992 թ. մայիսից Հայաստանը ՄԱԿ-ում ունեցավ իր մշտական ներկայացուցիչը⁷: Ըստ նախապես կնքված հանաձայնագրերի՝ 1992 թ. դեկտեմբերին ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվական վարչությունն ու Զարգացման ծրագիրը ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի լիազորությամբ Երևանում հիմնադրեցին Միավորված ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակը⁸:

Անգնահատելի էր խնդրո առարկա ժամանակահատվածում, հատկապես հասարակական-քաղաքական ու տնտեսական ոլորտներում արմատական հեղարեկուում իրականացնող Հայաստանում, Միավորված ազգերի կազմակերպության խաղացած քացառիկ դերը: Միավորված ազգերի կազմակերպության հիմնական ֆինանսական օդակների՝ Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային քանակի հետ Հայաստանի Հանրապետության համագործակցությունը սկսվել էր տակավին այդ կառույցների մեջ

¹ Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր № 33 (165), 3 հոկտեմբերի 2001 թ., էջ 28:

² Հայաստանի Հանրապետություն, 4 մայիսի 2001 թ.:

³ Մելքոնյան Ա., Հայաստանի Հանրապետության արտաքին տնտեսական կապերը, Եր., 2002, էջ 248:

⁴ Հայաստանի Հանրապետություն, 7 մայիսի 1998 թ.:

⁵ Սույն տեղում, 18 նոյեմբերի 2000 թ.:

⁶ Սույն տեղում, 3 մարտի 1992թ., Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Եր., 2003, էջ 9-10:

⁷ Հայաստանի Հանրապետություն, 7 մայիսի 1992 թ.:

⁸ Միավորված ազգերի կազմակերպությունը Հայաստանում, Եր., 2003, էջ 10, 132, Հայաստանի Հանրապետություն, 12 հունիսի 1992 թ.:

Աերգրավվելու նախնական շրջանից¹:

1990-ակամների կանոնադրության արտերկրից տրամադրված բոլոր վարկերի 60 տոկոսը կազմում է հարաբերական վարկերը².

ՍԱԿ-ին ՀՀ անդամակցության հետո Միավորված ազգերի կազմակերպությունը ակտիվության արձագանքում է ՀՀ նորանկախ Հայաստանի համար ամենակարևոր հիմնախնդրին Աղրբեջանի ծեռնարկած ազրեփայի արդյունքում ծագած, հայ-աղրբեջանական առճակատմանը, Արցախում ծավալված իրադարձություններին³:

Հայաստանը անկախացման սկզբից և առ իր արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրներից էր համարում ՀՀ ինտեգրումը Եվրակառույցներին: Եվրոպական տարածաշրջանային կառույցների հետ համագործակցությունը անշուշտ նաև կնպաստեր Հայաստանի առջև այդ շրջանում ծառացած շատ հիմնախնդիրների լուծմանը, կապահովեր ՀՀ-ի հետազ անշեղ զարգացումը բոլոր բնագավառներում: Այդ առումով անկախ Հայաստանի ինքնիշխանության հաստատման կարևորագույն ծերթերումներից էր 1992 թ. հունվարին ՀՀ անդամակցումը Եվրոպայի անվտանգության և համագործակցության խորհրդակցությանը⁴:

Նենց ԵԱՀԽ ծևաչափով էլ ստեղծվեց Արցախյան հիմնախնդրի լուժման հիմնական կառույցը՝ Մինսկի հանձնաժողովը⁵:

Հայաստան-Եվրոպա համագործակցությունը փաստորեն ընթանում էր 4 հիմնական ուղղություններով, Եվրոպական խորհրդի հետ՝ ՀՀ-ում ազատական օրենսդրական դաշտի ծևափորման բնագավառում, տնտեսական վերափոխումների ոլորտում հին աշխարհամասի հետ համագործակցությունը իրականացվում էր Եվրամիության միջոցով, քաղաքականության բնագավառում՝ ԵԱՀԿ-ում Հայաստանի մասնակցությամբ ասպարեզում ՆԱՏՕ-ի շրջանակներում «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրի միջոցով:

Հայաստանը անկախացումից անմիջապես հետո ամենապակտիվ գործումներուն էր ծավալել Եվրոպայի խորհրդին անդամակցելու ուղղությամբ⁶:

Կառույցին Հայաստանի պաշտոնական ինտեգրումը ապահովելու նպատակով մինչև 2000 թ. Եվրախորհրդի և ԵԽ խորհրդարանական վեհաժողովի գեկուցողները, Հայաստան կատարած աշխատանքային գործուղումների արդյունքում, պատրաստել էին 15 պաշտոնական գեկույց՝:

Անկախության և պետական ինքնիշխանության ամրապնդման ուղղվ ընթացող Հայաստանի Հանրապետության պատմության մեջ մեծագույն ձեռքբերում էր 2001 թ. հունվարի 25-ին ՀՀ պաշտոնական լիիրավ անդամակցումը Եվրոպայի խորհրդին⁸:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, խնդրու առարկա ժամանակահատվածում, ակտիվության համագործակցում էր նաև համաշխարհային ու տարածաշրջանային տնտեսական, քաղաքական բնույթի այլ կառույցների հետ:

¹ Հայաստանի Հանրապետություն, 23 սեպտեմբերի 1992 թ., 1 մայիսի 1993 թ.:

² Սույն տեղում, 9 դեկտեմբերի 1995 թ.:

³ Սույն տեղում, 29 հունվարի, 5, 10 մարտի 1992 թ.:

⁴ Սույն տեղում, 1 փետրվարի 1992 թ.:

⁵ Սույն տեղում, 26 մարտի 1992 թ., ՀԱՍ, ֆ. 326, գ. 9, գ. 47, թ. 20-23:

⁶ Հայաստանի Հանրապետություն, 27 հունվարի 1996 թ.:

⁷ Սույն տեղում, 15 մարտի 2000 թ.:

⁸ Սույն տեղում, 26 հունվարի 2001 թ.:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՄԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԳՈՐԾՎՄԱՑԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿԵՆՍԱԿԱՆ ԸՆՔԵՐԻ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՄԱՐԱՐ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՊԱՀՏԾՊԱՆՈՒԹՅԱՎ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԵՆՔԱԳՈՒԽԱ ԱՐԱՋԻՆ - Նորանկախ հայկական պետականությունը, որին արցախահայության արդարացի պայքարի հաջողության վճռողոշ նախապայման:

Ղարաբաղյան շարժումը հայ ժողովրդի նորօրյա պատմության մեջ ազգային ինքնիշխանության հաստատման համար ամենածավալուն պայքարի բացահիկ դրսևորում է: Լեռնային Ղարաբաղի համար պայքարը, հայ ժողովրդի արմատական շահերից բխող Արցախյան հիմնախնդրի բարձրածայնումը հայոց ազգային անկախության նվաճնան ուղղու սկիզբն էր:

Հանուն իր անկախության պահպանման և ամրապնդման արցախահայերի պայքարում վճռորոշ էր արդեն նորանկախ Հայաստանի՝ որպես միջազգային հարաբերությունների լիիրավ սուլեկտի դերակատարությունը: Տեղի էին ունենում ԵԱՀՆ պատվիրակությունների գործնական հանդիպումները Հայաստանի իշխանությունների հետ¹: Բացի այդ, հայկական կողմը, օգտագործելով իր նասնակցությունը միջազգային աւայանների գործունեությանը, բազմից նրանց առջև բարձրացնում էր արցախյան հարցի արդարացի լուժնանն աջակցելու խնդրը²: Հանդիսանալով կայանալիք Սինծուկի կոնֆերանսի մասնակից պետություն՝ Հայաստանը, փաստորեն օգտագործում էր իր ինքնիշխան երկրի մանդաստը կոնֆերանսի նախապատրաստական շրջանում հայ ժողովրդի արմատական շահերը ներկայացնելու և պաշտպանելու գործում³: Նորանկախ Հայաստանը իր ազատության համար նարտնչող Արցախին բնականարար աջակցում էր ամեն ինչուք: ՀՅ կառավարության 1992 թ. որոշմամբ ԼՂՀ-ին բոլոր կարգի օգնությունների իրականացումը կանոնավորելու նպատակով այդ գործի կազմակերպումն ու իրականացումը հանձնարարվել էր ՀՅ հատուկ ծրագրերի պետական վարչությանը⁴:

1993 թ. մարտին Հայաստանի վարկային եմիսիայի ընդհանուր ծավալից ԼՂՀ պետական բյուջեին լրացուցիչ ֆինանսավորման նպատակով հատկացվել էր 98 մլն ռուբլի⁵ և այլն:

1992 թ. ընթացքում Արցախի ինքնապաշտպանության շարքերում մարտնչած ավելի քան 7 հազար զինվորների զգալի մասը Հայաստանում ծևավորված երկրապահ կամավորական ջոկատների ազատամարտիկներ էին⁶, իսկ 1993 թ. գարնանից Լեռնային Ղարաբաղում մարտնչում էր արդեն ծևավորված միասնական հայոց բանակը, որի բաղկացուցիչ մասերն էին Հայաստանի Հանրապետության և ԼՂՀ-ի զինված ուժերը⁷:

Սակայն, այնուամենայնիվ, արցախյան խնդրի լուժնան ռազմավարական և հատկապես մարտավարական հարցերում Հայաստանում ու մասնավորապես նրա իշխանական օղակներում առկա էին լորջ տարակարծություններ: Ժողովրդական ամենալայն զանգվածների ճնշման տակ ՀՅՇ-ական իշխանությունները ստիպված էին իրենց գործողություններում հաշվի առնել ազգային կենսական շահերը:

Արցախի Հանրապետությանը սատարող Հայաստանի Հանրապետության համար մի նոր փորձություն էր 1993 թ. դեկտեմբերի 18-ից ԼՂՀ-ի վրա Ադրբեյջանի կողմից իրա-

¹ Հայաստանի Հանրապետություն, 19 փետրվարի, 24 մարտի, 28 ապրիլի, 1, 6, 12, 14, 23, 26 մայիսի 1992 թ.:

² Նոյեն տեղում, 20, 24 մարտի, 13 մայիսի 1992 թ.:

³ Նոյեն տեղում, 6 մարտի, 14 հուլիսի, 4 օգոստոսի 1992 թ.:

⁴ ՀԱԱ, ֆ.113, գ.168, գ. 76, թ. 1-2:

⁵ Նոյեն տեղում, ց. 169, գ. 77, թ. 1-2:

⁶ Հայաստանի Հանրապետություն, 30 հունիսի 1992 թ.:

⁷ Արտահամյան Հ., Մարտնչող Արցախը 1917-2000. գիրք Գ. 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 456-457:

կանացված լայնածավալ հարձակումը¹: Հայկական ուժերի վճռական դիմադրությունը հարկադրեց մեծ կորուստներ տված ադրբեջանական կողմին 1994 թ. մայիսին ստորագրել կրակի դադարեցման մասին համաձայնագիրը²: Զինադարձարից հետո Հայաստանի իշխանությունների գլխավոր մտահոգությունը հաշտության պայմանագրի, Արցախի կարգավիճակի հարցերն էին:

1996 թ. դեկտեմբերին ԵԿՀԿ Լիսարոնյան զագարնաժողովում Հայաստանի Հանրապետության միջազգային հարաբերություններում լիիրավ սուբյեկտայնությունը հնարավոր դարձեց արցախյան հարցի արդարացի լուծնանը սպառնացող վճռի երևան գալում³:

Ղարաբաղյան հարցի արդարացի լուծնան մեջ կենսականորեն շահագրգռված ուժերի իշխանության զայլով եւսկան փոփոխություններ արձանագրվեցին Արցախին սատարելու ուղղությամբ Հայաստանի վարած քաղաքականության մեջ: Ավելի սերտացան կապերը ՀՀ և ԼՂՀ իշխանական կառույցների, հայկական երկու համրապետությունների միջև⁴:

Ենթագույխ երկրորդ - Անկախ պետականությունը ազգային ինքնության հիմնարար արժեքների արմատավորման գործընթացում:

Անկախացումն էլ ավելի մեծացրեց հայ ժողորդի ազգային ինքնավստահությունը՝ հայության գոյատևման մաքարումին հաղորդելով նոր որակ: Իր պետականությամբ ինքնիշխան հայ ազգն իրավունք նվաճեց առանց պայմանականությունների, անարգել, կրկին մերձենալու իր պատմական ակունքներին: Անկախացումից հետո ողջ հայ ժողովուրդը բացառիկ հնարավորություն ստացավ, պետականորեն, արժարժելու իր ինքնության հետ առնչվող բազմաբնույթ հիմնախնդիրները՝ այդ հարբությունում պաշտպանելով հայ ազգի կենսական շահերը: Այդ առումով, բնականաբար, նորանկախ հայկական պետականության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից էր հայ ժողովորդի ենթագիտակցության մեջ արմատավորված, նրա ազգային ինքնության անկապտելի մասը դարձած⁵ հայոց ցեղասպանության հիմնահարցը:

Հայաստանի անկախացմանը անմիջականորեն հաջորդած շրջանում քաղաքական որոշ չարդարացված հաշվարկների արդյունքում, ըստ եւրյան, անուշադրության էր մատնվել իշխանությունների կողմից⁶:

1998 թ. իշխանափոխությունից հետո ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում իրեն արժանի տեղը զբաղեցրեց հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը⁷: Մեծ եղեռնի ճանաչման հարցը երկրի արտաքին քաղաքականության օրակարգային խնդիր դառնալու գործում վճռորոշ էր Հայաստանի Հանրապետության նախագահ Ռ. Քոչարյանի Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում 1998 թ. սեպտեմբերի 25-ին ունեցած ելույթը⁸:

¹ Հայաստանի Հանրապետություն, 20 հունվարի, 1994 թ.:

² Սույն տեղում, 10, 11, 13 մայիսի 1994 թ., 13 մայիսի 1999 թ.:

³ Սույն տեղում, 4 դեկտեմբերի 1996 թ.:

⁴ Սույն տեղում, 28 ապրիլի, 25 դեկտեմբերի 1998 թ., 22 ապրիլի, 12 հոկտեմբերի 1999 թ., 27 հունվարի, 7 մարտի 2000 թ.:

⁵ Գարագաշեան Ա., Տեղապահնության հոգեցնցումն ու ազգային ինքնությունը. Հոգեբանական վերլուծություն, Եր., 2006, էջ 33:

⁶ Լիպարիտյան Ժ., Պետականության մարտահրավերը, Հայ քաղաքական միտքը անկախությունց ի վեր, Եր., 1999, էջ 142, Հայաստանի Հանրապետություն, 29 օգսոստոսի 1991 թ.:

⁷ Անանյան Ա., Հայոց ցեղասպանության գործոնը հայ-թուրքական հարաբերություններում (1991-2004 թթ.). Ալենախոսություն պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար, Եր., 2005, էջ 4:

⁸ Հայաստանի Հանրապետություն, 26 սեպտեմբերի 1998 թ.:

Համաշխարհային հանրության կողմից հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը քնննարկվող ժամանակահատվածում աննախաբեալ առաջընթաց ապրեց: Մարդկության դեմ իրականացված ոճրագրությունը դատապարտվեց Ավստրալիայի⁴, Խոտալիայի⁵, ԱՍՏ-ի⁶ և այլ երկրների խորհրդարանների կողմից⁴:

2001 թ. հունվարի 18-ին Ֆրանսիայի Ազգային ժողովն ընդունեց Հայոց ցեղասպանության ճանաչման մասին օրինագիծ, որով փաստորեն Ֆրանսիան աշխարհում առաջնորդ օրենքի տեսքով ճանաչեց 20-րդ դարի սկզբին Օսմանյան Թուրքիայում իրականացված հայերի ցեղասպանությունը⁵ և այլն:

Տակավին անկախացման ուղին դեռևս նոր որդեգրած Հայաստանի համար հայ ժողովորդի պատմականորեն ծևավորված, ազգային ինքնության վերահաստատման թերևս ամենակարևոր խնդիրներից էր հայոց լեզվի հարցը:

Հանրապետությունում ինչպես լեզվական քաղաքականության, լեզվավիճակի և լեզվահարաբերությունների, այնպես էլ խորբային առումով անկախ. ինքնիշխան պետականության ամրապնդման գործում չափազանց կարևոր էր ՀՀ Գերագույն խորհրդի կողմից 1993 թ. ապրիլի 17-ին ընդունված «Լեզվի մասին» օրենքը⁶. Օրենքի գործունեության արդյունքում, քննարկվող ժամանակահատվածում, հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում, գրական հայերենը հաստատվեց, որպես միակ պաշտոնական լեզուն: Հանրապետության տարածքում գտնվող կրթական և ուսումնական համակարգերում դասավանդման ու դաստիարակության միակ պետական լեզուն դարձավ հայերենը և այլը:

Ինքնիշխան պետականություն վայելող հայ ժողովուրդը սահմանեց ազգի մեջ զավակների հսկական պաշտամունք: Քննարկվող ժամանակահատվածում հայ հասարակության մեջ ազգի ինքնության վերահստատման առումով առանձնակի նշանակություն էր ձեռք բերել օտար ափերում քաղված արժանավոր, ժողովորդի համար անձնագրային նշանակության հայորդիների՝ հայրենիքում վերահուղարկավորման ինքնարուխ, հանաժողովրդական նախաձեռնությունը: Առաջիններից մեկը հայ ազգի պանծալի զավակ Անդրանիկի աճյունը 2000 թ. Վերահուղարկավորվեց հայրենիքում⁷:

Պատմական գրեթե բոլոր ժամանակահատվածներում ազգային միասնության գաղափարը միշտ է եղել է հայ հասարակության գերակա արժեքներից: Եվ ուրեմն ամենակի էլ պատահական չէր, որ հայաստամյան իշխանությունները ամենակտիվ կերպով ներգրավվեցին հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի էլ ավելի ամրապնդման գործուվ⁸:

Հայ ժողովորդի ազգային ինքնության թերևս ամենակայուն բնագավառներից մեկում կրոնական ոլորտում վիճակը կտրուկ փոխվեց Հայաստանի անկախացումից հետո:

Հայ հասարակության մեջ քրիստոնեական հավատքի նորոգման առումով թերևս

¹ Ավստրալիայի խորհրդարանական քննարկումները Հայոց ցեղասպանության մասին, Խմբ. L. Բարսեղյան, Եր., 2001, էջ 3-6:

² Հայաստանի Հանրապետություն, 21 նոյեմբերի 2000 թ.:

³ Նոյեմ տեղում, 23, 30 սեպտեմբերի, 5 հոկտեմբերի 2000 թ.:

⁴ Բարսեղյան Լ. Ա., Տարեգրություն հայոց ցեղասպանության պաշտոնական դատապարտման և ճանաչման (1915-2003), Եր., 2004, էջ 12-13:

⁵ Բարսեղյան Լ.Ա., Ֆրանսիան Հայոց ցեղասպանությունը օրենսդրությամբ ճանաչած առաջին պետությունն է աշխարհում, Եր., 2002, էջ 86:

⁶ Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի տեղեկագիր, № 8 (1036), 30 ապրիլի 1993 թ., էջ 4-6:

⁷ Հայաստանի Հանրապետություն, 8, 17, 19, 22 փետրվարի 2000 թ.:

⁸ Նոյեմ տեղում, 22 հուլիսի, 11, 28, 31 օգոստոսի, 7, 23, 24, 25, 28 սեպտեմբերի 1999 թ., 28 օգոստոսի 2006 թ.:

ամենակարևոր ու խորհրդանշական իրադարձությունը առանձնակի շուրջով քրիստոնեության ընդունան 1700-ամյա հոբելյանի նշումն էր Հայաստանում:

Եղակացությունների մեջ ի մի են բերված առշատության հիմնական եղահանգումներն ու արդյունքները.

1. Դժվարին էր անկախության հրչակագրի ընդունումից մինչև համաժողովրդական հանրաքվեի միջոցով քաղաքական ինքնիշխանության նվաճումը, Հայաստանի անցած ուղին: Այդ ողջ ժամանակահատվածում Միութենական կենտրոնը կամգ չէր առնում ոչնչի առջև խորհրդային պետության փլուզումը կանխելու համար: Նման պայմաններում հանրապետությունը որդեգրել էր, իրավիճակով պայմանավորված, զգուշավոր քաղաքականություն: Սակայն առավել վճռորոշ պարագաներում, հատկապես անկախության առումով սկզբունքային նշանակության հարցերում Հայաստանը չէր խուսափում կենտրոնի հետ նույնիսկ բացահայտ առձականումից: Վերջապես ՀՅ անկախացման ողջ գործընթացի թագն ու պասկը դարձավ 1991 թ. սեպտեմբերի 21-ին հանրապետությունում անցկացված անկախության համաժողովրդական հանրաքվեն, որից հետո Հայաստանը գործնականում ծեռնամուխ եղավ ԽՍՀՄ-ից դուրս գալու իրավաբարձրական գործընթացին: Ինչպես Հայաստանի, այնպես էլ խորհրդային Միության մյուս հանրապետությունների անկախացումը գորեք անհնարին կդառնար, համենայն դեպս արդեն հայտնի ժամանակահատվածում, եթե ԽՍՀՄ-ի որպես աշխարհաբարձրական իրողության լուծարումը չլիներ միանգամյա ակտ, այնպես, ինչպես որ այն տեղի ունեցավ 1991 թ. դեկտեմբերի 8-ին, հեռավիր 1922 թ. ԽՍՀՄ-ը հիմնադրած, սլավոնական 3 հանրապետությունների ստորագրած փաստաթրոպ:

2. Ըստ եւրյան անկախության հրչակագրի ընդունանը Հայաստանում արդեն սկսվել էր այսպես կոչված «անցումային շրջան», որը ենթադրում էր այն ժամանակահատվածը, որի ընթացքում հանրապետությունում պետք է իրականացվի ենթական քաղաքական, կառուցվածքային և ինստիտուցիոնալ վերափոխումներ, որոնք միտված էին շուկայական տնտեսությամբ ժողովրդավարական հասարակարգի ձևափորմանը, Հայաստանում անկախ պետականության հաստատման գործընթացի կենսագործմանը:

3. Անկախ պետականության հաստատման ուղղով ընթացող Հայաստանը ստիպված էր իր առաջին քայլերը կատարել՝ գտնվելով տնտեսական ծայրահեղ ծանր կացության մեջ: Ստեղծված անմիտիքար իրավիճակն ուներ իր ինչպես օրյեկտիվ, այնպես էլ սուրբեկտիվ պատճառները: Հայաստանի տնտեսության աննախադեպ անկան օրյեկտիվ նախադրյալները կապված էին հիմնականում ԽՍՀՄ-ի փլուզման հետ: Սակայն հանրապետության տնտեսական կացության վատթարացման գործում եական դերակատարություն ունեին նաև բոլոյ տրված սխալներն ու բացթողումները: Անդրադառնալով երեմնի ինդուստրիալ Հայաստանի տնտեսության փոշիացման ծեռակերտ նախադրյալներին՝ անպայման անհրաժեշտ է արձանագրել, որ դրանցում չափազանց մեծ էր քաղաքական շահարկումների դերը:

4. Հայաստանի քաղաքական անկախացման գործընթացի հենց սկզբնական ժամանակահատվածից հանրության մոտ որոշակիացել էր այն համոզումը, որ ազգային լիակատար ինքնիշխան պետականության կայացումը, քաղաքացիական հասարակության ձևավորումը հնարավոր էր միայն շուկայական հարաբերությունների հաստատմանը: Հայաստանում պետական սեփականության մասնավորեցումն անհրաժեշտ էր նաև տնտեսական առումով շուկայական արժեքները դավանող համաշխարհային հանրության մեջ ներգրավելու համար: Հարկ է անպայման նշել, որ սեփականաշնորհման սկզբնական շրջանում գործընթացում շատ էին սխալներն ու բացթողումները, որոնք արդյունք էին իրավական դաշտի անկատարության: Պետական սեփականության մասնավորեցումը վերացնելով ժամանակին Հայաստանի խորհրդայնացման հետևանքով պարտադրված համայնավարական տնտեսակարգը հանդիսացավ անկախ պետակա-

նության հաստատման գործընթացի անհրաժեշտ բաղադրատարրը:

5. Քննարկվող ժամանակահատվածում որոշակի քայլեր կատարվեցին նորանկախ Հայաստանի սոցիալական համակարգի ձևակորման ուղղությամբ: Սասանվորապես տեղի ունեցավ գների ազատականացում: Թեև ճիշտ է, որ այդ քայլը նպատակամղված էր քաղաքական անկախություն վայելող Հայաստանի տնտեսական ինքնիշխանության կայացման ու հետագա անրապնդմանը, սակայն գների ազատականացման աննախադեպ արգածված տեսները, որոնց զգալիորեն գիշում էր տնտեսության նաև նավորեցման գործընթացը, հանգեցրին ՀՀ-ում սոցիալական լարվածության: Ինքնիշխանության ծավալման ուղղվ ընթացող նորանկախ Հայաստանի Հանրապետության կարևորագույն ծեռքբերումներից էր ազգային դրամի ներդնումը: Պատմական նշանակության այդ երևույթը, սակայն իր բացասական ազդեցությունը ունեցավ սեփականաշնորհման գործընթացում այնքան անհրաժեշտ հանրապետության քաղաքացիների մեկնարկային հավասար հնարավորությունների ապահովման վրա: Հանրապետության սոցիալական բնագավառին անմիջականորեն վերաբերող ֆինանսավարկային համակարգի մի մեծ խումբ կարևորագույն ոլորտներում ծեռնարկված քայլերը նպաստեցին նորանկախ Հայաստանի ինքնիշխանության ծավալմանը:

6. Անկախացմանն անմիջապես հաջորդած տարիներին Հայաստանի իշխանություններին, ըստ եւթյան, հաջողվել էր հանրապետությունում հասարակական-քաղաքական վերափոխումների իրականացման նպատակով, համապատասխան օրենսդրական ակտերի ընդունմամբ ձևավորել որոշակի իրավական դաշտ: Ժողովրդավարական բնույթի օրենքներ էին ընդունվել հասարակական-քաղաքական կազմակերպությունների, լրատվամիջոցների, խոսքի ու խոդի ազատության մասին և այլն, որոնք առաջին տարիներին բավականին հաջողությամբ էին գործում հետևողականորեն ազատականացնելով Հայաստանի հասարակական կյանքը: Միաժամանակ, 1990-ականների կետից նորանկախ Հայաստանի Հանրապետությունում իշխանությունների կողմից սկսվեցին հանրապետությունում ժողովրդավարության մի շարք հիմնարար սկզբունքների սահմանափակումները: Իրավիճակը որոշակիորեն փոխվեց 1998 թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից հետո:

7. Հայաստանում անկախ պետականության հաստատման նպատակով իրականացված աննախադեպ ծավալի ծեռնարկումների ընթացքը նախադրյալներ ստեղծեց - նորանկախ Հայաստանի պետականաշխնության համար: Կայացավ երկրի օրենսդիր մարմինը: Աստիճանական քայլերով հանրապետությունում ձևավորվեց երկրի գործադիր իշխանությունը: Գործադիրի գերազույն գործառույթը, ՀՀ առաջին գումարնաման խորհրդարանի կողմից վերապահվեց հանրապետության նախագահին, որը համաժողովրդական ուղղակի քվեարկությամբ ընտրվել էր 1991 թ. հոկտեմբերին: Զնավորվեց նաև գործադիր իշխանությունը իրականացնող կառավարությունը, որի կառուցվածքը խնդրո առարկա գրեթե ողջ ժամանակահատվածում կապված գործնական խնդիրների հետ պարբերաբ ենթարկվում էր փոփոխությունների: Հասկանալի է, որ ինքնիշխան պետության կայացման գործում իր ներդրումն ուներ կառավարման համակարգի յուրաքանչյուր օլոգիք: Սակայն Ադրբեյջանի կողմից պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի Հանրապետության համար պետականության կայացման հենց նախնական փուլում առավել կարևոր էր ուժային կառուցների ու նախ և առաջ զինված ուժերի կայացումը: Որպես անկախ պետականության կարևորագույն կառուցներ այդ շրջանում կայացան նաև ՀՀ Ռատիկանությունն ու Ազգային անվտանգության ծառայությունը և այլն: Նորաստեղծ երկրի կայացման համար չափազանց կարևոր էր նաև պետականության օրենսդրական դաշտի ձևավորումը: 1995 թ. հուլիսի 5-ին համաժողովրդական հանրաքենով ընդունվեց նորանկախ Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի ողնաշարը հանդիսացող ՀՀ Սահմանադրությունը: Սահմանադրության հիմն վրա հանրապետությունում ձևավորված ժողովրդավարության հիմք հանդիսացող տեղական ինք-

Նակառավարման համակարգի կայացման գործում բացափկ դերակատարություն ունեցավ 1995 թ. իրականացված ՀՀ վարչատարածքային բաժանումներում: Սահմանադրության դրույթներին համապատասխան աստիճանաբար կայացավ նաև նորանկախ Հայաստանի դատական համակարգի ձևավորումը և այլն: Խնդրու առարկա ժամանակահատվածում հանրապետությունում սկսեց ձևավորվել նաև իշխանական համակարգի կարևորագույն բաղկացուցիչներից ևս մեկը՝ քաղաքացիական ծառայության համակարգը: “Պետական վորոտում, Հայաստանում անկախ պետականության հաստատմանը միտված կարևոր ձեռնարկումներից էին երկրի տոնացանկի, պետական բարձրագույն պարզեների սահմանումը, անկախ Հայաստանի քաղաքացիությունը հավաստող գիշակոր փաստարդի, հայկական անձնագրի ներդնումը և այլն:

8. Անկախ պետականության հաստատման գործնթացում կարևոր ուղենիշ էր ինքնիշխան Հայաստանի պաշտոնական ճանաչումն աշխարհի պետությունների գերակշռող մասի կողմից: Այդ երկրներից մի զգալի մասի հետ Հայաստանը հաստատեց դիվանագիտական կապեր: Անկախության հրակումից հետո Հայաստանի Հանրապետության իշխանությունների առջև, բնականարար, ծառացան բազմաբնույթ խնդիրներ: Յենց նման բարդ խնդիր էր ազգային արմատական շահերից բխող արտաքին քաղաքականություն նշանելու և վարելու անհրաժեշտությամբ պայմանավորված գործնթացների իրականացում: Չափազանց կարևոր էր այդ հարցում անցյալի պատմական փորձի վրա հենվելու հաճախանքը: Ընդհանրացնելով իհմնականում ՀՀ-ի կողմից կառավարվող Հայաստանի նորանկախ Հանրապետության առաջին տարիների միջազգային դիվանագիտական գործնթացները՝ դժվար է չխանգել այն հետևողական փորձը, որ ՀՀ իշխանությունները հաճախ անտեսում էին պատմական փորձը, տուրք տալիս, հիմնականում, դրսից ներարկվող կարծեցյալ իրատեսական զաղափարներին: Տարածաշրջանային իրադարձությունները հարկադրեցին ՀՀ իշխանություններին արմատապես վերանայել իրենց արտաքին քաղաքական դիրքորոշումները: Հայաստանի ներգրավիլմը միջազգային կառույցներում ավելի էր անրապնդում Հայաստանի Հանրապետության անկախությունը:

9. Անկախ պետականության հաստատման ուղղվ ընթացող Հայաստանի Հանրապետության գործույնը արցախահայության ազատագրական պայքարին սատարող վճռորոշ գործոն էր: Նորանկախ ՀՀ-ն ինքը դեռևս գտնվելով տնտեսական չափազանց ծանր վիճակում, հասարակական կյանքի բոլոր ոլորտներում իրականացվող արմատական վերափոխումների շրջանում, ինչպես միջազգային բատերաբենում, այնպես էլ տնտեսական, ռազմական և այլ բնագավառներում չափազանց մեծ աջակցություն էր ցուցաբերում Արցախին: Փաստորեն Լեռնային Ղարաբաղին սատարելով հենց Հայաստանի նորանկախ Հանրապետության ինքնիշխանության կարևորագույն դրսարումներից էր:

10. Նվազելով իր անկախությունը հայ ժողովուրդը պատմական հնարավորություն ստացավ պետականութեն արծարթելու իր ինքնությանը վերաբերող բազմաբնույթ իհմնականիրները՝ անկախ պետականության ողջ զորությամբ սատարելով դրան: Այդ առումով նորանկախ հայկական պետականության առջև ծառացած կարևորագույն խնդիրներից էր հայ ժողովորի ազգային հնքնության մի մասը կազմող հայոց ցեղասպանության հիմնահարցը: 1998 թ. իշխանափոխությունից հետո ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգում իր արժանի տեղը զբաղեցրեց հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման խնդիրը: Քննարկվող ժամանակահատվածում հանրապետության կյանքի բոլոր ոլորտներում գրական հայերենը հաստատվեց որպես միակ պաշտոնական լեզու: Ինքնիշխան Հայաստանը պետականութեն սահմանեց իր ազգի նվիրյալ զավակների խկական պաշտամունքը: Հավատարիմ ազգի համախմբման՝ հայ ժողովորի համար կենսական դարձած սկզբունքին հայաստանյան իշխանությունները որոշակի ձեռնարկումներ էին իրականացնում ամենատարեր բնագավառներում սփյուռքահայության կապերը հայրենիքի հետ ամրապնդելու ուղղությամբ:

Աւենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հետևյալ հրապարակումներում.

ա) Մենագրություն

1. Ազգային պետականության հաստատման գործնթացը Հայաստանում (1990-2001 թթ.), «Լուսաբաց» հրատակաչություն, Եր., 2013, 603 էջ:

բ) Հոդվածներ

1. Հայ-վրացական փոխհարաբերությունները Վրաստանում 1991-1992 թթ. իշխանական ճգնաժամի ընթացքում, Խ. Արովյանի անվ. ՀՊՄԴ-ի հիմնադրման 80-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 52-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2002 թ. նոյեմբերի 26-30) 1-ին պահ, Եր., 2003, էջ 271-275:

2. Հայաստանի անկախության հրչակագրի ընդունման պատմությունից, Խ. Արովյանի անվ. ՀՊՄԴ-ի հիմնադրման 85-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 53-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2007 թ. նոյեմբերի 7-9), 1 պահ, Եր., 2008, էջ 220-222:

3. Էներգետիկ ճգնաժամը Հայաստանում 1990-1993 թթ. Խ. Արովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված պրոֆեսորա-դասախոսական անձնակազմի, ասպիրանտների, հայցորդների և գիտաշխատողների 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու (2009 թ. նոյեմբերի 19-21), 1 պահ, Եր., 2010, էջ 290-292:

4. Հայ-ռուսական հարաբերությունները 1990-2001 թթ., «Էջմիածին» թիվ Ժ. հոկտեմբեր, Էջմիածին, 2011, էջ 26-40:

5. Հայաստանը Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում (1990-2001 թթ.), «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, դեկտեմբեր N 12 (194), Եր., 2011, էջ 28-30:

6. Ժողովրդավարական վերափոխումների ընթացքը Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքում (1990-2001 թթ.), հանձնելինակ Լ. Սիմոնյան, «Բանքեր Երևանի Հանձնարանի», թիվ 138.6, Եր., 2012, էջ 60-73:

7. Արտաքին առնչությունների ուղղով Հայաստանի առաջին քայլերը անկախացմանը նախորդած շրջանում, «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, մայիս, N 5 (1991), Եր., 2012, էջ 4-8:

8. ՀՀ ԶՈՒ-ի սետորման իրավական ապահովման հարցի շուրջ, «Հայկական բանակ» ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվ. ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի ռազմագիտական հանդես, թիվ 4 (74), Եր., 2012, էջ 111-117:

9. Հայաստանում ազատական տնտեսության ձևավորման ուղղված նախնական ձեռնարկումները, «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, հունիս, N6 (200), Եր., 2012, էջ 1-6:

10. Նորանկախ Հայաստանի Հանրապետության ճանաչման ընթացքը, «Էջմիածին» թիվ Գ. մարտ, Էջմիածին, 2012, էջ 58-67:

11. Վերափոխումները Հայաստանում ազգաբնակչության սոցիալական կացության հետ անմիջականորեն առնչվող ոլորտներում (1990-2001 թթ.), «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1 (4), Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ, Եր., 2012, էջ 25-39:

12. Հայ ժողովրդի հոգևոր վերածնունդը անկախ պետականության հաստատման ընթացքում (1990-2001 թթ.) «Օրենք և իրականություն» Միջազգային իրավաբանական գիտական հանդես, հուլիս-օգոստոս, N7-8 (201-202), Եր., 2012, էջ 14-16:

13. ՀՀ Սահմանադրության ընդունումը որպես անկախ պետականության հիմնավորման կարևորագույն գործն, «Ակունք» գիտական հոդվածների ժողովածու, թիվ

2(5), Երևանի պետական համալսարանի իջևանի մասնաճյուղ, Եր., 2012, էջ 25-30:

14. Հայ-իրանական միջաբետական հարաբերությունների կայացումն ու զարգացումը (1990-2001 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2-3 (634-635), մայիս-օգոստոս, սեպտեմբեր-դեկտեմբեր, Եր., 2012, էջ 68-78:

15. Տնտեսական վերափոխումների տցիալական հետևանքները Հայաստանում (1990-2001 թթ.), «Էջմիածին» թիվ Գ. մարտ, Էջմիածին, 2013, էջ 113-126:

16. Ռուսական-արմենական համագործակցության առաջնային գործությունները Հայաստանում (1990-2001 թթ.), «Մասնակի համագործակցությունները Հայաստանում» մասին պատմություն, Երևան, 2013, էջ 34-40.

17. Նորանկախ Հայաստանի միջաբետական կապերի բնույթը Արևմտյան Եվրոպա-յի և աշխարհի մի շարք այլ երկրների հետ (1990-2001 թթ.), «Պատմություն և մշակույթ». Հայագիտական համդես (գիտական հոդվածների ժողովածու), թիվ Ա., ԵՊՀ պատմության ֆակուլտետ, Եր., 2013, էջ 70-80:

18. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործնթացը անկախ պետականության հաստատման ընթացքում (1990-2001 թթ.) (պարսկերեն), «Պայման» պատմանշակութային համդես թիվ 63, ԻԻԿ, Թեհրան, 2013, էջ 132-140:

19. Հայաստանի անկախացման հանրաքվեի պատմությունից, ժողովածու, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի, Նոր ուսուցիչ նոր դպրոցի համար, Մանկավարժական կրթության բարեփոխման հեռանկարներ և պրակտիկա (2012 թ. դեկտեմբերի 14), II պրակ, Եր., 2014, էջ 409-412:

20. Միջաբետական հարաբերությունների բնույթը նորանկախ Հայաստանի և Թուրքիայի միջև (1990-2001 թթ.), Արցախի պետական համալսարան, Հայագիտական ուսումնասիրություններ (հոդվածների ժողովածու) 4/2013, Ստեփանակերտ, 2014, էջ 117-136:

ПОГОСЯН ЭДУАРД ВАНИКОВИЧ

ПРОЦЕСС УТВЕРЖДЕНИЯ НЕЗАВИСИМОГО ГОСУДАРСТВА В АРМЕНИИ (1990-2001 гг.)

Диссертация на соискание ученой степени доктора исторических наук по специальности 07.00.01 «История Армении».

Защита состоится 17-ого июня, 2014 г. в 14⁰⁰ на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте истории Национальной академии наук РА (0019, г. Ереван, проспект Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Спустя 70 лет после падения первой Армянской Республики, в истории свободолюбивого армянского народа снова появилась возможность создать свое национальное независимое государство.

Долговечным памятником, созданным в этот период в результате политической борьбы стала Декларация о независимости, принятая Парламентом Армении в августе 1990 года, которая определила процесс установления независимого государства как осуществление взаимосвязанных коренных действий в общественной, политической и социально-экономических аспектах.

Декларация стала уникальным документом, определившим дальнейший путь провозглашения независимости армянского народа.

Становление независимости Армении представляло собой эволюционный процесс, когда республика ступенчатым развитием суверенности, 21 сентября 1991 г. в ходе референдума достигла политической независимости.

Решающую роль в событиях, происходящих как в Армении, так и во всем Советском Союзе сыграло подписание 8 декабря 1991 года руководителями России, Белоруссии и Украины документа о распуске Советского Союза, без которого было бы крайне трудно в обсуждаемый период достичь политической независимости как союзным республикам, так и Армении.

В декабре 1991 года независимая республика Армения стала членом Содружества Независимых Государств.

В Армении начался переходный период, который предполагал период, в процессе которого в Республике должны были осуществляться формирование демократического общественного строя с рыночной экономикой, реформы, направленные на становление независимой государственности в Армении.

Армения, двигающаяся по пути становления независимой государственности была вынуждена осуществлять свои первые шаги, находясь в экономически крайне сложной ситуации. Создавшаяся безвыходная ситуация имела свои как объективные, так и субъективные причины.

Следствием раз渲а индустриальной экономики государства, стало усиление эффективности блокады Армении со стороны Азербайджана и осуществление террористических актов, входящих в Армению энергоносителей.

С самого начала периода политической независимости Армени, у общественности определилась уверенность в том, что становление полноправной суверенной, национальной государственной власти было возможно исключительно установлением в стране рыночных отношений.

С этой целью приватизация государственных активов, принимая как уже состоявшийся исторический факт со всеми своими ошибками и недостатками, с точки зрения поставлен-

ной цели, решила важнейшие задачи перехода к рыночному общественному строю. В прошлом исключительно государству принадлежало право приватизации средств производства.

Приватизация стала необходимым составляющим процесса становления независимой государственности. В рамках экономических инициатив были предприняты определенные шаги в формировании социальной системы, освободились цены, ввели национальную валюту и так далее. Многочисленные ошибки предпринятых решений привели к обострению финансового положения населения.

В рамках процесса становления независимой государственности в республике были принытия решительные меры либерализации общественно-политической жизни.

С середины 1990-ых годов со стороны властей в Республике Армения начались демократические преобразования ряда основных положений Конституции. Ситуация относительно изменилась в 1998 году, сменой власти в Армении.

Осуществляемое государственное строительство в Армении, естественно, являлось важнейшим направлением в становлении независимой государственности. Образование органов самоуправления на государственном уровне в Армении фактически началось с состоявшихся парламентских выборов в 1990 году. Каждый вновь образованный парламент знаменовал собой качественно новый уровень воспроизводства государства.

Президентские выборы 1991 года стали основой полупрезидентской системы правления.

Была создана армянская армия, принятая конституция РА, ставшая стержнем правового поля, образовалась система местного самоуправления и т.д.

В процессе становления независимой государственности важным показателем было признание независимости РА подавляющим большинством стран мира, с которыми были установлены дипломатические отношения. Армения стала членом международных организаций и активно сотрудничала с ними, что являлось показателем полноправного субъекта в международных отношениях и одновременно еще больше укрепляла независимость РА.

Еще более сложной проблемой было осуществление действий, обусловленных необходимостью разработки и ведения внешней политики с соседними странами, исходя из национальных интересов страны. В этом вопросе важно было обратиться к историческому опыту прошлого. Ход событий доказал опасность внешней политики для воюющей Армении, практически окруженной со всех сторон врагами.

Армения, двигающаяся по пути установления суверенной государственности, осуществляла поддержку как на международной арене, так и в экономическом, военном и других областях в освободительной борьбе Арцаха. Поддержка Нагорного Карабаха стала важным проявлением самостоятельности для недавно ставшей суверенной Республики Армения.

Независимость еще более усилило национальное самосознание, придав новое качество национальной борьбе за свободу.

После обретения независимости весь армянский народ получил исключительную возможность развивать на государственном уровне разнообразные вопросы, касающиеся самобытности, способствуя этому всей мощью государства. На повестке дня внешней политики РА достойное место было выделено вопросу международного признания Геноцида армян. Единственным официальным языком суверенного государства стал армянский язык.

Суверенная Армения восстановила поклонение национальным героям. Жизненно необходимым стал принцип объединения армянского народа. Правительство Армении проводило различные мероприятия для укрепления связи диаспоры с Родиной.

POGHOSYAN EDUARD VANIK

THE INDEPENDENCE PROCESS IN ARMENIA (1990-2001YEARS)

**Dissertation for the degree of the Doctor of Sciences (History) on the specialization of
"History of Armenia" 07.00.01**

**The defense of the dissertation will be held on the 17th of June, 2014, 14⁰⁰ at the session of
the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of
the National Academy of Sciences of RA
(0019, Yerevan, Marshal Bagramyan Ave. 24/4)**

SUMMARY

After the degradation the first Republic of Armenia after 70 years the History again gave chance to armenian people to create their national and Independent republic. As a result of a political strangle one of the stable monuments is the declaration of independent Armenia which was established by parliament on 1999 august, which named this process as a unit of correlated socal-political and socal-econimic actions of public. Declaration became an unique coherent, which will lead the furter steps of armenian people. The process of Independence of Armenia was an evolutional process, when autonomical republic become an Independent one by a meering on 21st of september 1991. In Armenia as well in the whlie Soviet Union, the most important rule on political action has the signature og a document on liquidation of the Soviet Union on 1991 decembre 8 by Russia, Bellarus and Ykrain, without the liquidation it would have been very difficult for Armenia and ather Union countries to Independ their countries. On decembre 1991 Armenia become a part of.

In Armenia a changing parrod has started, which brings changes Inside the republic, its economy and changes which caesed to declaration of an independent country. Armenia had to do its first steps being in a hard economical position. The fact has its abjective and subjective reasons as will. The fact of Armenian low economy mainly weare depending on the liquidation of the Soviet Union. On the wonsening of economy of newly independent Armenian republic had a great infuence being a disaster zone, and also the war of Artsakh and the fact of being blocked. But the man influence on the economy of Armenia had the mistakes and gaps, which were result of political manipalating. Worsening of Armenian economy once industrial but then low economy gave an opportunity to Azerbaijan to block the country and also close the energyertening the country. In the beginning of independeing the contry people mainly had understod that for reaching to a national complete independence, they need a market relationship.

For it they started to privatize the governmental property, accepting it asa a historical event, with its mistakes and gaps, bat it had a reason of solving one important problem of adoptry the marked relationship. That is privatizing the manufacturing which before were purely governmental. Privitaizing become the main step of independence. Inside the reublic some changes were made in the social field and money (DRAM)was invested. Themistakes of these all changes brought peope to worse financial position. In the republic in the process of independeing ditical actions were done for social – political independence as well.

In the middle of 1990s inside the newly independent Armenia politics and government started to limit some democratic principles. Condition was partly changed on 1998, as a result of changes in government. On 1990 parliamentary elections brought to rebuilding a republic in a global way in Armenia. Each new formed parliament was none as a autocratic power, as a new level. Step by step an executive government formed. After presidential elections October on 1991 a new semipresidential system was formed. Army was gathered, the basis of law system the constitution a local self-government were formed system and so on.

In the process of independence of Armenia an important rule has recognizing the republic by other republics in the world, with the most part of them diplomatic relationship was torned. Armenia became a member of international organizations and cooperated with them, which gave Armenia an opportunity to act as a main member and also to strengthen its independence. It was a difficult task to form relationship with neighbour countries, which will be profitable for Armenia. The most important rule for this process had the former historical experience, which establishes relationship with neighbouring countries not with standing on their ideological restrictions. Further actions proved that international relationship were dangerous for the country which was surrounded by enemies. Being in the process of independence Armenia had an unchangeable rule in the struggle of Artsakh against Azerbaijan. Helping Artsakh was one of the important process a newly independent Armenia was passing by. Independence process gave people more self confidence to struggle against the enemy, giving a new quality to struggle.

After the independence armenians were given an opportunity to present themselves as a united nation, and to face all the difficulties. In the timetable of international relationships of Armenia a stable rule has the process of recognizing Armenian genocide. Armenian was accepted as a national language. Armenian government was doing all urgent things in all spheres to strengthen links between Armenians and so on.